ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 2

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ 1997

9(56)
Ֆ-31

ԱՌԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

5087

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԼՈՍ ԱՆԺԵԼԷՍ 1997

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ---------- էջ 1

3. ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-րդ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ---------- 7

4 ՕՍՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻՒ ԵՐԿԵՐՈՒՄ ---------- 34

5. 1915 թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆԸ ՅՂՈՒԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ---------- 48

6. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԵՐԸ ---------- 56

7. ՀԱՅՆ ՏԱՌԱՊԵԼՈՑ ---------- 66

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

8. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ՄԵԾ ԵՂԵՌՆԸ-- 1

9. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 80-րդ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ---------- 23

10. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ և ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐԸ ---------- 30

11. ՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՌՆԱՐ ԼԵՎԻՆԻՆ ,,ՈՉ ԹԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՆԱԳԱԼԹ, ԱՅԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ'' ---------- 53

12. ԲՈՆԱԳԱՂԹ ԹԷ՞ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ---------- 58

13. ԲԱՑ ՆԱՄԱԿ LE MONDE ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ---- 62

14. ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱՆԷՐ ԱՔԶԱՄԻՆ ---- 69
15. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ,,ԶԱՄԱՆ'' ԹԵՐԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻ ՄԱՍԻՆ ---------- 73
16. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՊՐՈՖ.ԵՐՈՒԱՆԴ ՍԱՐԳՍԵԱՆԻ ,,ԴԱՎԱԴԻՐ ԳՈՐԾԱՐՔ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ ---------- 76
17. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ՅԱՎՈՒԶ ԷՐԶԱՆԻ ,,ՀԱՅԵՐԸ ԴԻՄԱԿԱԶԵՐԾՎՈՒՄ ԵՆ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ---- 82
18. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՅԱՎՈՒԶ ԷՐԶԱՆԻ ,,ՀԱՅԵՐԸ ԵՎ ԻՐԱՆԸ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ---------- 89
19. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՑԱԳՈՐԾ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ---------- 94
20. ՆԱՄԱԿ ,,ՆՈՐ ՕՐ'' ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՅԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ ---------- 99
21. ԵՐԲ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ՕԹԹՕ ՈՒՈՒԼՖԵՐԸ----- 102
22. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ---------- 105
23. ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻՑ---------- 108
24. ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ---------- 112

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Գործ՝ Աւետիս Փափազեանի

Այս և միւս գործերը դրուաքանդակ են պղնձի վրա։

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ





ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱԼԻՆ





ՋՈՒԱՐԴՆՈՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՇԵՐԵՓԸ



ԶԵՅԹՈՒՆ
1 8 6 2

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԾԽԱՄՈՐԾԸ

Խ Ա Չ Ք Ա Ր

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ստորեւ բերուած հայկական հարցի ժամանակագրութիւնը սկսւում է 19-րդ դարի 70-ական թուականներից, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրա արծարծումը գոյութիւն է ունեցել աւելի վաղ, հանդիսանալով «Արեւելեան հարցի» բաղկացուցիչ մասը:

19-րդ դարի վերջին քառորդին եւ 20-րդ դարի սկզբին արեւմտահայութեան հետ առնչուող իրադարձութիւնների եւ ողբերգական դէպքերի շուրջ հայ եւ օտար լեզուներով լոյս են տեսել բազմաթիւ ուսումնասիրութիւններ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրութիւններ, ականատեսների վկայութիւններ, յուշագրութիւններ, որտեղ հաւաստի եւ վաւերագրական նիւթերի հիման վրայ լիովին պարզաբանուել են իրական եղելութիւնները:

Հայկական հարցը եւ Մեծ Եղեռնի փաստը այսօր էլ առաւել բուռն թափով շարունակւում է մնալ համաշխարհային պատմագրութեան, միջազգային հասարակայնութեան եւ առանձին պետութիւնների ուշադրութեան կենտրոնում: Այն իւրովի մեկնաբանութիւն է գտել նաեւ թուրքական պատմագրութեան եւ պետական գործիչների հակահայկական քաղաքականութեան շրջանակներում, ուր ամէն ջանք գործադրւում է քօղարկելու այդ ողբերգական դէպքերը, աղաւաղելու պատմական ճշմարտութիւնը եւ յատկապէս հերքելու Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները:

Դեռ վերջերս Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլէրը մի հարցազրոյցի ընթացքում յայտարարեց, որ «...հայերը ոչ մէկ ձեւով չեն ենթարկուել ցեղասպանութեան: Հետեւաբար, Թուրքիան կամ թուրքերը չեն կարող մեղադրուել մի բանում, որը տեղի չի ունեցել»:

Մինչդեռ, ամբողջ աշխարհին յայտնի է, թէ ինչպէս արիւնոտ սուլթան Ապտուլ Համիտը եւ յետագայում երիտթուրքերի կառավարութիւնը դաժան հալածանքների եւ կոտորածների միջոցով ձգտեցին լուծել հայկական հարցը Օսմանեան կայսրութիւնում, եւ ինչպէս իրենց ենթգ ու բարբարոսային քաղաքականութիւնը իրագործելու համար պատեհ առիթը հանդիսացաւ Առաջին Համաշխարհային Պատերազմը...:

Իրականութիւն է նաեւ, որ Պերլինի վեհաժողովից յետոյ երբ հայկական հարցը դարձաւ եւրոպական տէրութիւնների դիւանագիտական խարդախութիւնների շահարկման առարկայ, այն ծանրագոյն ողբերգական հետեւանքներ ունեցաւ թուրքական բռնապետութեան լծի տակ հեծող հայ ժողովրդի ճակատագրի համար: Ինչպէս ժողովրդական առածն է ասում՝ «յօնքը սարքելու տեղ, աչքը հանեցին»:

Բոլոր դէպքերում պայքարը շարունակւում է: Եւ հեռու չէ այն օրը, որ հայ ժողովրդի նկատմամբ կատարուած բարբարոսային ցեղասպանութիւնը դատապարտուի միջազգային չափանիշով եւ արդար հատուցում ստանայ նրա հողային պահանջատիրութիւնը:

Ստորեւ բերուած ժամանակագրութիւնը որոշակի գաղափար եւ պատկերացում է տալիս, եւ հանդիսանում է հայկական հարցի եւ Մեծ Եղեռնի շուրջ ծաւալուած դէպքերի եւ ժամանակի փաստագրական արձանագրութիւնը:

1876 Դեկտեմբեր

Կ. Պոլսում հրաւիրուեց եւրոպական մեծ տէրութիւնների դեսպանախորհուրդը Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ազգաբնակչութեան վիճակը բարելաւելու համար: Սակայն այն ձախողուեց «Սահմանադրութիւն» ազդարարող հրանօթների կեղծ համազարկի տակ:

1877 Ապրիլ 24

Սկսուեց ռուս-թուրքական պատերազմը պալքաններում եւ Պատմական Հայաստանի տարածքում, որն աւարտուեց Ռուսաստանի յաղթանակով:

1878 Մարտ 3

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրուեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որի 16-րդ յօդուածը վերաբերում էր Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ծրագրին:

Մարտ 8

Հայկական հարցը եւրոպական տէրութիւններին ներկայացնելու եւ այնուհետեւ Պերլինի վեհաժողովին մասնակցելու նպատակով Կ. Պոլսից մեկնեց հայ պատուիրակութիւնը Մ. Խրիմեանի գլխաւորութեամբ:

Յունիս 13- Յուլիս 13

Տեղի ունեցաւ Պերլինի վեհաժողովը: 61-րդ յօդուածը վերաբերում էր Օսմանեան կայսրութեան հայաբնակ վայրերում բարենորոգումներ անցկացնելու ծրագրին:

Օգոստոս

Վանում ստեղծուեց «Սեւ խաչ» գաղտնի կազմակերպութիւնը:

1879 Օգոստոս

Սուլթանական Թուրքիան սկսեց բացայայտօրէն գործադրել իր հայահալած քաղաքականութիւնը:

1880 Օգոստոս 30

Բարձրագոյն դրան հրամանով արգելուեց Հայաստան եւ հայրենասիրական անուանումների եւ նկարների օգտագործումը:

Սեպտեմբեր 7

Եւրոպական տէրութիւնները համատեղ յուշագիր ներկայացրին Թուրքիայի արտաքին գործերի նախարարութիւն։ Մատնանշելով հայաբնակ վայրերում շարունակուող կեղեքումները, պահանջւում էր կեանքի կոչել բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը։

Արեւմտահայերին Օսմանեան ծանր լծից ազատագրելու նպատակով սկսուեց հայ ֆիդայական (հայդուկային) խմբերի կազմաւորումը, որն աւելի աշխուժացաւ 1894-96 թթ. կոտորածների ընթացքում եւ յետագայում։

1881 Մայիս

Կարինում ստեղծուեց «Պաշտպան Հայրենեաց» գաղտնի կազմակերպութիւնը, ինչպէս նաեւ «Զինակիր» խումբը։

1884 Յունիս

Թուրքական հարկային կեղեքումների դէմ ապստամբութիւն բռնկուեց Զէյթունում։

1885

Վանում ստեղծուեց առաջին հայկական ազգային քաղաքական կուսակցութիւնը՝ «Արմենական կազմակերպութիւնը»։

1887

Ժընեւում կազմակերպուեց Հնչակեան կուսակցութիւնը։

1889 Մայիս 21

Ստեղծուեց «Իթթիհատ վէ Թերաքքի» («Միութիւն եւ առաջադիմութիւն») նախնական անուանումը՝ «Օսմանեան Միութեան Կազմակերպութիւն» Թուրքական քաղաքական կուսակցութիւնը, որը Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում իրագործեց հայերի ցեղասպանութիւնը։

1890

Թիֆլիսում կազմակերպուեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կուսակցութիւնը։

Յունիս 20

Տեղի ունեցաւ ընդհարում Թուրքական զօրքի եւ Կարինի անզէն հայ բնակչութեան միջեւ։

Յուլիս 19

Կ. Պոլսում Հնչակեան Կուսակցութիւնը կազմակերպեց «Գում-Գափու»-ի ցոյցը։

1891

Սուլթան Ապտուլ Համիտը հայերի ազգային ազատագրական պայքարը ճնշելու համար քիւրտ ցեղախմբերից կազմակերպեց «Համիտիէ» անկանոն զօրագնդերը։

1894 Օգոստոս 1

Սկսուեց Սասունի հերոսական ինքնապաշտպանութիւնը։ Տեղի ունեցան կոտորածներ թուրքական կանոնաւոր բանակի եւ «Համիտիէ» զօրագնդերի կողմից։

1895 Յունուար 23

Մեծ տէրութիւնների Կ. Պոլսի դեսպանների պահանջով Սասուն ժամանեց թուրքական կառավարական քննիչ յանձնաժողովը հայերի կոտորածների յանցագործներին բացայայտելու համար։

Փետրուար 8

Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Մատթէոս Իզմիրլեանը Թուրքիայի արդարադատութեան նախարար Ռըզա փաշային ուղղուած ուղերձում (թաքրիր) մանրամասն տեղեկացնում է հայաբնակ վայրերում հայերի հանդէպ կատարուող հակաօրինական արարքների, կեղեքումների եւ սպանութիւնների մասին։

Մայիս 11

Կ. Պոլսի՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դեսպանները հայկական բարենորոգումներին վերաբերող նախագիծը ներկայացրին բարձրագոյն դուռ։

Սեպտեմբեր 30

«Մայիսեան բարենորոգումների ծրագիրը» կեանքի կոչելու պահանջով հնչակեան կուսակցութիւնը բողոքի ցոյց կազմակերպեց Կ. Պոլսում (Պապը Ալիի ցոյցը)։

Հոկտեմբեր 5-Նոյեմբեր 1

Արեւմտահայերի զանգուածային կոտորածներ Կ. Պոլսում եւ հայաբնակ վայրերում։

Հոկտեմբեր 12

Ապստամբութիւն Զէյթունում։

1896 Յունիս 3

Սկսուեց Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը։

Օգոստոս 14

Հայկական բարենորոգումներին եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը բեւեռելու համար Դաշնակցութիւն Կուսակցութիւնը կազմակերպեց Կ. Պոլսի «Պանք Օթոմանի» գրաւումը։

Օգոստոս

Հայերի զանգուածային կոտորածներ Կ. Պոլսում։

1897 Յուլիս 25

Դաշնակցութիւն Կուսակցութիւնը կազմակերպեց Խանասորի արշաւանքը։

1901 Նոյեմբեր 1-27

Տեղի ունեցաւ ազգային ազատագրական շարժման հերոս Անդրանիկի ջոկատի եւ թուրքական զօրամասերի կռիւը Ս. Առաքելոց վանքում։

1902 Յուլիս 4-7

Պրիւքսէլում տեղի ունեցաւ միջազգային քոնֆերանս հայկական հարցի արդարացի լուծման համար։

1904 Փետրուար-Մայիս

Տեղի ունեցաւ Սասունի հերոսական ինքնապաշտպանութիւնը։

1905 Մայիս

Դրաստամատ Կանաեանը /ԴՐՕ/ ահաբեկեց 1905 թ. Փետրուարին Պաքուի հայերի կոտորածի կազմակերպիչ՝ Պաքուի զինուորական նահանգապետ Նակաշիձէին։

Յուլիս 21

Դաշնակցութիւն Կուսակցութիւնը մահափորձ նախաձեռնեց Սուլթան Ապտուլ Համիտի դէմ։

1906

Հայ հասարակական-քաղաքական գործիչ Պօղոս Նուպար փաշայի նախաձեռնութեամբ Գահիրէում հիմնադրուեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը։

1908 Յունիս 24

Երիտթուրքերի յեղաշրջումը Օսմանեան կայսրութիւնում։ Վերականգնուեց 1876 թ. «Սահմանադրութիւնը»։

1909 Մարտ 31-Ապրիլ 13

Ատանայի եւ շրջակայքի հայութեան կոտորածը։

1910

Ստեղծուեց «Հայ Օգնութեան Միութիւնը» դաշնակցական գործիչ Ակնունու (Խ. Մալումեան) նախաձեռնութեամբ։ (Նախնական անուանումները՝ «Դաշնակցութեան Կարմիր Խաչ», «Հայկական Կարմիր Խաչ»։

1911 Փետրուար 14

Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Յովհաննէս Արշարունին Թուրքիայի Արդարադատութեան նախարարին ուղղուած ուղերձում (թաքրիր) տեղեկացնում է հայաբնակ գաւառներում տեղի ունեցող թուրք պաշտօնատար անձանց անօրինական արարքների, հայերի սպանութեան եւ ունեցուածքի յափշտակման մասին։

1912 Հոկտեմբեր 9

Սկսուեց Պալքանեան պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկը իր ջոկատով։

Նոյեմբեր 10

Կաթողիկոս Գէորգ 5-րդը յատուկ կոնդակով ստեղծեց «Ազգային պատուիրակութիւն» յանձնախումբը Պօղոս-Նուպար փաշայի գլխաւորութեամբ։

1913 Յուլիս 3-24

Քննարկուեց Կ. Պոլսի ռուսական դեսպանատան խորհրդական Ա. Մանտելշտամի խմբա-

գրութեամբ կազմուած Արեւմտեան Հայաստանի բարենորոգումներին վերաբերող նախագիծը։

1914 Փետրուար 8

Մեծ տէրութիւնների եւ Թուրքիայի կողմից ստորագրուեց հայկական բարենորոգումների ծրագիր։ Որպէս կառավարիչներ Կ. Պոլիս ժամանեցին՝ հոլանտացի Վէսթենենկը եւ նորվեկիացի Հոֆֆը։ Առաջին Համաշխարհային Պատերազմի ծագումով ծրագիրը մնաց թղթի վրայ։

Յուլիս 23

Ռուսական բանակի շարքերում Արեւմտեան Հայաստանը ազատագրելու նպատակով նախաձեռնում է կազմակերպել հայ կամաւորական ջոկատներ։

Օգոստոս 1

Սկսուեց Առաջին Համաշխարհային Պատերազմը։

Հոկտեմբեր 20

Ռուսաստանը պատերազմ յայտարարեց Թուրքիային։

1915 սկիզբներին

Արեւմտահայերին տեղահանելու եւ բնաջնջելու նպատակով տեղի ունեցաւ «Իթթիհատ վէ Թերաքքի» («Միութիւն եւ առաջադիմութիւն») կուսակցութեան կեդրոնական կոմիտէի գաղտնի նիստը։

Ապրիլ 24 լոյս 25-ի գիշերը

Հայոց Մեծ Եղեռնի սկիզբը։ Կ. Պոլսում 800 հայ մտաւորականների ձերբակալումը, աքսորն ու սպանութիւնը։

Ապրիլ 26

Կ. Պոլսի Հայոց Պատրիարք՝ Զաւէն Արքեպիսկոպոսի կողմից յաջորդաբար Մեծ Վէզիր Սայիտ փաշային է ներկայացւում երկու ուղերձներ (թաքրիր), որտեղ, նկատի ունենալով արեւմտահայութեան օրհասական ծանր կացութիւնը, նախազգուշացւում է միջոցներ ձեռնարկել կանխելու սպասուող ահաւոր աղէտը։

Հայերին տեղահանելու եւ կոտորելու նպատակով գաղտնապէս ստեղծուեց «Թաշքիլաթ-ը մահսուսէն» (յատուկ կազմակերպութիւն)։ Այն գլխաւորում էր «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամ դոկտ. Պեհաէտտին Շաքիրը։

Հայերի տեղահանութեան եւ կոտորածի գաղտնի հրամանը չկատարելու համար պաշտօնազրկուեցին մի շարք թուրք գործիչներ. Անքարայի վալի (նահանգապետ) Մազհար պէյը. Քաստամունիի վալի Ռեշիտ փաշան. Եոզղաթի նախկին մութասարրիֆ՝ (Սանջակի կառավարիչ) Զեմալ պէյը. Բալուի մութասարրիֆի տեղակալ՝ Ալի Իլմի պէյը. Քէօթահիայի մութասարրիֆ՝ Ֆայիք Ալի պէյը. Գոնիայի եւ այնուհետեւ Հալէպի վալի՝ Զելալ պէյը. Տիարպէքիրի վալիի երկու տեղակալները դատապարտուեցին մահուան եւ այլն։

Ապրիլ եւ յետագայ ամիսներին

Ինքնապաշտպանութեան կռիւներ Վանում, Շապին-Գարահիսարում, Զէյթունում, Մուսա Լեռում, Ուրֆայում, Հաճընում, Եոզղաթում, Սասունում, Մուշում, Շատախում։

Մայիս 8

Արամ Մանուկեանը նշանակւում է Վանի նահանգապետ։

Մայիս 21

Թուրքական կառավարութիւնը հրապարակեց օրէնք (3 կէտերից) ռազմական գօտուց հայերի տեղահանութեան եւ պատժամիջոցների մասին։

Մայիս 24

Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները համատեղ յուշագիր ներկայացրին երիտթուրքերի կառավարութեան անյապաղ դադարեցնելու հայերի կոտորածները Օսմանեան կայսրութիւնում։

Մայիս 26

Թուրքական կառավարութիւնը որոշում ընդունեց հայերի լքեալ գոյքերի մասին, բայց այն մնաց թղթի վրայ։

Մայիս 31

Սուլթան Մեհմետ Ռեշատի հրամանագրով Զէյթունը վերանուանուեց Սուլէյմանլը։

Յունիս 15

Կ. Պոլսի «Սուլթան Պայազէտ»ի հրապարակում կախաղան բարձրացուեցին Հնչակեան կուսակցութեան 21 ղեկավար գործիչներ։

1916

Անողոքաբար շարունակուեց հայերի տեղահանութիւնն ու բնաջնջումը դէպի Սիրիայի անապատները։ Ամբողջ Օսմանեան կայսրութիւնում զոհ գնացին աւելի քան մէկուկէս միլիոն անմեղ հայեր։ Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը։

Մարտ 6

Տեղի ունեցաւ Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ «Սայքս-Փիքո»յի գաղտնի համաձայնագիրը՝ Օսմանեան կայսրութեան տարածքը բաժնելու մասին, որտեղ անտեսուեց Արեւմտեան Հայաստանն ու հայկական հարցը։

Հոկտեմբեր 27

Լոնտոնում համաձայնութիւն կնքուեց Հայկական Լէգէոն (զօրագունդ) ստեղծելու մասին։

1917 Նոյեմբեր 7

Ռուսաստանում տեղի ունեցաւ Հոկտեմբերեան սոցիալիստական յեղափոխութիւնը։

Դեկտեմբեր 29

Խորհրդային Ռուսաստանի ժողկոմսովետը ընդունեց «Թուրքահայաստանի մասին դեկրետը» (վերականգնելու հայ ժողովրդի իրաւունքները Արեւմտեան Հայաստանում)։ Մնաց թղթի վրայ։

1918 Փետրուար

Սկսուեց Թուրքական բանակի լայնածաւալ յարձակումն ու առաջխաղացումը Հայաստանի տարածքի վրայ։

Մարտ 3

Ստորագրուեց Պրեսթ-Լիդովսկի հաշտութեան պայմանագիրը, ըստ որի Ռուսաստանը Թուրքիային էր զիջում Արեւելեան Հայաստանի որոշ մասը եւ Արեւմտեան Հայաստանի ամբողջ տարածքը։

Մայիս 21-28

Տեղի ունեցաւ Սարդարապատի հերոսական ճակատամարտը։

Մայիս 23-29

Տեղի ունեցան Պաշ-Ապարանի, ինչպէս նաեւ Ղարաքիլիսէի (այժմ Վանաձոր) հերոսամարտերը։

Մայիս 28

Ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան հռչակումը։ Վարչապետ ընտրուեց Յովհաննէս Քաջազնունին։

Յունիս 4

Ստորագրուեց Պաթումի պայմանագիրը Օսմանեան կայսրութեան եւ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան միջեւ։ Այն թուրքական կառավարութեան կողմից թելադրուած ծանր պայմանագիր էր, որը կարճ ժամանակից յետոյ Հայաստանի Հանրապետութիւնը չեղեալ համարեց։

Հոկտեմբեր 27

Հայկական Լէգէոնը գրաւեց Արարայի լեռնագագաթը։

Հոկտեմբեր 30

Ստորագրուեց Մուտրոսի զինադադարի պայմանագիրը։ Թուրքիայի պարտութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմում։

Նոյեմբեր 4

Կ. Պոլսում Ահմետ Իզզեթ փաշայի դահլիճը որոշում կայացրեց Օսմանեան կայսրութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ ներքաշելու եւ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու յանցանքով դատական պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին։

Այս թուականից սկսած մինչեւ 1923 թուականը թուրքերի կողմից զանգուածային նոր կոտորածներ տեղի ունեցան Կիլիկիայում, Արեւելեան Հայաստանում եւ Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում։

1919 Մարտ 8

Հրապարակուեց սուլթան Մեհմէտ 6-րդ Վահիտեդդինի կայսերական հրովարտակը՝ երիտթուրքական կառավարութեան ղեկավարներին եւ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխներին դատելու մասին։

Ապրիլ 8

Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանը հրապարակեց Եոզղաթի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի յանցագործներին վերաբերող դատավճիռը։

Ապրիլ 11

Եոզղաթի հայութեանը կոտորելու ծանր յանցանքով Կ. Պոլսի «Սուլթան Պայազէտ»ի հրապարակում կախաղան բարձրացուեց Եոզղաթի մութասարրիֆի տեղակալ՝ Քեմալ պէյը։

Ապրիլ 28

Կ. Պոլսում սկսուեց երիտթուրքական կառավարութեան ղեկավարների եւ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամների դատավարութիւնը։

Մայիս 2

Հրապարակուեց Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանի Բիւյիւք Տերէի (Ստամպուլի արուարձաններից) տեղահանութեան յանցագործներին վերաբերող դատավճիռը։

Մայիս 22

Հրապարակուեց Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանի Տրապիզոնի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի յանցագործներին վերաբերող դատավճիռը։

Մայիս

«Մերձաւոր Արեւելքին Ամերիկեան Օգնութեան Կոմիտէն» օգնութիւն է կազմակերպում հայ որբերին եւ չքաւոր ընտանիքներին։

Յունիս 21

Կ. Պոլսում սկսուեց «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների եւ այլ պաշտօնատար անձանց դատաքննութեան նիստերը։

Յուլիս 5

Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանի դատավճռով մահուան դատապարտուեցին Թալեաթը, Ճեմալը, Էնվէրը, Դոկտ. Նազիմը։ Այլ դատավճիռներով մահուան դատապարտուեցին նաեւ Դոկտ. Պէհաէդդին Շաքիրը, Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին, կուսակցութեան Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ պէյը։

1920 Ցունուար 8

Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանը հրապարակեց «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարների հայերի տեղահանութեան եւ կոտորածին վերաբերող դատավճիռը։

Յունուար 13

Կ. Պոլսի Ռազմական Արտակարգ Ատեանը հրապարակեց Խարբերդի հայերի տեղահանութեան եւ կոտորածի յանցագործներին վերաբերող դատավճիռը։

Ապրիլ

Սկսուեց Այնթապի հայութեան հերոսական ինքնապաշտպանական կռիւները թուրք բռնակալների դէմ, որը շարունակուեց մինչեւ փետրուար - 1921 թ.։

Ապրիլ 19

Սան-Ռէմոյում (Իտալիա) տեղի ունեցած Անթանթայի պետութիւնների խորհրդաժողովում առաջարկութիւն եղաւ ԱՄՆ-ի նախագահ Վ. Ուիլսընին ստանձնելու Հայաստանի մանտատը (հոգատարութիւնը)։

Օգոստոս 10

Ստորագրուեց Սեւրի (Փարիզի մօտակայքում) հաշտութեան պայմանագիրը Աւետիս Ահարոնեանի մասնակցութեամբ։ 88-93 յօդուածներով Թուրքիան ճանաչում էր ազատ եւ անկախ Հայաստանի պետութիւնը։ ԱՄՆ-ի նախագահ Վ. Ուիլսընի նախաձեռնութեամբ ստեղծուելու էր մօտ 150 հազար քառ. քմ. տարածքով Հայաստան, մինչեւ Սեւ Ծովի ափերը։ Այն չվաւերացուեց եւ չիրագործուեց կեանքում։

Յունիս 1

ԱՄՆ-ի Ծերակոյտը մերժեց նախագահ Վ. Ուիլսընի Հայաստանի վրայ մանտաթ հաստատելու առաջարկը։

Սեպտեմբեր 21

Սկսուեց հայ-թուրքական պատերազմը։

Դեկտեմբեր 1

Ատրպէյճանի յեղափոխական խորհուրդը յայտարարեց, որ ճանաչում է Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջեւանը որպէս Հայաստանի բաղկացուցիչ մասեր։

Դեկտեմբեր 2

Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումը։

Դեկտեմբեր 3

Ստորագրուեց Ալեքսանտրապոլի հաշտութեան պայմանագիրը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ։ Հայաստանը ունեցաւ տարածքային ծանր կորուստներ։

1921 Փետրուար 1

Լոնտոնում տեղի ունեցած խորհրդաժողովում Անգլիայի եւ Ֆրանսիայի կողմից օրակարգի հարց դարձաւ Թուրքիայում «Հայկական ազգային օճախներ» ստեղծելու գաղափարը։ (Յետագայում մնաց թղթի վրայ)։

Մարտ 15

Պերլինում Սողոմոն Թեհլիրեանը ահաբեկեց Թուրքիայի ներքին գործերի նախարար՝ Թալեաթին։

Մարտ 16

Մոսկուայում ստորագրուեց սովետո-թուրքական բարեկամութեան եւ եղբայրութեան պայմանագիրը։ Այն ուղղուած էր Սեւրի պայմանագրի դէմ։ Անտեսուեցին Հայաստանի շահերը, Թուրքիային զիջելով հայկական հողային տարածքներ. (Կարսի նահանգը, Սուրմալուի մարզը, Նախիջեւանի մարզը եւայլն)։

Յուլիս 5

Ռուսաստանի Խորհրդային Համայնավար Կուսակցութեան Կովկասեան բիւրոն Ստալինի նախաձեռնութեամբ որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի տարածքը Ատրպէյճանին յանձնելու մասին։

Հոկտեմբեր 1

Կ. Պոլսում ստեղծուեց Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը։

Հոկտեմբեր 13

Ստորագրուեց Կարսի պայմանագիրը մի կողմից քեմալական Թուրքիայի եւ Հայաստանի, Ատրպէյճանի, Վրաստանի խորհրդային հանրապետութիւնների միջեւ։ Տեղի ունեցան սահմանային ճշգումներ։ Կազմաւորուեց Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւնը Ատրպէյճանի գերիշխանութեան տակ։

Դեկտեմբեր 6

Հռոմում Արշաւիր Շիրակեանը ահաբեկեց Մեծ Վէզիր Սայիտ Հալիմ փաշային։

1922 Ապրիլ 17

Պերլինում Արամ Երկանեանը եւ Արշաւիր Շիրակեանը ահաբեկեցին «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի նախագահ՝ Պէհաէդդին Շաքիրին եւ Տրապիզոնի նախկին նահանգապետ՝ Ճեմալ Ազմիին։

Յուլիս 25

Թիֆլիսում Պետրոս Տէր Պողոսեանը եւ Աստաշէս Գէորգեանը ահաբեկեցին ծովային նախարար՝ Ճեմալ փաշային։

Սեպտեմբեր 9

Իզմիրում սկսուեց հայ եւ յոյն բնակչութեան կոտորածները քեմալական կանոնաւոր զօրքերի կողմից։

1923 Յուլիս 24

Ստորագրուեց Լոզանի հաշտութեան պայմանագիրը։ Այն փոխարինեց Սեւրի պայմանագրին մոռացութեան տալով հայկական հարցը։

1924 Յուլիս 12

Մեծ մարդասէր նորվեկիացի գիտնական Ֆ. Նանսէնի նախաձեռնութեամբ Ազգերի Լիկան որոշում կայացրեց «Նանսէնեան» անձնագիր տրամադրել կոտորածից փրկուած հայերին։

Ստեղծուեց Հայ Դատի յանձնախումբը։

1939 Օգոստոս

Ֆաշիստական զօրքերի (Օգոստոս 22) Լեհաստան ներխուժելու նախօրէին Ա. Հիթլերը յայտարարեց՝ «Ո՞վ ի վերջոյ, այսօր խօսում է հայերի ոչնչացման մասին։

1945 Նոյեմբեր 29

Կաթողիկոս Գէորգ 6-րդը դիմեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծն Բրիտանիոյ կառավարութիւններին խորհրդային Հայաստանին միացնելու Թուրքիայի տարածքում գտնուող Արեւմտեան Հայաստանի հողերը։

1947 Ապրիլ 30

Նիւ Եորքում տեղի ունեցաւ հայկական համաշխարհային վեհաժողով, ուր քննարկուեցին հայերի հողային պահանջատիրութիւնը եւ դէպի հայրենիք ներգաղթ կազմակերպելու հարցերը։

1948 Դեկտեմբեր 9

ՄԱԿ-ի գլխաւոր ժողովը որոշում ընդունեց ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու, եւ դրա համար պատիժներ սահմանելու, ինչպէս նաեւ այն մասին, որ ցեղասպանութիւնը վաղեմութեան ժամկէտ չունի։

1953 Մայիս 30

ԽՍՀՄ-ի կառավարութիւնը պաշտօնապէս հրաժարուեց Հայաստանին վերաբերող հողային պահանջատիրութիւնից։

1965 Ապրիլ 24

Աշխարհի մօտ 25 երկրներում նշուեց Մեծ Եղեռնի 50-ամեայ տարելիցը եւ յարգանքի տուրք մատուցուեց անմեղ զոհերի յիշատակին։

Ապրիլ 24-ին եւ յետագայ տարիներին Հայաստանում եւ աշխարհի հայաբնակ բոլոր վայրերում հիմնադրուեց եւ բացումը կատարուեց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի յիշատակին կառուցուած յուշարձանների։

3087

Յուլիս 15

Հելսինքիում կայացած խաղաղութեան կողմնակիցների համաշխարհային վեհաժողովը դատապարտեց Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած 1915-ի ցեղասպանութիւնը։

1967 Նոյեմբեր 28

Երեւանում Ծիծեռնակաբերդի բարձունքի վրայ բացուեց 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած յուշարձան կոթողը։

1970 սկզբներին

Ստեղծուեց «Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակը»։

1972

Ուաշինկթընում ստեղծուեց Ամերիկայի Հայկական Համագումարը՝ հայկական հարցի եւ Մեծ Եղեռնի հարցերի տեղեկատուութեան ու պաշտպանութեան կազմակերպութիւն։

1973 Յուլիս

ՄԱԿ-ի ռասիզմի ու ցեղասպանութեան կանխման յանձնաժողովը քննարկեց 1915-ի Հայոց Մեծ Եղեռնը։

1974 Մարտ 6

ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքների Յանձնաժողովը քննարկումների ընթացքում 1915-ի Մեծ Եղեռնը բնութագրեց, որպէս 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն։

1975 Ապրիլ 8

ԱՄՆ-ի Քոնկրեսի ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձեւում ճանաչուեց հայերի ցեղասպանութիւնը։

1984 Ապրիլ 13-16

Փարիզում «Ժողովուրդների Միջազգային Ատեանի» գումարած նիստերում դատապարտուեց հայերի ցեղասպանութիւնը եւ այն բնութագրուեց որպէս միջազգային չափանիշի յանցագործութիւն։

1985 Յուլիս-Դեկտեմբեր

ԱՄՆ-ի Քոնկրեսի Վերին Պալատ՝ Ծերակոյտում քննարկուեց հայերի ցեղասպանութեան հարցը։

Օգոստոս 27

ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքների Յանձնաժողովը քննարկեց Հայոց Մեծ Եղեռնի հարցը եւ ընդունեց դրական որոշում։

1987 Յունիս 18

Ֆրանսիայի Սթրազպուրկ քաղաքում Եւրոպական խորհրդարանի ընդունած որոշումի մէջ դատապարտուեց հայերի ցեղասպանութիւնը։

1988 Փետրուար 20

ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը որոշում ընդունեց դուրս գալ Ատրպէյճանի կազմից եւ միանալ Հայաստանին։

Սկսուեց Արցախի ազատագրութեան պայքարը։

Փետրուար 27-29

Ատրպէյճանի Սումգայիթ քաղաքում կազմակերպուեց հայերի ջարդ եւ տեղահանութիւն։

1989

Նոյեմբեր 22

Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը ընդունեց օրէնք. «Օսմանեան Թուրքիայում 1915-ի հայերի ցեղասպանութեան դատապարտման մասին»։

Դեկտեմբեր 1 (1989)

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին։

1988 Դեկտեմբեր 7

Մեծ աղէտ Հայաստանում։ Ահաւոր երկրաշարժը ցնցեց հայոց աշխարհը։

1990 Ապրիլ

Երեւանում տեղի ունեցաւ միջազգային գիտաժողով նուիրուած Մեծ Եղեռնի 75-ամեայ տարելիցին։

Աշխարհի տարբեր երկրների գիտնականները իրենց ելոյթներում դատապարտեցին հայերի ցեղասպանութիւնը։

1991 Սեպտեմբեր 2

Հռչակուեց Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւնը։

Սեպտեմբեր 21

Հռչակուեց Հայաստանի անկախ հանրապետութիւնը։

Հոկտեմբեր 16

Հայաստանի Հանրապետութեան նախագահ ընտրուեց Լեւոն Ցակոբի Տէր Պետրոսեանը։

1994 Ապրիլ

Աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում առանձին պետական գործիչներ եւ մտաւորականներ իրենց ելոյթներում, յարգանքի տուրք մատուցելով Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին, դատապարտեցին հայերի ցեղասպանութիւնը։

Ապրիլ 22

Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տուման, քննարկելով 1915-ի հայերի ցեղասպանութեան հարցը, իր յայտարարութեան մէջ դատապարտեց Օսմանեան կայսրութիւնում թուրքական կառավարութեան կողմից գործադրուած ցեղասպանութիւնը եւ իր կարեկցանքն յայտնեց հայ ժողովրդին։

Օգոստոս 18

Վախճանուեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հայաստանի Հանրապետութեան ազգային հերոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջինը։

Նոյեմբեր 18

Փարիզի Ֆրանսիական 17-րդ պատժական դատարանը պատմաբան Պեռնար Լուիսի դէմ յարուցուած դատավճռի կապակցութեամբ հաստատեց, որ 1915 թ. հայ ժողովուրդը մարդկութեան դէմ գործուած ոճիրի մը զոհն է դարձած։

1995 Փետրուար 10

Իր մահից 77 տարի յետոյ Ստամպուլի քաղաքապետարանի եւ կրօնական վարչութեան կողմից առաջին անգամ լինելով նշուեց սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ի մահուան տարեդարձը։ Նոյն օրերին լրացաւ նաեւ Սասունի, Օսմանեան կայսրութեան հայաբնակ վայրերի եւ Կ. Պոլսի հայութեան կոտորածի 100-ամեայ տարելիցը, որին զոհ գնացին 300,000 անմեղ հայեր։

Ապրիլ 4

Էջմիածնի Ազգային Եկեղեցական Ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեց Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ. Սարգիսեանը:

Ապրիլ 7-8

Լոս Անճելըսի Եու.Սի.Էլ.Էյ.-ի համալսարանի հայ ժողովրդի Արդի Պատմութեան ամպիոնի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հայերի ցեղասպանութեան 80-րդ տարելիցին նուիրուած միջազգային գիտաժողով:

Ապրիլ 14

Ռուսաստանի Դաշնութեան Պետական Դուման պաշտօնապէս դատապարտեց 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին եւ Ապրիլի 24-ը յայտարարեց որպէս հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր:

Ապրիլ 21-23

Երեւանում տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 80-ամեակին նուիրուած միջազգային համաժողով:

1995 Յունիս 8

Անթիլիասի Մայրավանքին մեջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Արամ Արք. Քեշիշեանը:

1996 Մարտ 1

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի և ԼՂՀ Խորհրդարանի միջև կնքուեց համագործակցութեան և փոխգործակցութեան համաձայնագիր:

1996 Ապրիլ 23

Գանատայի Խորհրդարանը, մէկուկէս միլիոն զոհ խլած 24 Ապրիլ 1915-ի հայկական ողբերգութեան 81 ամեակին առիթով և ի

յիշատակ մարդկութեան դէմ ոճիրներու՝ իւրաքանչիւր տարուան Ապրիլի 20-էն 27-ի շաբաթը հռչակէց ,,Մարդկութեան դէմ ոճիրի յիշատակումի շաբաթ'':

Ապրիլ 24

ԱՄՆ-ի Վիրճինիայի, Իլլինոյի և Նոր Գարոլայնայի նահանգները հայերի ցեղասպանութեան 81 ամեակի առթիվ, Ապրիլ 24-ը պաշտօնապէս հռչակեցին ,,Հայ նահատակներու Օր'':

Ապրիլ 25

Յունաստանի խորհրդարանը պաշտօնապէս ճանաչեց Հայոց Մեծ Եղեռնը, Ապրիլ 24-ը ընդունելով ցեղասպանութեան ենթարկուած հայերի յիշատակի օր:

Յունիս 5-6

ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տունը, ձայների մեծամասնութեամբ Բանաձև ընդունեց, կրճատել Թուրքիոյ տրուող տարեկան օժանդակութիւնը, մինչև որ Թուրքիա Ճանչնայ իր մեղսակցութիւնը հայերի ցեղասպանութեան մէջ և վերջ տա Հայաստանի շրջափակումին:

ՆՈՐ ՕՐ . ՇԱԲԱԹ , ԱՊՐԻԼ 22, 1995



ՍԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՍՈՒՐԸ

Գործ՝ Աւետիս Փափազեանի



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 80-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1995 թ. Ապրիլի 24-ին լրացաւ հայոց Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցը, որը պատշաճ մակարդակով նշուեց թէ հայրենիքում եւ թէ սփիւռքում, ինչպէս նաեւ աշխարհի մի շարք երկրներում։ Եղան միջազգային գիտաժողովներ, համաժողովրդական հաւաքներ, ցոյցեր եւ զանազան այլ ձեռնարկներ։ Հայ ժողովուրդը կրկին անգամ իր խորին յարգանքի տուրքը մատուցելով 1915-16 թթ. Մեծ Եղեռնի ընթացքում զոհուած մեր բիւրաւոր նահատակների յիշատակին, միասնաբար արտայայտեց իր անկոտրում կամքը, որպէսզի միջազգային ասպարէզում պաշտօնապէս ճանաչուի եւ դատապարտուի հայերի ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում ստանայ նրա հողային պահանջատիրութիւնը։

Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախօրէին կարեւորագոյն նուաճումներից մէկն էր Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տումայի (խորհրդարանի) ընդունած որոշումը հայերի ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին, որը ըստ արժանւոյն մեծ արձագանգ գտաւ ամբողջ աշխարհում։

Այսպէս, 1995 թ. Ապրիլի 14-ին Ռուսաստանի Տուման իր լիագումար նիստում քննարկելով 1915-1922 թթ. հայերի ցեղասպանութեան դատապարտումին վերաբերող բանաձեւը, պատգամաւորների լիակատար միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ յայտարարութիւնը։

«Հիմնուելով պատմական անժխտելի փաստերի վրայ, որոնք վկայում են Արեւմտեան Հայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի կոտորածի մասին, ինչպէս նաեւ, տուրք տալով Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան ընդունած հետեւեալ կոնվենցիաներին՝

- 1948 թուականի, Դեկտեմբերի 9-ի ցեղասպանութեան յանցագործութեան նախազգուշացման ու պատժման մասին։
- 1968 թուականի Նոյեմբերի 26-ի պատերազմի յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ոճրագործութիւնների ժամկէտների վաղաժամութեան չկիրարկման մասին։

Միաժամանակ, ձգտելով վերականգնել ռուսական պետութեան մարդասիրական աւանդոյթները։

Ընդգծելով, որ Ռուսաստանի նախաձեռնութեամբ, դեռեւս 1915 թուին եւրոպական խոշոր տէրութիւնները թրքական կայսրութեան գործողութիւնները հայ ժողովրդի նկատմամբ որակաւորել են որպէս «ոճրագործութիւն մարդկութեան նկատմամբ»։

Եւ նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը իր հերթին Ռուսաստանը խորտակելու նպատակներ է հետապնդել։

Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տուման՝ դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին։ Արտայայտում է իր խոր կարեկցանքը հայ ժողովրդին եւ Ապրիլ 24-ը դիտում է որպէս ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»։

Բնականաբար այս յայտարարութեան յաջորդեց նաեւ ԱՊՀ-ի միջ-խորհրդարանական համագումարի դատապարտումի խօսքը, որտեղ ասում էր, որ «ԱՊՀ-ի միջ-խորհրդարանական համագումարը կը փոխանցէ իր անկեղծ վշտակցութիւնը հայ ժողովրդին» եւ նշելով ՄԱԿ-ի «ցեղասպանութեան կանխարգիլման» եւ «Պատերազմի ոճիրներու անժամանցելիութեան» ուխտերը, «իր պատմական հայրենիքին մէջ հայ ժողովուրդին դէմ գործուած ջարդերը կորակենք մարդկութեան դէմ գործուած ոճիր եւ կը դատապարտենք 1915-1922 տարիներուն հայութեան դէմ Թրքական կայսրութեան կողմէ գործուած արարքները»։

Հարկ է նշել, որ վերոյիշեալ Ռուսաստանի Տումայի յայտարարութիւնը իր խորը հակազդեցութիւնը ունեցաւ Թուրքական կառավարութեան շրջանակներում։ Այսպէս, Ապրիլի 20-ին Մոսկուայում Թուրքական դեսպանատան ներկայացուցիչ Էրտան Թեզքերը այցելելով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւն, յայտնեց իր կառավարութեան բողոքը այդ առթիւ, միեւնոյն ժամանակ ակնարկելով, որ «Այսպէս կոչուած Արեւմտեան Հայաստանը երբեք չի կրնար հայերու հայրենիքը համարուիլ»։ Իսկ Թուրքիայի արտաքին գործերի նախարարութեան ներկայացուցիչ Ֆերհաթ Աթամանը այն որակեց, որպէս «ծայրայեղ քայլ» եւ քննադատեց Ռուսաստանին՝ Թուրքիայի տարածքային ամբողջականութեան սպառնալու համար։

Ցայտնի է, որ Թուրքիային միշտ էլ լուրջ մտահոգութիւն է պատճառել «Հայաստան» անուանման յիշատակումը։ Տուեալ դէպքում վերոյիշեալ բանաձեւերում օգտագործուած են «Արեւմտեան Հայաստան» եւ թէ «Պատմական հայրենիք» անուանումները։ Այս բանաձեւի նշանակութիւնը շատ մեծ է եւ կարծում ենք, որ յետագայում այդ հողի վրայ որոշակի քայլեր կը կատարուեն Հայ Դատի պաշտպանութեան խնդրում։

Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տումայի անդամ Անտրէյ Նոյկինը, 1995 թ. Մայիսի 3-ին Մոսկուայում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում մատնանշեց, որ միջազգային օրէնքների համաձայն, ցեղասպանութեան հետեւանքով նուաճուած հողատարածքները չեն կարող որեւէ երկրի օրինական մասը կազմել։

Կարեւոր հնչեղութիւն ունէր նաեւ Ապրիլի 21-ին Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի արտահերթ նիստում 171 պատգամաւորների միաձայնութեամբ ընդունուած բանաձեւը, որը ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում ամբողջութեամբ։

«1995 թ. Ապրիլի 24-ին լրանում է մարդկութեան դէմ գործուած ոճրագործութիւններից մէկի՝ հայոց ցեղասպանութեան 80 տարին։ Օսմանեան կայսրութեան իշխանութիւնների կողմից պետականօրէն ծրագրուած եղեռնագործութեան զոհ դարձան իրենց բնօրրան պատմական հայրենիքում եւ Օսմանեան կայսրութեան այլ վայրերում ապրող աւելի քան մէկ եւ կէս միլիոն հայեր, իսկ մնացածը տարագրուեց՝ սփռուելով աշխարհով մէկ։

Հայոց Ցեղասպանութիւնը դարձաւ ոչ միայն հայ ժողովրդի պատմութեան մեծագոյն ողբերգութիւնը, այլեւ մեծապետական վայրագութեան խորհրդանիշ, հընչեցնելով տագնապի ահազանգ մարդկութեանը՝ ոչ ասելու ցեղասպանութեանը, կանխելու ռասսայական կամ էթնիկական ատելութեան ցանկացած դրսեւորում։

ՀՀԽ-ը երախտագիտութեան խօսք է յղում այն երկրների իշխանութիւններին, խորհրդարաններին, քաղաքական, հասարակական կազմակերպութիւններին եւ գործիչներին, մտաւորականութեան ներկայացուցիչներին, բոլոր նրանց, ովքեր, հաւատարիմ մնալով համամարդկային արժէքներին եւ միջազգայնօրէն ընդունուած նորմերին, իրենց բողոքի ձայնն են բարձրացնում՝ դատապարտելով Հայոց Ցեղասպանութիւնը, սատարելով նրա միջազգային ճանաչմանը։ Հայաստանի խորհրդարանը առանձնապէս կարեւորում է Եւրախորհրդարանի եւ Ռուսաստանի Պետական Տումայի ընդունած փաստաթղթերը, որոնցով ճանաչուեց Արեւմտեան Հայաստանում հայ ժողովրդի դէմ իրագործուած ոճիրը որպէս ցեղասպանութիւն եւ դատապարտուեց այն։

Այժմ, այդ ոճրագործութիւնից 80 տարի անց, երբ Հայաստանի Հանրապետութիւնը աշխարհասփիւռ հայերի հետ նշում է սգոյ այս տարելիցը, ի յարգանս անմեղ զոհերի յիշատակի, ի պաշտպանութիւն պատմական ճշմարտութեան, ՀՀ խորհրդարանը առաջնորդուելով նմանօրինակ ոճիրների կանխարգելման մտահոգութեամբ, իր հաստատակամութիւնն է յայտնում հասնելու 1915 թ. Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը»։

Խորհրդարանի այս յայտարարութեան զուգընթաց Ապրիլի 21-23-ին Երեւանում ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում տեղի ունեցաւ նաեւ «ցեղասպանութեան հարցեր» միջազգային գիտաժողովը։ Բացման նիստին, ելոյթ ունեցան ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը։ Կաթողիկոսը յոյժ հրատապ համարեց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ գիտական քննարկման կարեւորութիւնը։ Այնուհետեւ գիտաժողովին ելոյթներով հանդէս եկան աշխարհի տարբեր երկրներից ժամանած հանրայայտ գիտնականներ, պատմաբաններ, հրապարակախօսներ եւ ցեղասպանութեան մասնագէտներ։

Այդ օրերի կարեւոր նախաձեռնութիւններից մէկն էր նաեւ 1915 թ. ցեղասպանութիւնից վերապրած հայերին թէ հայրենիքում եւ թէ սփիւռքում աջակցութիւն ցուցաբերելու մասին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հրամանագիրը։

Բարձր մակարդակով անցաւ նաեւ Լոս Անճելէսի Եու-Սի-էյ-էյ համալսարանի հայ ժողովրդի արդի պատմութեան ամպիոնի վարիչ Փրոֆ. Ռիչըրտ Ցովհաննիսեանի նախաձեռնութեամբ կազմակերպուած միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցաւ Ապրիլի 7-8-ին հոծ բազմութեան մասնակցութեամբ։

Վերոյիշեալ դատապարտումի յայտարարութիւններին յաջորդեցին Պուլկարիայի, Ուրուկուէյի, Արժանթինի, ինչպէս նաեւ Հոլանտիայում կազմաւորուած քրտական խորհրդարանի յայտարարութիւնները հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու եւ դատապարտելու վերաբերեալ։ Եղան նաեւ վչտակցական հեռագրեր եւ նամակներ այդ հանրապետութիւններից։

Պուլկարիայի խորհրդարանի Ապրիլի 20-ի յայտարարութիւնում մասնաւորապէս ասւում էր.

«Ապրիլի 24-ին կը լրանան 80 տարիներ Օսմանեան կայսրութեան մէջ հայ ժողովրդի դէմ գործադրուած ցեղասպանութեան բարբարոսական արարքէն։ Այս ողբերգական դէպքերը, առնչուած միլիոնէ աւելի հայերու յանպատճառի ոչնչացման, այսօր իսկ մարդկութեան զայրոյթ եւ ընդվզում կը պատճառեն։ Ժամանակակից աշխարհին մէջ այն մասսայական ցեղասպանութեան փորձն էր, որը ամբոխով եւ անպատուութեամբ պատեց զայն իրագործողները։ Մենք՝ իբր քաղաքակիրթ երկիր, ստորագրած ըլլալով ՄԱԿ-ի կողմէ որդեգրուած ցեղասպանութեան դէմ համաձայնագիրը, ինչպէս նաեւ մարդկային իրաւունքները պաշտպանող բոլոր միջազգային ուշագրաւ պայմանագրութիւնները, պաշտօնապէս կը նշենք այս տարեդարձը, յայտարարելու համար, թէ պիտի պայքարինք, որ երբեք եւ ոչ մէկ տեղ, 21-րդ դարամուտքին չկրկնուին ցեղասպանութեան երեւոյթներ»։

Հայերի ցեղասպանութիւնը դատապարտեց նաեւ Լա Հէյի մէջ ստեղծուած քրտական խորհրդարանը։ Ահա մի հատուած խորհրդարանի Ապրիլի 23-ի հրապարակած հաղորդագրութիւնից.

«1915, Ապրիլ 24-ին, Օսմանեան կայսրութիւնը սկսաւ գործադրել հայերն ու ասորիները ոչնչացնելու ծրագիրը, որ տարիներէ ի վեր կը կազմակերպուէր եւ որուն գործադրութեան նպատակով ցարք մը քիւրտ ցեղապետներ, որոնք Իսթանպուլի կառավարութեան օժանդակ խմբակներու վերածուած էին «Համիտեան Ջոկատներ» անուան տակ։ Նոյնը կը կրկնուի այսօր, երբ քիւրտեր պահակ կը նշանակուին քրտական գիւղերու մէջ, կուռելու համար քիւրտ յեղափոխականներուն դէմ։ 1915-ի այդ վայրագ արարքներուն պատճառով, միլիոնաւոր հայեր, ասորիներ եւ քիւրտեր սպաննուեցան, իսկ փրկուածները պարտադրուեցան ապաւինիլ ցուրտ սփիւռքին»։

Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի առթիւ Արժանթինի խորհրդարանում հայերի ցեղասպանութիւնը քննարկուելով, որոշուեց Ապրիլի 24-ը համարել «Մարդուն դէմ մարդու խտրականութեան դատապարտումի ու պայքարի օր»։ Օրինագիծը միաձայնութեամբ վաւերացուեց Արժանթինի ծերակոյտի կողմից 1995 թ. Սեպտեմբերի 21-ին։

Վերեւում մենք ամբողջապէս եւ կամ համառօտակի բերեցինք աշխարհի մի շարք երկրների յայտարարութիւնները հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու եւ դատապարտելու մասին։ Ժամանակն է, որ միւս պետութիւնները եւս արդարացի մօտեցում դրսեւորեն եւ հետեւին վերոյիշեալ պետութիւնների օրինակին։ Հարկ է նշել, որ Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Իվան Ռիպկինը այդ օրերին Երեւանի հեռուստատեսութեամբ ունեցած հարցազրոյցի ընթացքում ակնարկելով իրենց խորհրդարանի որոշման մասին ասել էր, «Մը դա մեր սրտի ձայնն էր»։ Կարծում ենք, որ աշխարհի միւս պետութիւնների խորհրդարաններն էլ պէտք է ասեն իրենց սրտի ձայնը։

Ցաւանի է, որ ԱՄՆ-ի ծերակոյտն ու ներկայացուցիչների պալատը բազմիցս անդրադարձել են հայերի ցեղասպանութեան քննարկմանը եւ տեւապէս ձգտում է եղել ցեղասպանութիւնը դատապարտելու եւ հայանպաստ բանաձեւի ընդունման ուղղութեամբ։ Բայց եւ այնպէս այն դեռեւս իր վերջնական լուծումը չի գտել։ Եւ ահա 1995 թ. Ապրիլի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Պիլ Քլինթընը հրապարակեց ստորեւ բերուած յայտարարութիւնը, որը մենք տալիս ենք մասնակի կրճատումներով.

«Այս վեհ օրը, կը միանամ Մ. Նահանգներու, Հայաստանի եւ աշխարհի չորս ծագերուն գտնուող հայերուն, յիշելով 80-րդ տարելիցը այն հայերուն, որոնք բնաջնջուեցան, զոհ դառնալով Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն տեղի ունեցած ջարդերուն։ Անոնց կորուստը մերն ալ է, անոնց քաջութիւնը վկայութիւն մըն է մարդկութեան անկոտրում ոգիին։ Այս ոգին է, որ հայերու յոյսը վառ պահած է դարերու հալածանքներու ընթացքին։ Այս ոգին է, որ այսօր կապրի հայերու հոգիներուն, եկեղեցիին, լեզուին եւ մշակոյթին մէջ։ Եւ այս ոգին է, որ կը յատկանշէ աշխարհի բոլոր հայերու տոկունութիւնն ու քաջութիւնը։ Ամերիկահայ համայնքը – որ այսօր շուրջ մէկ միլիոն անձ կը հաշուէ – հսկայական նպաստ ունի Ամերիկայի մէջ։ Այժմ, Հայաստանի անկախացումով, հայ ժողովուրդը իր հայրենիքը կը ներմուծէ ժողովրդավարութիւն եւ արդի տնտեսութիւն կառուցելու վճռականութիւնը։

Հայկական ջարդերու 80-րդ տարելիցին առթիւ, կոչ կ'ուղղեմ բոլոր ժողովուրդներուն, որ գործակցաբար առաջքը առնեն յետագային նման անմարդկային արարքներու։ Եւ ինչպէս կը յիշենք անցեալը, անցամ մը եւս նուիրուինք ժողովրդավար, բարօր Հայաստանին եւ մնայուն խաղաղութեան»։

Իմիջիայլոց այդ օրերին թուրքական մամուլը մեկնաբանելով նախագահ Պիլ Քլինթընի վերոյիշեալ յայտարարութիւնը, գոհունակութիւն էր յայտնում, որ այնտեղ չի չեշտուել ցեղասպանութիւն բառը, որ դա թուրքական դիւանագիտութեան յաղթանակն է, իբր թէ այդ խնդրում մեծ դեր է խաղացել Թուրքիայի կողմից Հայաստանի օդային միջանցքը բանալու որոշումը եւ այլն։

Մեր կարծիքով այս գոհունակութիւնը այդքան էլ իմաստաւորուած

չէ, քանի որ նախագահ Պիլ Քլինթընը ինչ որ ձեւով ընդունել է Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում հայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգութիւնը։

Այնուհանդերձ, նշենք, որ նախագահի յայտարարութիւնը պէտք է լինէր առաւել նպատակասլաց, որպէսզի տեղիք չտար նման «գոհունակութիւնների»։

Բանը նրանումն է, որ եթէ նախագահ Պիլ Քլինթընը քաղաքական նկատառումներով զգուշացաւ ցեղասպանութիւն բառը օգտագործելուց, այնուհանդերձ, ԱՄՆ-ի 50 ծերակուտականներ խստագոյն կերպով դատապարտեցին հայերի ցեղասպանութիւնը եւ բանաձեւի նախագիծ առաջադրեցին ներկայացուցիչների պալատ։ Այդ օրերին շատերը քննադատաբար անդրադարձան վերոյիշեալ խնդրին։ «Նոր Օր» եռօրեայի խմբագիր Ցակոբ Պօղոսեանը իր «Տխուր մտորումներ 80-ամեակի առթիւ» առաջնորդող յօդուածում իրաւացիօրէն մատնանշում էր, որ «Սպիտակ Տան կողմից կակնկալուէր աւելի յանդուգն դատապարտագիր մը՝ ոճիրի հեղինակներու հասցէին եւ աւելի յստակ տարազումը ցեղասպանութեան հասկացողութեան»։

Նախագահ Պիլ Քլինթընը իր յայտարարութեան մէջ ցեղասպանութիւն բառը չօգտագործելու կապակցութեամբ Ուաշինկթընի Հայ Դատի յանձնախումբը, տեսակցելով նախագահ Պիլ Քլինթընի եւ փոխ նախագահ Ալ Կորի հետ յայտնեց ամերիկահայ գաղութի խոր յուսախաբութիւնը։

Այնտեղ մատնանշուում էր նաեւ, որ 1992 թ. նախագահը թեկնածու եղած ժամանակ յամենայն դէպս կանխամտածուած այդ կոտորածները բնութագրել էր որպէս ցեղասպանութիւն։

Իսկ Ամերիկայի նշանաւոր ծերակուտական Պապ Տոլը, անդրադառնալով նախագահ Քլինթընի ցեղասպանութեան բառը չօգտագործելու խնդրին, նշել էր, որ ինքը ծայր աստիճան յուսախաբ է, որ Պիլ Քլինթընն ցեղասպանութիւն չէ որակած այդ բնաջնջումը։

1995 թ. ուշադրութեան արժանի նախաձեռնութիւններից մէկն էլ օտար 68 մտաւորականների ստորագրութեամբ պատրաստուած բողոքի յուշագիրն էր, ուր դիպուկ կերպով խօսւում էր հայերի ցեղասպանութիւնը ուրանալու եւ յատկապէս ԱՄՆ-ի ակադեմական շրջանակները շարաշահելու թուրքական քաղաքականութեան մասին։ Դատապարտելով թուրքական կառավարութեան կողմից նախաձեռնուող ակադեմականների շարաշահման մտայնութիւնը, կոչ է յղուում ամերիկեան Քոնկրէսին անյապաղ վաւերացնելու հայերի ցեղասպանութեանը վերաբերող օրինագիծը։ Յուշագրի վերջում մատնանշում է, որ «ցեղասպանութեան ուրացումը բռնութեան մէկ ձեւն է։ Ան կը շարունակէ ցեղասպանութեան գործընթացը։ Ան կը միտի վերադասաւորել պատմութիւնը, պատուաւիրկել շարագործը եւ շարակամութիւնը բարդել զոհին վրայ։ Նոյնպէս, ցեղասպանութեան ուրացումը արգելք կը հանդիսանայ ցեղասպանութեան պատճառով գոյացած հոգեկան խոցերու դարմանման։ Ցեղասպանութեան ուրացումը ինքնին ցեղասպանութեան վերջին հանգրուանն է։ Ան կը սպաննէ վերապրողներու արժանապատուութիւնը եւ կը խորտակէ ոճիրին յիշատակումը»։

Վերջերս մամուլից տեղեկացանք նաեւ մի այլ կարեւոր նախաձեռնութեան մասին։ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների Տան նորեկ հանրապետական քոնկրէսմէնների խմբաւորումի նախագահ՝ Ճորճ Ռատանովիչը, Մարտ 7,1996 թուակիր նամակով կոչ է առել իր պաշտօնակիցներին, որպէսզի զօրակցեն հայերի ցեղասպանութեան բանաձեւի (H. Con. Kes. 47) վաւերացմանը։ Նամակում մասնաւորապէս շեշտւում է, որ «1915 թուականից Օսմանեան կայսրութիւնը սկսեց կանխամտածուածօրէն իրագործել հայ ժողովրդին բնաջնջելու մի ծրագիր, ոչնչացնելով նաեւ նրա 3 հազար տարուայ մշակոյթն ու պատմութիւնը։ Հետեւանքը եղաւ այն, որ կոտորուեցին մէկ ու կէս միլիոն հայեր, իսկ բախտի բերմամբ ողջ մնացածները աքսորուեցին իրենց պատմական հայրենիքից։ Վերապրողներից շատերը իրենց նոր տունը շինեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում։ Հակառակ այդ բոլորին, առ այսօր Թուրքիայի կառավարութիւնը հրաժարւում է ճանաչել հայերի ցեղասպանութիւնը եւ այդ ժամանակուայ պատմութիւնը վերաշարադրելիս փորձում է նենգափոխել ճշմարտութիւնը։

Ինչպէս վերեւում նկատեցինք Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի առթիւ մի շարք պետութիւնների կողմից իրօք որ եղան հայերի ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման յայտարարութիւններ, ինչպէս նաեւ առանձին վշտակցական գրութիւններ, այնուհանդերձ այն ամբողջապէս վերցրած չբաւարարեց եւ չգոհացրեց աշխարհով մէկ ցրուած տարաբախտ հայ ժողովրդին, քանի որ այն չընդունեց միջազգային համընդհանուր չափանիշ։ Իսկ թուրքական մի պատուիրակութիւն բաւարարուեց միայն մի ծաղկեպսակ դնել Երեւանի Մեծ Եղեռնի յուշարձանին, առաջին անգամ լինելով։

Բոլոր դէպքերում պայքարը շարունակւում է եւ պիտի շարունակուի մինչեւ որ 1915 թ. հայերի ցեղասպանութիւնը ճանաչուի եւ դատապարտուի միջազգային հանրութեան եւ պետութիւնների կողմից եւ արդար հատուցում ստանայ նրա հոգային պահանջատիրութիւնը։ Միայն, միասնական եւ սերտ համագործակցելով կը հասնենք մեր սուրբ նպատակին։

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐԸ

Այն յօդուածը գրելու պատճառ հանդիսացաւ հայերի ցեղասպանութեան 80-ամեայ տարելիցի նախօրէին հայ-թուրքական փոխադարձ հանդիպումների ընթացքում այն ակնարկութիւնը, որ ցեղասպանութիւնը պամբանների քննարկման հարց է եւ գոյութիւն ունեցող վէճերը անհրաժեշտ է թողնել նրանց։

Դժբախտաբար այդ հանդիպումներից անմիջապէս յետոյ թուրքական պատմագրութիւնը, աւելի ճիշդ Թուրքիայի արխիւային վարչութիւնը սկսեց մի շարք այսպէս կոչուած փաստագրական նիւթեր հրատարակել հայերի կատարած զուլումների մասին եւ մեղքը բարդելով հայերի վրայ յայտարարել, որ թուրքերն են ենթարկուել ցեղասպանութեան։ Չորս հատորից բաղկացած այդ հրատարակութեան խորագիրն է «Կովկասում եւ Անատոլիայում հայերի կատարած դաժանութիւնները ըստ արխիւային փաստաթղթերի»։ Առաջին հատորի նախաբանում պատմաբան Ալի Նաջի Թունջերը գրում է, «այս փաստաթղթերը ցոյց են տալիս, որ ոչ թէ թուրքերն են կոտորել հայերին, ինչպէս պնդում են հայերը, այլ ընդհակառակը, հայերն են կոտորել թուրքերին։ Եւ այս ճշմարտութիւնը շատ պարզ երեւում է բերուած փաստաթղթերում»։

Նոյն միտքն է կրկնում նաեւ Թուրքիայի պետական արխիւների ընդհանուր տնօրէն Խամէթ Պինարքը նշելով, որ «Ամէնէն իրաւաչտ եւ վստահելի ճամբան այսպիսի ճշմարտութիւններ երեւան հանելն է՝ արխիւների վրայ հիմնուելով եւ

ցոյց տալ, թէ բուն զուլումը կատարուած է հայերու կողմէ»։ Բնականաբար այս արխիւային փաստաթղթերի հրատարակմանը յաջորդեցին այլ գրքեր եւս, որոնցից կ'ուզէինք առանձնացնել Հիւսէյն Նազըմ փաշայի 1897 թ. գրուած «Հայկական դէպքերու պատմութիւնը» խորագրով գիրքը, որ կրկին լոյս աշխարհ է գալիս 98 տարի յետոյ, մեր օրերում։ Բանից պարզւում է, որ այս գիրքը իր ժամանակին Հիւսէյն Նազըմ փաշան ձօնել է սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ին։ Մեզ մնում է եզրակացնել, եթէ տուեալ գիրքը իր ժամանակին նուիրուել է մեծ բռնակալին, ուրեմն այն պէտք է շարադրուած լինի հակահայկական, հայերին ամբաստանելու ոգով։ Նշենք, որ մենք տեսանք եւ ապրեցինք այն օրերը երբ բռնակալ Ստալինի փառաբանութեան նուիրուած բազմաթիւ գրքեր լոյս տեսան տարբեր լեզուներով, որոնք այսօր իրենցից ոչ մի արժէք չեն ներկայացնում։

Ուրեմն մեզ համար խիստ կարեւոր է ընդհանրապէս իմանալ, թէ թուրք պատմագրութիւնը ինչպէս է մեկնաբանել եւ խեղաթիւրել հայ ժողովուրդի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը. յատկապէս 19-րդ դարի վերջի քառորդին եւ 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած ողբերգական դէպքերը։

Հարկ է նշել, որ 1963 թ. Երեւանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի աշխատակիցներ Երուանդ Սարգսեանը եւ Ռուբէն Սահակեանը հրատարակեցին «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմութեան նենգափոխումը թուրք պատմագրութեան մէջ» խորագրով շահեկան աշխատութիւնը, որտեղ փաստացի տուեալներով բացայայտուեցին, մինչ այդ կատարուած թուրք պատմաբանների եւ պետական գործիչների կեղծիքներն ու աղաւաղումները հայ ժողովրդի նոր շրջանի պատմութեան մի շարք հանգուցային հարցերում։

Այնպէս որ մենք այստեղ կանգ կ'առնենք մեր երկարամեայ ուսումնասիրութիւնների ընթացքում մեր կողմից նկատուած խեղաթիւրումների վրայ։ Որպէս Թուրքիայի միջնադարի մասնագէտ նախ ուզում ենք փաստացի մի քանի օրինակներ բերել,

թէ ինչպէս արդի թուրք պատմաբանները միտումնաւոր նենգափոխում են իրենց միջնադարի թուրքական աղբիւրները։

Այսպէս, յայտնի է, որ 17-րդ դարի հանրայայտ թուրք պատմագէտ-աշխարհագրագէտ Քեաթիպ Զելեպին իր պատմա-աշխարհագրական «Ջիհան-նիւմա» (Աշխարհի Հայելի) աշխատութեան մէջ 41-րդ գլուխը նուիրել է Հայաստանի նկարագրութեան, որը կրում է «Արմենիա երկրի մասին» խորագիրը։

Ցաւօք պէտք է նշենք, որ ժամանակակից թուրք պատմագիրները հետապնդելով ազգայնամոլական նպատակներ, ճգնում են ժխտել հայ ժողովրդի պատմական անցեալի, Արեւմտեան Հայաստանի գոյութիւնը։ Այսպէս, 1957 թ. թուրք պատմաբան Համիտ Սատի Սելենը հրատարակեց առանձին ուսումնասիրութիւն «Ջիհան-Նիւմա»յի վերաբերեալ։ Այս ուսումնասիրութեան մէջ նոյնութեամբ բերուած են այն երկրների անունները, որոնք նկարագրուել են Քեաթիպ Զելեպիի կողմից, սակայն Ջիհան-Նիւմայում շատ պարզ գրուած «Արմենիա երկրի մասին» վերնագիրը դարձել է «Արեւելեան Անատոլիա»(1) Բնականաբար միւս թուրք պատմագիրները եւս հետեւում են նրա օրինակին։

Աւելին, 1957-1963 թթ. Ստանպուլում լոյս տեսաւ «Ընդարձակ Օսմանեան Պատմութիւն» (Mufassal Osmanli Tarihi) խորագիրը կրող վեցհատորեայ աշխատասիրութիւնը, որը բովանդակում է Թուրքիայի պատմութեանը վերաբերող նիւթեր՝ սկզբից մինչեւ 1923 թ. հանրապետական կառավարութիւնը։ Այլ նիւթերի հետ մէկտեղ հատորներում խօսւում է նաեւ Օսմանեան կայսրութեան ներքին կառուցուածքի, նրա սահմանների մէջ մտնող երկրների եւ այլ հարցերի վերաբերեալ, բայց ոչ մի խօսք Հայաստանի մասին։ (Իմիջիայլոց նշենք, որ այս հատորներում լայնօրէն օգտագործուած են միջնադարի թուրք պատմագիրների երկերը, յատկապէս Քեաթիպ Զելեպիի աշխատութիւնները)։ Թուրք պատմաբանները չարամտօրէն ոչ մի տող չեն յատկացրել Հայաստանին, կարծելով որ այդպիսով մոռացութեան կը տան պատմական

Հայաստանի գոյութիւնը։ Միայն 6-րդ հատորում թռուցիկ կերպով խօսւում է հայերի Թուրքիայում մշտապէս լաւ ապրելու(?) եւ 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած հայկական շարժումների մասին, որոնք հեղինակների կարծիքով, պատճառ են հանդիսացել հայ եւ թուրք զանգուածների «փոխադարձ(?)» կոտորածներին։

Քանի խօսք եղաւ միջնադարի մասին, նշենք նաեւ հետեւեալը. յայտնի է, որ Արեւմտեան Հայաստանում մանկաժողովի (դեւշիրմէ) կիրառման քաղաքականութիւնը կատարեալ մի պատուհաս էր հայ ժողովրդի համար։ Սուլթանական հրամանագրով հաւաքագրում էին 9-ից 20 տարեկան առողջ եւ ամրակազմ տղաներին եւ յատուկ զօրանոցային պայմաններում դաստիարակում մոլեռանդ մուսուլմանական ոգով եւ դարձնում ենիչերի։ Մանկաժողովը մի հզօր միջոց էր Թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքականութեան իրականացման համար։ Մանկաժողովին վերաբերող պատմագիտական եւ յատկապէս վաւերագրային նիւթերը Ստանպուլի արխիւներից հաւաքել եւ երկու հատորով հրատարակել է յայտնի թուրք պատմաբան Իսմայիլ Ուզունչարշըլը(2)։ Ուսումնասիրուած նիւթերի հիման վրայ նա գրում է, որ «Եըլտըրըմ Պայազէդից յետոյ հպատակ Քրիստոնեայ երեխաներին մանկաժողովի ենթարկելու համար կազմուել է մի օրէնք։ Այդ նոր օրէնքով Ռումելիի(3) բոլոր ոչ-մահմետական ժողովուրդները աստիճանաբար պիտի մահմետականացուէին, իսկ մահմետականացուած այդ զինուորների քանակով հզօրանալու էր թուրքական բանակը»։ Այս մասին Ի. Ուզունչարշլըն գրել է 1943 թ.(4)։ Իսկ արդի թուրք պատմաբանները, յատկապէս Եավուզ Էրջանը, աղաւաղելով փաստերը, աշխատում է ժխտել

վերոյիշեալ փաստը, նշելով, որ իբր դեւլիրմէն պատմականօրէն մեծ դեր չի խաղացել քրիստոնեաներին զանգուածաբար մահմեդականացնելու եւ թուրքացնելու խնդրում։(5)

Եզրակացնելով նշենք, որ միջնադարի թուրք պատմագիրները ընդհանրապէս տուել են երկրում տիրող չարաշահումներն ու բռնութիւնները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինութիւնները, երկրում ստեղծուած անապահովութիւնը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի եւ այլ զօրամասերի սանձարձակութիւնները։ Իսկ հակառակ այս բոլորին, արդի թուրք պատմաբանները պնդում են, որ թուրքերը իբրեւ թէ, տեւական խաղաղ ու մարդասիրական քաղաքականութիւն են վարել նուաճուած ժողովուրդների նկատմամբ։(6)

Յատկանշական է, որ ժամանակակից թուրք պատմաբաններն իրենց ուսումնասիրութիւններում, շրջանցելով պատմական փաստերը, փորձում են քօղարկել Արեւմտեան Հայաստանում եւ առհասարակ ամբողջ Թուրքիայում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու ցեղասպանութիւնը։ Թուրք պատմաբաններն, իրենց ազգայնամոլական շահադիտումներից ելնելով փորձում են նոյնիսկ աղաւաղել մօտ անցեալի մի շարք թուրք պետական եւ մշակոյթի գործիչների որոշ չափով առարկայական տուալները։ Հարցն այն է, որ ինչ-որ տեղ թուրք պատմաբանների եւ պետական գործիչների գրիչը չի խուսափել նշելու այն ողբերգութիւնը, որը տեղի ունեցաւ Ապտուլհամիտեան բռնատիրութեան եւ երիտթուրքերի իշխանութեան օրօք Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում արեւմտահայութեան հետ։

Բերենք մի օրինակ. 1954 թ. թուրք պատմաբան Հիլմի Քեամիլ Պայուրը Անքարայում լոյս ընծայեց 19-րդ դարի վերջերին Օսմանեան կայսրութեան յայտնի քաղաքական գործիչ՝ մեծ վեզիր «Սադրազամ Քեամիլ փաշայի քաղաքական կեանքը» խորագիրը կրող աշխատութիւնը։ Գրքի առաջաբանում Հիլմի Քեամիլ Պայուրը շեշտում է, որ ինքը ձգտել է բերել փաստացի նիւթեր եւ յատկապէս ամբողջական հատուածներ Քեամիլ փաշայի

յուշերից։ Մենք համեմատեցինք Քեամիլ փաշայի օսմաներէն (հին արաբատառ թուրքերէն) գրուած յուշերը այդ մէջբերուած լատինատառ թուրքերէն հատուածների հետ։ Պարզուեց, որ Հիլմի Պայուրը դիտումնաւոր կերպով կրճատել եւ աղաւաղել է իր գրքում Քեամիլ փաշայի յուշերից բերուած հատուածները։ Նախ, այն հատուածները, որտեղ Քեամիլ փաշան խօսել է քրտերի մասին, բոլորովին հանուած են, քանի որ այսօր թուրքերի կարծիքով Թուրքիայում քրտեր կամ քրտական հարց գոյութիւն չունի։ Արեւմտահայութեան վիճակին վերաբերող այն մասերը, որոնք հեղինակը նպատակայարմար չի գտել, նոյնպէս հանել է բերուած հատուածներից։ Օրինակ, Սասունի դէպքերին վերաբերող հատուածից հանել է հետեւեալ խօսուն տողերը. «Սասունի հարցում Ապտուլ Համիտը յանդիմանել էր գլխաւոր քարտուղար Սուրեյա փաշային խիստ հեռագիր ուղարկելու համար. «Ես ասել էի՞ խփէ՛ք, այլ ոչ թէ կոտորած սարքէք»։

Ժամանակակից թուրք պատմաբանները պնդում են, թէ թուրքերը չեն կոտորել հայերին։ Մինչդեռ այդ հատուածում կայ կոտորած բառը։ Հիլմի Ք. Պայուրը, այն հատուածներում, ուր հայերին կոտորելու խօսք կայ, հանել է։ Այս եւ այլ փաստերը ցոյց են տալիս թէ ինչպէս թուրք ժամանակակից պատմագրութիւնը խեղաթիւրում եւ աղաւաղում է հայ ժողովրդի պատմութիւնը։

Պատմական փաստերի խեղաթիւրման ցայտուն նմուշ է նաեւ Թալեաթ փաշայի այսպէս կոչուած «յուշերը», որը լոյս տեսաւ 1946 թուականի սկզբին Հիւսէյն Ճահիտ Եալչընի համառօտ յառաջաբանով եւ անմիջական հրատարակիչ՝ Էնվեր Պոլայըրի «Երկու խօսքով»(7)։

Անհրաժեշտ է նշել, որ այս գրքոյկը հեռու է կատարեալ յուշագրութիւն լինելուց։ Այդ հաստատւում է նաեւ յառաջաբանում նշուած Եալչընի հետեւեալ խօսքերով. «Սակայն պարագաներն ու պայմանները հնարաւորութիւն չտուին նրան գրելու իր կատարեալ յուշերը»(8)։ Նոյն միտքն է արտայայտել նաեւ հրատարակիչը. «Թալեաթ

փաշան իր մահից յետոյ, մաքուր անունից եւ յուշերի մի մասը բովանդակող տետրակից բացի, ոչինչ չթողեց։ Այս «յուշերը» նրա գրաւոր միակ երկն է, որը ներկայումս մեծ հպարտութեամբ տպագրում ենք գրքի ձեւով»(9)։

Թալեաթի յուշերի օսմաներէն բնագիրը ժամանակին չի հրատարակուել, եւ դրա գոյութեան մասին ոչ մի յիշատակում չի եղել թուրք պատմագրութեան մէջ։ Գրքի սկզբում հրատարակիչների կողմից, բերուած է Թալեաթի արաբատառ ձեռագրերից մի նմուշ, որը ոչ մի առնչութիւն չունի նրա յուշերի բովանդակութեան հետ։ Այն ներքին գործերի նախարարի մի սովորական գրութիւն է։ Մեզ համար առաւել համոզիչ կը լինէր, եթէ հրատարակիչները գրքի սկզբում բերէին Թալեաթի յուշերի օսմաներէն ձեռագրից մի հատուած։

Թէ ինչ փոփոխութեան է ենթարկուած օսմաներէն բնագիրը, երբ այն վերծանուել է ժամանակակից թուրքերէնի, մեզ անյայտ է։ Այսուհանդերձ գրքի բովանդակութիւնը պարզ ցոյց է տալիս, որ այն հրապարակուած է որոշակի նպատակով եւ լիովին համապատասխանում է տուեալ ժամանակուայ ոգուն։ Պարզ ասած, այնտեղ ամէն կերպ նենգափոխուած են փաստերը եւ պատմական իրականութիւնը։

Եթէ մի կողմ թողնենք յուշերի սկզբում բերուած 1914-1918 թթ. Թուրքիայի ներքին եւ արտաքին իրադրութեանը վերաբերող համառօտ շարադրանքը (այն կազմում է ընդամէնը 30 էջ), ապա առանց վարանելու կարելի է ասել, որ այդ գիրքը նուիրուած է հիմնականում հայկական հարցի պատմութեան։ (էջ 43-149)։

Մեր կարծիքով, տուեալ գրքի հրատարակումն իր հիմքում ունեցել է մի նպատակ՝ Անդրկովկասում, Թուրքերի նուաճողական նկրտումներից ելնելով, Թուրք հասարակութեան շրջանում թշնամանք եւ ատելութիւն սերմանել հայ ժողովրդի հանդէպ։ Յուշերի հեղինակը կաշուից դուրս է եկել ապացուցելու, որ ինքը մեղաւոր ու յանցաւոր չէ հայերի բնաջնջման խնդրում, որ հայերն իրենք են

բռնութիւն գործադրել թուրքերի վրայ, որ 1919 թ. կ. Պոլսում ռազմական արտակարգ ատեանի իր եւ ընկերների հանդէպ արձակուած մահուան դատավճիռը անտեղի էր եւ այլն...։

Թալեաթ փաշայի «Յուշերը» իր բովանդակութեամբ խիստ տարբերւում է միւս թուրք պետական գործիչների յուշերից։ Այստեղ շատ քիչ տեղ է տրուած անձնական գրառումներին եւ հիմնականում բերուած են փաստաթղթեր։ Դրանք ամփոփուած են «Հայերի ներքին դրութեան վերաբերող պատմական փաստաթղթերը» գլխում (էջ 45)։

Երկարատեւ պրպտումներից յետոյ մեզ յաջողուեց պարզել, որ այսպէս կոչուած այդ «փաստաթղթերը» վերցուած են 1916 թ. Թուրքիայում լոյս տեսած «Հայ կոմիտէների յեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գրքից(10)։ Վերջինս լոյս տեսաւ այն ժամանակ, երբ համաշխարհային հասարակութիւնը իրազեկ դարձաւ հայ ժողովրդի հանդէպ գործադրուած ցեղասպանութեան մասին։ Թուրքական կառավարութիւնը, որպէսզի արդարացնի իր չարանենգ գործունէութիւնը, հրապարակեց այդ գիրքը՝ զետեղելով այնտեղ ամէն տեսակի զրպարտանք եւ խաբէութիւն արեւմտահայութեան հասցէին։ Այդ գրքում զետեղուած բազմաթիւ նկարներից 32-ը վերաբերում են զանազան զէնքերի կուտակումների մասին, որոնք, իբրեւ թէ, բռնագրաւել են հայ յեղափոխականների թաքստոցներից։

Գրքի վերջում զետեղուած են նաեւ մի շարք նկարներ, որոնք պատկերում են իբրեւ թէ կոտորածի ենթարկուած թուրքերի դիակները։ Սա եւս կեղծ է եւ չինծու։ Ահա թէ ինչ է գրում 1915 թ. հայկական կոտորածների ականատեսներից մէկը՝ ազգութեամբ արաբ Ֆայէզ էլ Հիւսէյնը.

«Թուրքական կառավարութիւնը հասկացաւ, որ եւրոպական պետութիւններն առանց յապաղելու իրազեկ կը դառնան հայ ժողովրդի ոչնչացմանը եւ այդ լուրը կը տարածուի աշխարհով մէկ՝ լարելով հասարակական կարծիքը թուրքերի դէմ։ Այդ իսկ պատճառով, մեծ թիւով հայեր կոտորելուց յետոյ, կառավարութիւնը հրահանգ էր տուել իր գործակալներին՝

դիակներին բրտի հագուստ հագցնել, գլխներին բոլոզներ դնել: Դրանից յետոյ գալիս էին բիւրտ կանայք, շրջապատում դիակները, սկսում լաց լինել ու բղաւել, թէ հայերը սպանել են իրենց ամուսիններին: Այդ ամբողջ տեսարանը նկարահանուել է, որպէսզի յետոյ «ապացուցեն», թէ հայերն են յարձակուել բրտերի վրայ եւ սպաննել նրանց, իսկ բրտական ցեղերը ոտքի են ելել, որպէսզի վրիժառու լինեն, թէ կառավարութիւնը այդ ամէնում ոչ մի մասնակցութիւն չի ունեցել: Սակայն խելամիտ մարդիկ կռահեցին այս խաղը եւ այն շուտով յայտնի դարձաւ Տիարպէքիրում»(11):

Կարծում ենք, որ այսքանն էլ բաւական է հասկանալու համար, թէ այդ ժողովածուն ինչ էր ներկայացնում իրենից եւ ինչ յետին նպատակների համար էր հրապարակուած: Ահա այդ գրքից էլ Թալեաթը (գուցէ եւ հրատարակիչները) բերել է բազմաթիւ զրպարտանքներով լի փաստաթղթեր: Ցիշեալ գրքից վերցուել են ոչ միայն փաստաթղթեր, այլեւ տուեալ գրքում բերուած պարզ մեղադրական շարադրանքը զետեղուել է յուշերի մէջ իբրեւ փաստաթուղթ:

Իրեն եւ իր նմաններին արդարացնելու եւ կատարուած ոճրագործութեան յանցանքը իր վրայից դէն նետելու միտումով, իր յուշերում Թալեաթը կաշուից դուրս է գալիս «ապացուցելու» իր անմեղութիւնը: Մինչդեռ նրա ստորագրած ծածկագիր հեռագրերը բացայայտօրէն ցոյց են տալիս հայերի կոտորածների գլխաւոր կազմակերպիչներից մէկի գործունէութիւնը եւ մեղսակցութիւնը:

Թալեաթ փաշայի յուշերի վերլուծումը մեզ բերում է այն եզրակացութեան, որ արեւմտահայութեանը վերաբերող նիւթերը միտումնաւոր աղաւաղուած են եւ չեն համապատասխանում իրականութեանը: Խիստ կասկածելի է նաեւ յուշերի հեղինակի ինքնութեան հարցը: Մի գուցէ Թալեաթը ունեցել է օրագրութեան կամ յուշերի ձեւով շարադրուած էջեր, բոլոր դէպքերում հրա-

տարակիչները նենգ նպատակներով ընդարձակել են դրա ծաւալը, խմբագրել եւ կցել չինծու «փաստաթղթեր»:

Հայ ժողովրդի պատմութեան աղաւաղման արտառոց օրինակ է հանդիսանում արդի թուրք պատմաբան Եավուզ Էրջանի գրչին պատկանող մի շարք աշխատութիւններ: 1993 թ. նա հրապարակեց մի գիրք «Հայերը դիմակազրկւում են» թունոտ խորագրով, որի բովանդակութեան նիւթ էր դարձել Անքարայի համալսարանի թուրքական յեղափոխութեան պատմութեան արխիւում իր կողմից յայտնաբերուած Զարլզ Պոսվել Նորմանի զեկուցագիրը:

Տուեալ գրքում ընդգրկուած է Զ.Պ. Նորմանի զեկուցագրի անգլերէն եւ թուրքերէն բովանդակութիւնը՝ Եավուզ Էրջանի գրած յառաջաբանով:

Նորմանը իր այդ զեկուցման մէջ 1894-96 թթ. Սասունում եւ այլուր տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւնների մեղքը բարդում է հայերի վրայ եւ կատարեալ պաշտպանութեան տակ է վերցնում Սուլթան Ապդուլ Համիտի հայերի նկատմամբ դրսեւորած դաժան քաղաքականութիւնը:

Մի քիչ առաջ անցընելով նշենք, որ Զ.Պ. Նորմանի պարագան յար եւ նման է մեր օրերում տեղի ունեցած անգլիացի պատմաբան Պեռնար Լեւիսի հայերի ցեղասպանութիւնը կասկածի տակ առնելու խնդրին: Ցայտնի է, որ Պեռնար Լեւիսը 1961 թ. հրապարակած իր գրքի մէջ հաւատարիմ մնալով ճշմարտութեանը նշել էր, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում արեւմտահայութիւնը ենթարկուել է ողջակիզման, իսկ տարիներ յետոյ, նոյն հատորի մէջից այդ յօդուածը անհետացել էր:

Եւ ահա Զ.Պ. Նորմանն էլ, որպէս հրեատնու սպայ 1877 թ. Մեծն Բրիտանիայից գալիս է Թուրքիա 1877-78 թթ. ռուս-թրքական պատերազմի ուսումնասիրութեան խնդրով եւ 1878 թ. Լոնտոնում հրատարակում է «Հայաստանը եւ 1877 թ. կամպանիան» գիրքը(12): Նշենք, որ այս գիրքը

շարադրուած է անաչառ եւ ճիշդ պատկերացում է տալիս Ապտուլ Համիտի սուլթանութեան սկզբնական շրջանում հայերի նկատմամբ ի գործ դրած հալածանքների մասին։ Իսկ 1896 թ. ըստ Եավուզ էրջանի յայտնաբերած զեկուցագրի, նրա դիրքորոշումը հայերի հանդէպ շեշտակի փոփոխութեան է ենթարկուել ինչ-որ մութ հանգամանքների ազդեցութեան տակ։ Մեր ուսումնասիրութիւնները մեզ բերեցին այն եզրակացութեան, որ Զ.Պ. Նորմանը հայատեաց ոգով շարադրուած այդ զեկուցագիրը գրել է յատուկ պատուէրով։

Այսպէս՝ Օսմանեան կայսրութեան յայտնի պետական գործիչ հայատեաց Քամիլ փաշան, երբ 1895 թ. Մայիսին կրկին նշանակուեց Մեծ վէզիրի պաշտօնին, վերլուծելով Սասունի իրադարձութիւնները իր յուշագրութեան մէջ եւ զեկուցագրերում հետեւեալ խորհուրդն էր տալիս Ապտուլ Համիտին։

«Սասունի դէպքը, աւելի շուտ այնտեղի ապստամբութեան ճնշումը հայերի կողմից այնպէս է ուռճացուել եւ անգլիական մամուլում այն աստիճան դաժանութեամբ է նկարագրուել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցութիւն չգործել ոչ միայն Անգլիայում, այլեւ նոյնիսկ այստեղ՝ Օսմանեան կայսրութեան տարբեր հպատակների վրայ»(13)։

«Եւ եթէ այժմ որեւիցէ հրատապ բան կայ անելու, դա այն է, որ հետաքննող յանձնաժողովի զեկոյցը շտապ կերպով հրատարակուի Անգլիայում, որպէսզի հանդարտուի ընդհանուրի տրամադրութիւնը։ Եւ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար բաւական է, որ յիշեալ զեկոյցը հրապարակուի օտար պաշտօնեաների ստորագրութեամբ»(14)։ Քեամիլ փաշան մի այլ տեղ խօսելով այս մասին նշում է. «Անհրաժեշտ է, որ չէզոք մի անձնաւորութիւն հանդէս գայ Լոնտոնի մամուլում»(15)։

Եթէ պարզ համեմատութիւն կատարենք Քեամիլ փաշայի եւ կապիտան Նորմանի վերոյիշեալ զեկուցագրերի միջեւ, ապա, այնքան էլ դժուար չի

լինի կռահելը, թէ ինչ ներքին կապ կարող էր լինել դրանց միջեւ։ Դրանք միեւնոյն շղթայի յաջորդական օղակներն են. այսինքն՝ այն ցոյց է տալիս, որ Նորմանի զեկուցումը սարքուի եւ պատուէրով կատարուած մի գործ էր։ Քեամիլ փաշայի խօսքերով ասած՝ Նորմանը հէնց այդ նոյն «չէզոք», «օտար» անձնաւորութիւնն էր, որի ստորագրութեամբ լոյս պիտի տեսնէր մի յօդուած, որպէսզի հանդարտուէր Անգլիայի, ինչպէս նաեւ համաշխարհային հասարակութեան կարծիքը Ապտուլ Համիտեան հայերի կոտորածների կապակցութեամբ։ Բերուած փաստերը առանձին մեկնաբանութեան կարիքը չունեն։ Միայն նշենք, որ Եաւուզ էրջանը ուռճացնելով Զ.Պ. Նորմանի զեկոյցը դիմակազրկում է ոչ թէ հայերին, այլ յանձինս իրեն՝ Թուրքերին։

1995 թ. հայոց Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի օրերին Վանում լոյս տեսաւ Կիւրսոյ Սոլմազի առաջաբանով հետեւեալ խորագրով գիրքը. «Էրզրումում, Սարիքամիշում եւ Կարսում հայերի կատարած դաժանութիւնները»(16) 1918-1920 թթ.։ Այս գրքում ընդգրկուած են այսպէս ասած այդ դաժանութիւնների ականատեսների նկարագրութիւնները, թուով 99 հոգի։ Ընթերցելով այդ գիրքը նկատեցինք, թէ ինչպիսի շինծու, երեւակայական նկարագրութիւններ են ընդգրկուած հայերի կատարած «դաժանութիւնների» մասին։ Եւ իբր հայերի կատարած դաժանութիւնները զսպելու համար 1920 թ. Սեպտեմբերի 28-ին Արեւելեան ռազմաճակատի հրամանատար՝ զօրավար Քեազիմ Քարաբէքիրը յարձակւում է հայերի վրայ (էջ 15)։ Քարաբէքիրի կատարած աւերածութիւնները եւ կոտորածները յայտնի է բոլորին։

Նոյնիսկ Թուրք պատմաբան Ճեմալ Քութայը մի գիրք գրեց, որի խորագիրն էր «Ինչպէս Քարաբէքիրը ոչնչացրեց Հայաստանը»(17)։

Այս բոլորից յետոյ վերոյիշեալ գրքում, Շեվքեթ Օղլու Հաջի Լեզգի Ուրայ անունով Թուրք ականատեսներից մէկը Քարաբէքիրին նկարագրում է, որպէս բարի եւ գթասիրտ մի անձնաւորութիւն։

Այսպէս, «Մենք յառաջացանք մինչեւ Գիւմրի։ Քարապէքիր փաշան շատ գթասիրտ մի անձնաւորութիւն էր։ Նա, մեր մէջ գտնուող հայ գերիներին եւ երեխաներին ուտելիք էր բաժանում, հագուստեղէն էր տալիս։ Հայերի տներին եւ հայ կանանց ոչ ոք չհամարձակուեց ձեռք տալ»(18)։ Այս բոլորը բնականաբար բացայայտ կեղծիք է, քանի որ Քեազիմ Քարապէքիրը նոյնիսկ բացայայտ խոստովանում էր, որ ինքը աշխարհի երեսից ջնջելու է Հայաստանը։

Թուրքական միւս հրատարակութիւնների նման, այստեղ եւս խօսւում է, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնութիւն չեն կազմել։ Եւ ընդհանրապէս հայերին տրւում է իրականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող հետեւեալ նենգապատիր բնութագրումը։ «Իրենց «հայ», իսկ բնակավայրը Հայաստան անուանող հայերը, պատմութեան մէջ եւ այսօր ոչ մի ժամանակ Հայաստան, հայաստանցի, հայ անունները իրենց համար երբեք չեն օգտագործել»(19)։

Վերեւում մենք բերեցինք տարբեր բնոյթի փաստեր, որոնք ցոյց են տալիս, թէ ինչպիսի հնարքներով թուրք պատմաբանները աղաւաղում եւ նենգափոխում են հայ ժողովրդի պատմութիւնը։ Ստորեւ մենք կանդրադառնանք Ապտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանի, ինչպէս նաեւ հայերի ցեղասպանութեան վերաբերող մի քանի հանգուցային հարցերին, որոնց խեղաթիւրմանը ընդհանուր առմամբ մեծ տեղ է յատկացւում արդի թուրքական հրատարակութիւններում(20)։

Այսպէս թուրքական պատմագրութիւնը ամէն ջանք գործադրում է խեղաթիւրելու Ապտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանում տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները, որոնց, ինչպէս յայտնի է զոհ գնացին 300,000 անմեղ հայեր։ Անտեսելով պատմական փաստերը թուրք պատմաբանները այսօր աշխատում են փառաբանել արիւնարբու սուլթանին, որպէս Թուրքիայի պատմութեան մէջ «մեծ» դեր խաղացած պետական գործիչ։ Այս տեսակէտից փայլուն օրինակ կարող է հանդիսանալ Զուհուրի Դանիշմանի

բազմահատորանոց աշխատութիւնը, որի մէջ հեղինակը ամէն կերպ ձգտում է սրբացնել Ապտուլ Համիտին եւ ժխտել համաշխարհային մամուլում նրան տրուած գնահատականը, դրականի վերածելով նրա բոլոր բացասական կողմերը։ Ապտուլ Համիտը ներկայացւում է ոչ թէ վախկոտ, նենգ, դաժան, այլ քաջ, արդարամիտ եւ վեհանձն անձնաւորութիւն, որն իր ազգի համար աւելի շատ գործեր է կատարել քան որեւիցէ մի այլ սուլթան եւ այլն։ Այս աշխատութեան 13-րդ հատորում նշուած է, որ Գերմանիայի կայսեր հետ ունեցած հանդիպման ժամանակ Ապտուլ Համիտը բացայայտօրէն ասել է. «Ես աւելի կը նախընտրեմ մեռնել, քան թէ Անատոլիայի արեւելքում ինքնավարութեան տանող բարեփոխումներ անցկացնել»(21)։ Ահա, իր այս սկզբունքից ելնելով, Ապտուլ Համիտը հայկական հարցի վերացման համար վարում էր արեւմտահայերի բնաջնջման քաղաքականութիւն։

Բոլորին յայտնի է, որ 1894-96 թթ. Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայերի կոտորածները ինչպէս ցնցեցին ամբողջ աշխարհը, յատկապէս այն խորը ցասում առաջացրեց Եւրոպայի ժողովուրդների մօտ, որոնք խստագոյն կերպով դատապարտեցին այն։

Այդ մասին կան նաեւ դէպքերի ժամանակակից մի շարք յայտնի թուրք մտաւորականների դիպուկ գնահատականները, որոնցից մի քանիսը բերում ենք այստեղ։ Այսպէս թուրք պատմաբան եւ զինուորական գործիչ Օսման Նուրին գրել է.

«Այս ջարդը բոլոր պարագաներում մի սահարկու եղեռն էր մարդկութեան դէմ։ Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նոյն Ապտուլ Համիտ երկրորդն էր, որը ղեկավարում էր Եըլտըզի այդ հրոսակախումբը եւ կոտորում էր ոչ միայն հայերին, այլեւ դէպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»(22)։

Երիտթուրքական յայտնի գործիչ,
իրաւաբան Ջելալ Նուրին, 1911 թ.

հրատարակուած իր Kabus (Մղձաւանջ) խորագրով գրքի հայերէն թարգմանութեան յառաջաբանում գրել է. «Ապտուլ Համիտի սուլթանութեան շրջանը անկասկած հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական շրջաններից մէկն է, քանի որ հայերը այդ ժամանակահատուածում բաւականաչափ զոհեր տուին. եւ մենք թուրքերս բռնակալ վեհապետի հրահանգով կատարուած այդ բոլոր ոճրագործութիւնների համար տեւապէս ցաւ ենք զգում»(23):

Իսկ հանրայայտ թուրք գրականագէտ եւ քաղաքական գործիչ Համտուլլահ Սուբհի պէյը, իր «Էրթողրուլ» վերնագրով գրքի հայերէն թարգմանութեան յառաջաբանում գրել է.

«Ես, այն մէկն եմ ձեր թուրք հայրենակիցներից, որը հայերի կրած դժբախտութիւնների համար վերին աստիճանի ազդուել, եւ նրանց տարած տառապանքների համար խորապէս ցաւակցել եմ»(24):

Հակառակ այս բոլորին մեզ խորը զարմանք եւ նոյնիսկ զայրոյթ է յառաջացնում մեր օրերի թուրք պատմաբաններից Եավուզ Էրջանի հետեւեալ գնահատականը, այդ ժամանակաշրջանի իրադարձութիւնների մասին: Եւ ոչ միայն նրա:

«19-րդ դարի կէսերին հայերի կողմից թուրքերի դէմ նախաձեռնուած թշնամութիւնը նոյն դարի վերջաւորութեան վերածուել էր թուրքերի նկատմամբ գործադրուող զուլումի, ճնշման եւ ցեղասպանութեան»(25): Միթէ այս մեկնաբանութիւնը պատմութեան աղաւաղման արտառոց երեւոյթ չէ: Այսքանից յետոյ չպէտք է զարմանալ, որ Սասունի կոտորածի 100-ամեայ տարելիցի օրերին, իր մահից 77 տարի յետոյ Ստանպուլի քաղաքապետարանի եւ

կրօնական վարչութեան կողմից առաջին անգամ լինելով նշուեց սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ի մահուան տարեդարձը:

Իսկ Մեծ Եղեռնից յետոյ ամբողջ Թուրքիայի տարածքով հայերի բռնի տեղահանութեան եւ կոտորածների փաստին թուրք պատմաբանները այն մեկնութիւնն են տալիս, որ դա իբր սովորական տեղահանութիւն է եղել ռազմական գօտուց մի այլ ապահով վայր: Իսկ ոմանք գրում են, որ երկրի ներսում յառաջացած ապստամբութեան հետեւանքով կառավարութիւնը նախաձեռնեց հայերի տեղահանութիւնը, կովկասեան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով: Օրինակ Եավուզ Էրջանը գրում է, «որ 1914 թ. դաշնակից պետութիւնների դէմ կենաց մահու պատերազմի մէջ մտած Օսմանեան պետութիւնը, երբ հաստատեց հայերի՝ ռուսների հետ ունեցած համագործակցութիւնը, դիմեց ամենամարդասիրական գործողութեան: Իր գոյութիւնը պահպանելու համար հայերի մի մասին ստիպողաբար գաղթի ենթարկեց»(26):

Իրականում Արեւմտահայութեան ինքնապաշտպանութիւնը այս շրջանում ոչ թէ ապստամբութիւն էր, այլ գոյութեան կռիւ: Հայերը զէնքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորուելու վտանգի առաջ:

Կրկին դիմելով թուրքական աղբիւրներին, նշենք, որ 1919 թ. երիտթուրքերի դատավարութեան ընթացքում բերուած ծածկագիր հեռագրերը, նամակները, ականատեսի վկայութիւնները ապացուցում են, որ արեւմտահայութեան տեղահանութիւնը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ տեղի է ունեցել բացարձակապէս «Իթթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ յառաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ եւ վճռուել է նրա գաղտնի նիստերից մէկում ձայների մեծամասնութեամբ: Փաստերը վկայում են, որ հայութիւնը տեղահանուեց այնպիսի շրջաններից, գիւղերից եւ

քաղաքներից, որոնք ճակատամերձ գծուց շատ հեռու էին գտնուում։ Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը իսպառ բնաջնջելու ճանապարհը։ Եւ պատերազմը ամենապատեհ առիթը հանդիսացաւ գործադրելու իրենց այդ դիւային ծրագիրը։ Վերոյիշեալ դատավարութեան բոլոր մեղադրական եզրակացութիւններում մատնանշւում է, որ «ընդունուած յատուկ օրէնքի համաձայն, այլ վայրեր տարագրուած հայերի կարաւանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական յանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել են»(27)։

Թուրքական պատմագրութիւնը շատ է ուռճացնում 1915 թ. Մայիսի 30-ին, Յունիսի 15-ին եւ Հոկտեմբերի 26-ին հրապարակուած հայերի լքեալ գոյքին վերաբերող կանոնադրութիւնները։ Իբր թէ այդ կանոնադրութիւններով պիտի պաշտպանուէին տեղահանուածների նիւթական եւ բարոյական իրաւունքները։ Մինչդեռ իրականութիւնը այն է, որ դրանք բնաւ չգործադրուեցին կեանքում։

Ըստ այդ կանոնադրութիւնների, իբր թէ հայերի գոյքերն ու կալուածները պիտի գրանցուէին եւ արձանագրուէին պետական պաշտօնեաների կողմից, եւ արժէքները գնահատուելուց յետոյ աւանդ պահ դրուէին պետական գանձարանները, որպէսզի յետագայում դրանք յանձնուէին իրենց տէրերին։ Թէ ինչ ձեւով դրանք ետ պիտի վերադարձուէին եւ երբ, յայտնի չէր, որովհետեւ կանոնադրութեան հեղինակները, արդէն վաղօրօք քաջ գիտէին, թէ ինչ էր սպասւում ամբողջ հայութեանը...։

Հազիւ թէ հայերը հեռանում էին իրենց բնակավայրերից, երբ Թուրքիայի այլ կողմերից գաղթած մահմեդականները կառավարութեան նախաձեռնութեամբ լկտիաբար սեփականացնում էին հայերի տները, խանութները, կողոպտելով եւ թալանելով նրանց ամբողջ ունեցուածքը։ Ահա թէ ինչ է գրում այդ մասին դէպքերի ժամանակակից

Զաւէն Պատրիարքը.- «Այսպէս, ժողովուրդին բոլոր շարժական ստացուածքը կը փճանար կամ լաւ եւս է ըսել Թուրքերու ձեռքը կ'անցնէր, կառավարութիւնը ոչ մէկ տեղ հոգածու չգտնուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու»(28)։

Իսկ տուեալ ժամանակուայ Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպան՝ Հ. Մորկընթաուն վկայում է հետեւեալը. «Հազիւ թէ նախկին սեփականատէրերը հեռանային գիւղէն՝ մահմեդական մուհաճիրներ - Թուրքիոյ այլ կողմերէն գաղթողներ- կը փոխադրուէին հայկական բնակավայրերէն ներս։ Նոյնպէս հայերուն բոլոր արժէքաւոր առարկաները - դրամ, մատանիներ, ժամացոյցներ եւ գոհարեղէններ - կը տարուէին ոստիկանատուներ «ապահով պահելու համար» մինչեւ հայերին վերադարձը, եւ ապա կը բաժանուէին Թուրքերուն»(29)։ Կարելի է բազմաթիւ վկայութիւններ բերել բռնագաղթուած հայերի գոյքերի եւ ունեցուածքի կողոպտման մասին, սակայն բաւարարուենք այսքանով։

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Մեծ Եղեռնի ընթացքում կողոպուտի ու ոչնչացման են ենթարկուել 66 քաղաքների ու 2500 գիւղերի հայ ու քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, կողոպտուել ու քանդուել են աւելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ եւ վարժարաններ։ Ազգային յատուկ յանձնաժողովի տուեալներով, Օսմանեան կայսրութիւնում միայն հայ ժողովրդին հասցուած նիւթական վնասը 1919 թ. կուրսով կազմել է մօտ 15 միլիարդ ֆրանք։

Հայկական հարցին վերաբերող Թուրք պատմաբանների բոլոր աշխատութիւններում ձգտում կայ նաեւ միտումնաւոր նուազեցնել հայերի թուաքանակը Արեւմտեան Հայաստանում։ Նրանցից ետ չի մնում նաեւ Եավուզ Էրջանը գրելով, որ «Օսմանեան կայսրութեան մարդահամարի համաձայն, Ստանպուլն էլ ներառեալ, ամբողջ Թուրքիայում 1,300,000 հայ կար...։ Արեւմուտքի եւ հայերի առաջ քաշած տուեալներով ինչպէ՞ս կարող է պատահել, որ այդ դէպքերի ընթացքում 2,000,000 մարդ մահացած լինի, այն դէպքում երբ Օս-

մանեան հողերում 1,300,000 հայ էր ապրում։ Այս պարագայում ստացւում է այնպէս, որ բոլորովին չապրած 700,000 հայերն էլ զոհերի թուում են»(30)։

Դեռեւս Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում եւ յետոյ, երբ հայկական հարցը դարձաւ միջազգային շահարկման առարկայ, թուրք պետական գործիչները այդ թուում եւ պատմաբանները բարենորոգումների անհրաժեշտութիւնը աւելորդ համարելով միտումնաւոր սկսեցին ամէն ջանք թափել նուազեցնելու հայերի թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում։ Այս խնդրում թուրք պատմաբանները անտեսում են շատ կարեւոր մի հանգամանք, դա զինուորական հարկից ազատելու նպատակով քրիստոնեաների հաշուառումից խուսափելու հարցն է։ Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հաշուառման ընթացքում բազմաթիւ հայկական գիւղերի բնակչութիւնը դուրս է մնացել գրանցումից, որը - նոյնպէս բացասաբար է անդրադարձել հայ բնակչութեան ընդհանուր թուաքանակի վրայ(31)։ Ըստ Կ. Պոլսի հայ պատրիարքարանի տուեալներով Օսմանեան կայսրութիւնում կար 2,660,000 մարդ, որից մէկ միլիոն 630 հազարը Արեւմտեան Հայաստանում(32)։ Հայ եւ օտարազգի պատմաբանների ու մասնագէտների տուեալները այս խնդրում բերում են այն եզրակացութեան, որ նախապատերազմեան շրջանում հայ ազգաբնակչութեան թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում եղել է 2,500,000 միլիոն մարդ։ Իսկ զոհուած հայերի թուաքանակի մասին խօսելիս մատնանշւում է, որ մեծ եղեռնի ընթացքում զոհ են գնացել աւելի քան 1,500,000 անմեղ հայեր(33)։

Ինչպէս գիտենք 1919-20 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցաւ երիտթուրքական կուսակցութեան ղեկավար գործիչների եւ կառավարութեան անդամների դատավարութիւնը, որը հիմնականում առնչւում էր արեւմտահայերի զանգուածային բռնի տեղահանութեան եւ ջարդերի հետ։

Զարմանալին այն է, որ այս դատավարութեան նիւթերը առ այսօր գաղտնի են պահւում թուրք հասարակութիւնից։ Ինչո՞ւ,- որովհետեւ այնտեղ հաւաստի փաստարկներով ցոյց է տրուած իրա-

կանութիւնը։ Դատավարութեան ընթացքում արեւմտահայութեան կոտորածներին վերաբերող մեղադրական ապացոյցները՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, հրամանները, ինչպէս նաեւ ականատեսների վկայութիւնները լիովին բացայայտում են, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականօրէն իրականացուել են «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի (յատուկ կազմակերպութիւն) արիւնոտ ձեռքերով։

Այո՛, առ այսօր թուրք պատմաբանները լուռ են մնում այս հաւաստի փաստերի նկատմամբ։ Իսկ թուրք պետական գործիչները իրենց անհիմն քարոզչական ծրագրերը իրականացնելու համար ծախսում են միլիոններ եւ դիմում են ամէն մի նենգ միջոցների։ Կազմակերպում են յաճախակի գիտաժողովներ։ Հրատարակւում են կեղծիքներով լի գրքեր։ Նկարահանւում են բազմասերիանոց ֆիլմեր, որոնք ցուցադրւում են թուրքական հեռուստատեսութեամբ։ Կառուցւում են յուշարձաններ այսպէս ասած թուրք զոհերի յիշատակին։ Դեռ աւելին, վերջերս մամուլից տեղեկացանք, որ ամերիկեան փրոֆ. Էմի Մակարօ Ռուպինը, ԱՄՆ-ի բարձրագոյն կրթութեան ժամանակագրութեան վրայ յենուելով, հրապարակել էր մի յօդուած(34) այն մասին, թէ ինչպէս թուրքական կառավարութիւնը հսկայական մեծ գումար յատկացնելով ձգտում է վարձել ամերիկեան համալսարանների դասախօսներին եւ գիտնականներին, որպէսզի հայերի ցեղասպանութեան հարցում նրանք պաշտպանեն Թուրքիայի տեսակէտներն ու շահերը։ Աւելի ճիշդ հերքեն հայերի ցեղասպանութիւնը։ Բնականաբար այնտեղ շեշտը դրւում էր այն բանի վրայ, որ այդ բոլորը կատարւում է Ռաչինկիթընի թուրքական դեսպանութեան միջոցով։ Եւ ուրացողների ամենավերեւի շարքում մատնանշւում է տոքթ. Հիթհ Լօուրիի անունը, Փրինսթոնի համալսարանի թուրքական ուսումնասիրութիւնների Աթաթուրքի անուան ամպիոնի վարիչը։ Էմի Մակարօ Ռուպինը նշում է, որ կատարուած եղծումների եւ գաղտնի գործարքների դէմ պայքարելու համար պատրաստուել է մի դիմում բողոքագիր,

որը ստորագրել են ամերիկեան զանազան համալսարանների 80 փրոֆեսէօրներ։

Եզրակացնենք։ Սոյն յօդուածով մենք փորձեցինք ցոյց տալ, թէ ինչպէս այս 80 տարիների ընթացքում թուրք պատմագրութիւնը աղաւաղել եւ նենգափոխել է իրականութիւնը, եւ այսօր էլ շարունակւում է նոյնը կատարուել թէ պատմաբանների եւ թէ պետական գործիչների կողմից։

Եթէ այս ոգով պիտի շարունակուի այսուհետեւ եւս, ուրեմն ոչ մի արդիւնքի չենք հասնի վիճելի հարցերը լուծելու խնդրում։ Մինչդեռ պատմաբանները կարող են դրական դեր խաղալ եթէ չօշափուող հարցին մօտենան արդարութեան եւ ճշմարտութեան հողի վրայ, որը մենք դեռեւս չենք նկատում թուրք պատմաբանների մօտ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տե՛ս Katip Çelelbi, Hayati ve eserleri hakkinda incelemeler, Ankara, 1957, s. 127.
2. Տե՛ս I. Uzunçarşili, Osmanli devleti teşkilatindan kapukulu ocaklari, Ankara, C.I, 1943, c.2., 1944
3. Օսմանեան կայսրութեան եւրոպական մասի անուանումը։
4. Տե՛ս Ի. Ուզունչարշըլը, նշուած աշխ. հատ. 1, էջ 13։
5. Տե՛ս Belleten, 1984, No. 188, s. 1137.
6. Yilmaz Öztuna, Baslangictan zamanimiza kadar, Türkiye tarihi, cilt 3, Istanbul, 1964, s. 12.
7. Talaat paşanin hatiralari, Istanbul, 1946.
8. Նշուած աշխ., էջ 5։
9. Նշուած աշխ., էջ 8։
10. Տե՛ս Ermeni Komitelerinin amal ve harekat-i, ihtilalyasi, Istanbul, 1916 (արաբատառ թուրքերէն)։
11. Տե՛ս Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Մ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1966, էջ 360, ռուսերէն։
12. C.B. Norman, Armenia and the Campaign of 1877, London, 1878.

13. Տե՛ս Hatirat-i Sadr-i esbak Kamil paşa, Kostantinya, 1329, s. 181 (արաբատառ թուրերէն)։
14. I.H. Uzunçarşili, II-ci Abdul Hamid devrinde Kamil paşa, Belleten, 1955, No. 78, s. 227.
15. Hatirat-i Kamil paşa, s. 181.
16. Gürsoy Solmaz, Erzurum, Sarikamiş - Karsta Ermeni Zulumu (1918-1920), 1995, Van.
17. Cemal Kutay, Karabekir Ermenistani nasil yok etti, Istanbul, 1956.
18. Տե՛ս Erzurum, Sarikamis - Karsta Ermeni Zulumu. s. 23.
19. Նոյն տեղում, էջ 3։
20. Նշենք, որ 70-ական թուականներից յետոյ, հայերի ցեղասպանութիւնը հերքելու եւ ընդհանրապէս հայ ժողովրդի պատմութիւնը աղաւաղելու միտումներով Թուրքիայում բազմաթիւ գրքեր են լոյս տեսել, որոնց հեղինակներն են. Սալահի Սոնյէլ, Այհան Եալչընը, Քեմալ Քարփաթ, Սատի Քոչաք, Քամուրան Կուրուն, Թարիք Սոմեր, Շիմշիր Պիլալ, Ալի Նաջի Թունջեր, Եավուզ Էրջան, Մեհմէտ Խոճաօղլու, Ապտուլլահ Եաման, Ի. Օզքայա, Ահմէտ Պանօղլու, Քերեմ Տեմիր, Ալփթեքի Միւտտերիսիօղլու, Միմ Քեմալ Էօքէ, Խալիլ Քեմալ Թիւրքէօզու եւայլն։
21. Zuhuri Danişman, Osmanli Imparatoluğu tarhi, C. XIII, Sultan Ikinci Abdul Hamid han, Istanbul, 1966, S. 145.
22. Osman Nuri, Abdul Hamid Sani ve devr-i Saltanati, Istanbul, 1327, S. 866 (արաբատառ թուրքերէն)։
23. Pars Tuğlaci, Ermeni edebiyatindan seçkiler, Istanbul, 1992, S. 87.
24. Նոյն տեղում, էջ 89։
25. Yavuz Ercan, Ermeniler ve Iran, Ankara, 1994, S.V.
26. Նոյն տեղում, էջ V.
27. Տե՛ս Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) No. 3586.
28. Զաւէն Արք. պատրիարքական յուշերս, վաւերագրեր եւ վկայութիւններ, 1917, Գահիրէ, էջ 318։

29. Morgenthau Henry, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 311.

30. Հ.Գ. Ինճիկեան, Օսմանեան կայսրութեան անկումը, Երեւան, 1984, էջ 301:

31. Եավուզ Էրջան, նշուած աշխ. էջ XIX.

32. Տե՛ս ՀՀ Գալստեան, «Արեւմտեան Հայաստանի բնակչութեան կազմը ըստ Վիտալ Քինէի վիճակագրութեան»: «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, XII, Թուրքիա, Երեւան, 1985, էջ 59:

33. Population arménienne de la Turquie avant la guerre, Statistique établies par le Patriarcat arménien à Constantinople, Paris, 1920, p. 9.

34. Տե՛ս Ռ. Սահակեան, ցեղասպանութեան պատմութիւնից, 1990, էջ 288-289:

35. Critics Accuse Turkish government of Manipulating Scholarship, (քննադատները ամբաստանում են թուրքական կառավարութեանը գիտնականներին չարաշահելու համար: (Տե՛ս Asbarez, October 25, 1995).

ՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՌՆԱՐ ԼԵՎԻՍԻՆ
"ՈՉ ԹԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՌՆԱԳԱՂԹ, ԱՅԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Վերջերս "Հայ Կեանք" շաբաթաթերթի թիվ 19, Փետրվար 09-1994, 4-րդ էջում "Ոչ թէ հայկական ցեղասպանութիւն", այլ հայկական "բռնագաղթ" խորագիրը կրող լրատվության մեջ ծանոթացանք հրեա արևելագետ Պէռնար Լեվիի հայերի բռնագաղթի և ցեղասպանության հարցին վերաբերող մի նոր մեկնաբանության հետ:

Պարզվեց, որ Պէռնար Լեվինը "Լը Մոնտ" օրաթերթի վերջին թիվերից մեկում արտահայտել է այն միտքը, որ 1915-ին Օսմանյան կայսրության մեջ հայերի հանդեպ տեղի ունեցած դեպքերը ոչ թէ ցեղասպանություն էին, այլ տվյալ ժամանակվա կառավարության կողմից գործադրված բռնագաղթ: Նրա խոսքերով ասած, իբր թե "բռնագաղթը, Օսմանեան կայսրութեան կողմէ յատկապէս հայերուն համար ստեղծուած կարգադրութիւն մը չէր: Ան՝ յաճախ կը կիրարկուէր, դարերէ ի վեր՝ յատկապէս քաղաքական յանցագործութիւններու և այլ նման դէպքերու պարագային: Օսմանեան բռնագաղթը, Արևելքի մէջ հայերը չունէր իբրև թիրախ, այլ՝ մտահոգուած էր Ռուսական յառաջխաղացքի մը հաւանականութենէն: Վանի դէպքերը և հետևանքները ծանօթ են այդ ուղղութեամբ:

Բնականաբար այսպիսի մեկնաբանությունները նորություն չեն մեզ համար:

Իրենց հուշագրություններում թուրք պետական գործիչներ Թալաաթը, Ջեմալը, Ալի Ֆուաղ էրդենը և հետագայում թուրք պատմաբանները գրում են, որ երկրի ներսում առաջացած ապստամբության հետևանքով կառավարությունը նախաձեռնեց, հայերի տեղահանությունը, ոմանք էլ փորձում են ապացուցել, որ տեղահանությունը իրականացվել է Կովկասյան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով:

Նախ հարկ է նշել, որ Արևմտահայության ինքնապաշտպանությունը այս շրջանում ոչ թե ապստամբություն էր, ինչպես պնդում էին Թալաաթն ու Ջեմալը արդարանալու միտումով, այլ գոյության կռիվ: Հայերը զենքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վտանգի առաջ:

Այնպես որ մենք բոլորովին համամիտ չենք հարգելի արևելագետի վերոհիշյալ մտքի հետ, քանի որ գոյություն ունեցող փաստերը լիովին հակառակն են ապացուցում:

Ստոր և մենք կ՝բերենք առանձին փաստարկներ 1988 թ. մեր կողմից հրատարակված "Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի "գրքից, ուր օսմաներենից (հին արաբատառ թուրքերեն) հայերեն թարգմանությամբ տրված են 1919 թ. Ստամբուլում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցության ղեկավար գործիչների դատավարության այն փաստաթղթերը, որոնք առնչվում են Արևմտահայերի զանգվածային տեղահանության ու ջարդերի հետ։

Հենց սկզբից նշենք, որ 1908 թ. իշխանության գլուխ անցնելուց հետո երիտթուրքերը անբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արյունարբու քաղաքականությունը՝ իրենց դաժանությամբ գերազանցելով նրան։ Ազգային հարցը լուծելու համար ընտրեցին ազգերը ոչնչացնելու ճանապարհը։ Նրանց հանցավոր գործունեության առաջին դրսևորումը եղավ 1909 թ. Ադանայում և Կիլիկյան մի շարք նահանգներում տեղի ունեցած հայության կոտորածը։

Փաստերն ու վավերագրերը բերում են այն եզրակացության, որ Ադանայի նահանգում կազմակերպված ջարդերը Աբդուլ Համիդի մեթոդով վաղօրոք նախապատրաստված և հրահրված էին երիտթուրքերի կուսակցության կողմից։

Երիտթուրքերի դատավարության ընթացքում բերված ծածկագիր հեռագրերը, նամակները, ականատեսի վկայությունները ապացուցում են, որ արևմտահայության տեղահանությունը (կամ բռնագաղթը) ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ տեղի է ունեցել բացարձակապես "Իթթիհադ վե Թերաքքի" ("Մերություն և Առաջադիմություն) կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ և վճռվել է նրա դաղտնի նիստերից մեկում ձայների մեծամասնությամբ։

Փաստերը վկայում են, որ հայությունը տեղահանվեց այնպիսի շրջաններից, գյուղերից և քաղաքներից, որոնք ճակատամերձ գոտուց շատ հեռու էին գտնվում։

Թուրք պաշտոնյա Նայիմ բեյի՝ վավերագրական նյութերի հիման վրա շարադրված հուշագրության մեջ կարդում ենք."Եփրատի ափերն արտաքսվածների մեծ մասը Կ.Պոլսի շրջակայքից էր, ինչպես նաև Ռոդոստոյից, Նիկոմիդիայից, Պարտիզակից, Ատաբազարից, Զիզրեից, Կոնիայից. մի խոսքով, նրանք Կեսարիայի և Անատոլիայի երկաթգծի երկարությամբ ընկած տարածքից աքսորված հայերն էին։ Այս նոր տարագրումը ընդհանուր զարմանքի առիթ տվեց։ Անհասկանալի էր, թէ ինչու մարդկանց քշում են Տեր Զորի ուղղությամբ։ Սակայն անհանգստանալու համար առավել էական պատճառներ կային։ Ռատէ Այնում և այլուր տեղի ունեցած կոտորածները տարածվեցին նաև Մեսկենեում։ Մի քանի տարի շարունակաբար կատարվող կոտորածները զաղտնի չմնացին նաև խուլ անապատում։ ...կառավարության պահանջը ամբողջ հայության ոչնչացումն էր։ Նրանք իրավունք չունեին այլևս գոյատևելու"։(էջ. 10)

Տեղահանված հայերի, քարավանները հալվում էին ճանապարհին՝զոհ դառնալով "Թեշքիլաթը մահսուսե"-ի չեթեների հարձակումներին, քաղցին ու հիվանդություններին։ Տվյալ ժամանակ թուրքական 4-րդ բանակի զեներալներից Ալի Ֆուաադ Էրդենը իր հուշերում նշում է, որ տեղահանված հայության թշվառ վիճակը շատ նպաստավոր էր բծավոր և որովայնային տիֆի տարածման համար, որ այդ վարակիչ հիվանդությունների պատճառով մեծ թվով մահացություններ են եղել։(տես հեղինակի հուշերը էջ 122)

Իսկ իրենից ինչ էր ներկայացնում "Թեշքիլաթը Մահսուսե"-ն և ի՞նչ նպատակի համար էր ստեղծված այն։ "Թեշքիլաթ-ը Մահսուսե" (հատուկ կազմակերպություն) անվան տակ գործել է երկու դաղտնի կազմակերպություն։ Մեկը եղել է զինվորական կազմակերպություն և ստեղծվել է ռազմական մինիստրության հրամանով, իսկ մյուսը՝ գործել է ներքին գործերի մինիստրության անմիջական հսկողության տակ, և կուսակցության կենտրոնական կոմիտեի ղեկավարներից Բեհաէդդին Շաքիրի ղեկավարությամբ իրականացրել է արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը։

Ահա թե ինչ է վկայում այդ մասին թուրք պաշտոնյա և հասարակական գործիչ Մեվլան Զաղե Ռիֆաղը."Մերություն և առաջադիմություն" կուսակցությունը որոշում կայացրեց՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին։ Այս հրամանը իրականացնելու համար էլ նախագահությունը կազմեց մի հանձնաժողով Բեհաէդդին Շաքիր, դոկտ.Նազըմ և լուսավորության մինիստր Շյուքրի բեյերից կազմված, նրան տալով "Երեքի գործադիր կոմիտե" անվանումը։ Այս երեքի գործադիր կոմիտեն "Թեշքիլաթը Մահսուսե" անվան տակ սկսեց բանտերից հավաքագրել քրեական հանցագործներին, և ստեղծել չեթեների հրոսակներ։ "Թեշքիլաթը Մահսուսե" պիտակի տակ ստեղծված այս չեթեների հրոսակի կատարած հանցագործություններն ու բռնությունները, արատավորելով թուրք ժողովրդին աշխարհի հասարակության առջև, արյունալի և

բարբարոսական էջեր արձանագրեցին նրա պատմության մեջ"։ (տե՛ս հեղինակի արաբատառ աշխատանքը, էջ 108)

Ահա, հայերի բնաջնջման նպատակով ստեղծված այս "Թեշքիլաթ-ը Մահսուսե"-ի հրոսակներն էին, որ կազմակերպված ձևով մարդկանց տեսողությունից հեռու, ամայի վայրերում հարձակվում էին անզեն ու անպաշտպան քարավանների վրա և անողոքաբար սպանել սարքում։ Իսկ հրաշքով ազատվածները, քաղցից և ծարավից ծայրաստիճան հյուծված և ոսկրացած ուրվականների նման հայտնվում էին Միջագետքի և Սիրիայի անապատներում։

Խարբերդի հայության տեղահանության և կոտորածի 1920 թ. Հունվարի 13-ի դատավճռում շատ պարզորոշ նշված է "Մեղադրյալ Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես "հատուկ կազմակերպության" նախագահ, Ստամբուլից դուրս գալով սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում։ Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքը ենթարկել կողոպուտի, (էջ 177)։ Հարգելի պրոֆեսոր, եթե կառավարության որոշմամբ տեղահանության նպատակը հայերին մի այլ վայր փոխադրելն էր, ապա հաշվի պիտի առնվեին նրանց ապահովության հարցը։ Մինչդեռ տեղահանված հայերի քարավանները ճամփու էին դրվում կյանքի ապահովության բոլոր միջոցներից զուրկ։

Տրապիզոնի տեղահանության և կոտորածի դատավճռում նշվում է, որ հայերի քարավանները ամիսներով ճանապարհներին քարշ գալուց հետո, շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված, տառապալի ուղեվորությունից, սովից և ծարավից (էջ 168)։

Պարզորոշ տրված է նաև հետևյալը "կանանց և երեխաներից ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին։ Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և մենք բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնավոր ու խիստ կազմակերպված" (էջ 168)։

Հարգելի Պրն.Պեռնար Լէվիս, մի՞թե անմեղ կանանց և երեխաներին ձկան կեր դարձնելը տեղափոխություն է մի այլ վայր...

Ուշագրավ է, որ նույնիսկ Թալաաթը ինչ որ տեղ խոստովանել է տեղահանության առաջ բերած ողբերգությունը։ Նա իր հուշագրության մեջ խոստովանելով գրել է "...ըստ էության, զինվորական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք։ Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղությունը։(տե՛ս նրա հուշերը էջ 72-43)։

Իսկ հետագայում Թալաաթը, թուրք կին գործիչ Հալիդե Էդիբի վկայությամբ, խոստովանելով հանդերձ իր անմարդկային արարքը, արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից."Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում ամեն ինչ և հաջողում է, աշխարհը ընդունում է այդ։ Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար"։ (տես Հալիդե Էդիբի հուշերը անգլերեն, էջ 387)։

Ուրեմն այսպես հարգելի պրոֆեսոր, եզրակացնենք։

Դատական հանձնաժողովի նախագահ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշան դատավարության ընթացքում լիովին բացահայտում է, որ կոտորածները կանխամտածված բնույթ են ունեցել, կազմակերպվել են կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից և անմիջականորեն իրականացվել են "Թեշքիլաթը Մահսուսե"-ի արյունոտ ձեռքերով։

Իսկ կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարները երբ փորձել են անմեղանալ, Մուստաֆա Նազըմ փաշան ասել է.

"Օրենքով կատարված գործողությունների համար ոչ մեկին պատասխանատվության չենք ենթարկում։ Իրականությունը այն է, որ տեղահանության քողի տակ կոտորած են սարքել։ Ահա այս արարքի համար է, որ պատասխանատվության ենք ենթարկում ձեզ։ (էջ 152)

Ուրեմն ուղղենք հոդվածի վերնագիրը։ Այն ավելի ճիշտ կլինի գրել."Թե հայկական բռնագաղթ և թե հայկական ցեղասպանություն"։

ՀԱՅ ԿԵՆՆՔ շաբաթաթերթ
ՄԱՐՏ 09 , 1994

ԲՌՆԱԳԱՂԹ ԹԷ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Վերջերս հայ եւ օտար մամուլում հայերի ցեղասպանութիւնը հերքող՝ արեւելագէտ-պատմաբան Պեռնար Լեվիսի մեկնաբանութիւններին վերաբերող բաւականաչափ լրատուութիւններ եղան եւ նոյնիսկ տեղեկացանք, որ Ֆրանսահայ միութիւնների ֆորումը եւ Ֆրանսիական «Լիճրա» կազմակերպութիւնը պատժական օրէնքի 1382 յօդուածի հիման վրայ դատական հարց են յարուցել նրան:

Բնականաբար այս խնդիրը արձագանգ պիտի գտնէր նաեւ Թրքական մամուլում: Եւ ահա վերջերս լրագրող Նիլգուն Ջերրահօղլուն «Սապահ» թերթում մի յօդուած գրելով այդ առթիւ, պաշտպանում է Պեռնար Լեվիսի թուրքամէտ դիրքորոշումը եւ տալիս է իր եզրակացութիւնը հետեւեալ կերպ.

«Մեզ թուրքերիս մնում է պաշտպան կանգնել Պեռնար Լեվիսի դատին եւ հայերի հանած աղմուկին պատասխանել ոչ պակաս աղմուկով»:

Ընդհանրապէս վերոյիշեալ այդ խնդրին մենք անդրադարձել էինք «Հայ Կեանք» շաբաթաթերթի Մարտ 9, 1994 թուում: Այնուհանդերձ մեր բիւրաւոր անմեղ նահատակների յիշատակի օրուայ՝ Ապրիլի 24-ի նախօրէին այս հարցը յոյժ կարեւոր համարելով որոշեցինք այլ տեսանկիւնով, մէկ անգամ եւս անդրադառնալ դրան, նկատի ունենալով Պեռնար Լեվիսի այն միտումը, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում ոչ թէ ցեղասպանութիւն, այլ ուղղակի բռնագաղթ է եղել հայերի հանդէպ:

Ուրեմն այսպէս, Պր. Պեռնար Լեվիսի կարծիքով «ոչ մէկ լուրջ փաստ գոյութիւն ունի Օսմանեան կառավարութեան կողմէ հայ ազգի բնաջնջումը որոշող կամ ծրագրող գործընթացի մը»:

Բայց չէ, որ հայերի ցեղասպանութեան խնդրին անդրադաձել են աշխարհի տարբեր ազգութիւնների մտաւորականներ, պետական գործիչներ, պատմաբաններ, լրագրողներ, հրապարակախօսներ, որոնք դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ կատարուած երիտթուրքերի հրէշաւոր արարքները, անաչառ գնահատականներ են յայտնել հայերի ցեղասպանութեան մասին:

Դեռեւս իր ժամանակին Ֆրանսիայի մեծ գրող Վիքթոր Հիւկոն անդրադառնալով հայկական հալածանքներին ասել է.

«Բնաջնջուում է մի ամբողջ ժողովուրդ. այս փաստն ունի՞ վկաներ. ամբողջ աշխարհը»:

Ուրեմն Պր. Պեռնար Լեվիսը նման արտայայտութիւն կատարելուց առաջ պէտք էր առաւել խորանար տուեալ հարցի էութեան մէջ: Չէ՞ որ հրապարակի վրայ կան բաւականաչափ փաստագրական նիւթեր երիտթուրքական կուսակցութեան գործիչների՝ յատկապէս Թալաաթի կողմից յղուած հեռագրերն ու հրահանգները հայերին խպառ բնաջնջելու կապակցութեամբ:

Պր. Պեռնար Լեվիսի համար հաւաստի փաստարկ կարող էր հանդիսանալ նաեւ 1919 թ. թուրքական ռազմական արտակարգ ատեանի կողմից երիտթուրքերի պարագլուխների դատավարութեան ընթացքում բերուած ծածկագիր հեռագրերը, հրահանգները, թուրք պաշտօնատար անձանց վկայութիւնները եւ վերջապէս մեղադրական եզրակացութիւնները, որոնք լիովին ապացուցում են, որ հայերի բռնագաղթն ու կոտորածները եղել են կանխամտածուած:

Հարկ է նշել, որ «Իթթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավարները իրենց յանցագործ արարքները թաքցնելու նկատառումով աշխատել են հնարաւորին չափ ոչնչացնել գրաւոր փաստերը: Զմոռանանք նաեւ, որ կոտորածին վերաբերող հրամանները մեծ մասամբ եղել են բանաւոր: Այնուհանդերձ, այդ բոլոր զգուշութիւններով հանդերձ ռազմական ատեանի ձեռքն է անցել բաւականաչափ թուով մեղադրական ապացոյցներ, որոնք ամփոփուել են 293 թղթապանակներում: Դրանց մի մասը հրապարակուել են թուրքական «Թաքուիմ-ի Վեքայի» պաշտօնական թերթի յաւելուածում եւ ըստ էութեան լիովին բաւարար են հաւաստելու հայերի ցեղասպանութիւնը:

Այդ փաստերի եւ ապացոյցների հիման վրայ ռազմական ատեանի կազմած բոլոր մեղադրական եզրակացութիւններում չեչտը դրուում է այն հարցին, որ «ընդունուած յատուկ օրէնքի համաձայն, այլ վայրեր տարագրուած հայերի քարաւանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական յանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել են»: (Տե՛ս Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) No. 3586):

Իսկ Տրապիզոնի տեղահանութեան եւ կոտորածի դատավճռում ռազմական ատեանի յանձնաժողովը պարզորոշ հասկացնում է, որ կոտորածի հրահանգները տրուել են Ստամպուլից. այսպէս՝

«Այս դատավարութեան վերջին նիստում պարզուեց եւ մենք բոլորս համոզուած ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտայղացուած են եղել ոչ թէ Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնաւոր ու խիստ կազմակերպուած»: (Takvim-i Vekayi 22 Mayis 1919 No. 3616):

Այստեղ մի քիչ յետ գնալով նշենք, որ 19-րդ դարի վերջերին Ապտուլ Համիտը հայկական հարցը խեղդելու միտումներով, իր նախաձեռնութեամբ կազմակերպեց հիմնականում քրտերից կազմուած «Համիտիէ» անկանոն զօրագնդերը, որոնց գլխաւոր նպատակներից մէկն

էր հալածել ու կոտորել հայ բնակչութեանը: Եւ այդպէս 1894-96 թթ. Սասունում եւ յարակից հայաբնակ նահանգներում, ինչպէս նաեւ Ստամպուլում տեղի ունեցան սոսկալի կոտորածներ: Իսկ երիտթուրքերը իրենց ցեղասպան ծրագիրը իրականացնելու խնդրում առաւել առաջ անցնելով Ապտուլ Համիտից, ստեղծեցին «Թեշքիլաթ-ը մահսուսէ» յատուկ կազմակերպութիւնը, որի համար բանտերից հաւաքագրեցին քրէական յանցագործներին, առաջին հերթին մարդասպաններին եւ կազմելով 50 հոգիանոց «չեթէ»ների հրոսակախմբեր, որոնք աչքից հեռու մեկուսի վայրերում յարձակւում էին անզէն ու անպաշտպան քարաւանների վրայ եւ կոտորում:

Այս է իրականութիւնը Պր. Պեռնար Լեվիս, եւ այս մասին կան հաւաստի փաստեր, որոնց թուում այդ «յատուկ կազմակերպութեան» ղեկավարը հանդիսացող կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ՝ Պեհաէտտին Շաքիրի ծածկագիր հեռագրերը:

Բերենք դրանցից մի քանիսը:

Պեհաէտտին Շաքիր պէյի Էրզրումից Անթալիայի Մութասարրիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշուած է.

«Էրզրումի, Վանի, Պիթլիսի, Տիարպէքիրի, Սվազի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորը արտաքսուել են Մուսուլի եւ Տէր Զօրի կողմերը: Իսկ դուք ի՞նչ էք անում Անթալիայում:

(Takvim-i Vekayi, 27 Nisan, 1919 No. 3540):

1915 թ. Մայիսի 4-ի թուագրութիւնը կրող, Էրզրումից «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ պէյին ուղղուած ծածկագիր հեռագրով Պեհաէտտին Շաքիրը հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրէք, այդտեղից ուղարկուող հայերին զտո՞ւմ էք, թէ՞ ոչ: Վտանգաւոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն էք յայտնել, ոչնչացնում է՞ք, թէ՞ ճամբու էք դնում»:

«Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մէջ գտնուող ծածկագիր հեռագրերից մէկում Էրզրումի վալի Մունիր պէյը յայտնում է.

«Քըզիի ճանապարհով Էրզրումից ուղարկուած հարուստ հայերի քարաւանները, յարձակման ենթարկուելով Պեհաէտտին Շաքիր պէյի կազմած հրոսակախմբերի եւ տերսիմցիների կողմից, կոտորուել են, իսկ նրանց ունեցուածքը՝ կողոպտուել»: (Takvim-i Vekayi, 13 ocak 1336 (1920) No. 3771):

Կարծում ենք այսքանը բաւական է եւ մեկնաբանութեան էլ կարիք չկայ: Միայն, որպէս եզրակացութիւն բերենք մի երկու թուրք պաշտօնատար անձանց վկայութիւնները, քանի որ դրանք շատ խօսուն են:

«Ներքին գործերի մինիստրութեան յատուկ գրասենեակի պետ Իհսան պէյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնուելիս է եղել Քիլիսի քայմաքամի

պաշտօնում, Ստամպուլից Հալէպ գործուղուած Ապտուլլահատ Նուրի պէյը յայտարարել է, որ «Տեղահանութեան հիմնական նպատակը հայերի ոչնչացումն է» եւ աւելացրել է նաեւ, որ ինքն այդ հարցով կապի մէջ մտնելով Թալաաթ պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (Թալաաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկութիւնը: (Հարցաքննութեան փաստաթղթեր էջ 15): Takvim-i Vekayi, 27 Nisan 1919 No. 3510:

Իսկ տուեալ ժամանակ կովկասեան ճակատի 3-րդ բանակի հրամանատար՝ գեներալ լեյտենանտ Վահիպ փաշան դատական ատեանին տուած իր վկայութեան մէջ ասել է.

«Հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպէս նաեւ ունեցուածքի յափշտակումն ու կողոպուտը նախապէս վճռուել է «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Պեհաէտտին Շաքիր պէյն է»:

Takvim-i Vekayi, 13 Ocak, 1920 No. 3771:

ՆՈՐ ՕՐ ԵՌՕՐԵԱՑ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՐՏ 30, 1994

ԲԱՑ ՆԱՄԱԿ LE MONDE ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի Պր. խմբագիր.

Դուք ձեր օրաթերթի Օգոստոս 3, 1994 թ. համարում հրատարակել էք Ճէյ Ուինթրրի յօդուածը՝ «Հայերի ջարդը», «Զափազանց մեծ պատերազմը»՝ խորագրի տակ:

Անշուշտ բովանդակութիւնը իրենից որոշ հետաքրքրութիւն ներկայացնում է: Այնտեղ կան հայոց մեծ եղեռնի առանձին դէպքերի նկարագրութեան կամ գնահատման վերաբերող մասնակի ճիշդ մեկնաբանութիւններ: Սակայն, միւս կողմից, ի զարմանս մեզ, տուեալ յօդուածում հանդէս են գալիս իրարամերժ եւ երկդիմի մտքեր, նոյնիսկ անճշտութիւններ: Իսկ եզրակացութիւնը բոլորովին չի համապատասխանում բովանդակութեան հետ: Բացի այդ, երբեմն չխորանալով առանձին հարցերի էութեան մէջ, տրւում են հպանցիկ եւ մակերեսային տեղեկութիւններ, որոնք կարող են շփոթութիւն առաջացնել հասարկ ընթերցողի մօտ:

Մի խօսքով հեղինակը ըստ հայկական առածի «համ նալին է խփել, համ էլ մեխին», խուսանաւելով բացայայտ ճշմարտութիւնը ասելուց:

Ուստի, առաջ քաշուած այդ հարցերին յստակութիւն մտցնելու միտումով, ստիպուած եղանք գրելու այս բաց նամակը: Նամանաւանդ, որ մեր յիշողութեան մէջ դեռեւս թարմ են այս տարուայ առաջին ամիսներին հայերի ցեղասպանութեան հարցի շուրջ ձեր մամուլում բանավէճի նիւթ դարձած արեւելագէտ Պեռնար Լեվիսի սխալ տեսակէտները ու դատողութիւնները: Ինչպէս օրինակ նրա անհիմն այն պնդումները, որ «Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում ոչ թէ ցեղասպանութիւն, այլ ուղղակի բռնագաղթ է եղել հայերի հանդէպ»: Որ «ոչ մէկ լուրջ փաստ գոյութիւն ունի Օսմանեան կառավարութեան կողմէ հայ ազգի բնաջնջումը որոշող կամ ծրագրող գործընթացի մը» եւայլն: Բնականաբար իր ժամանակին մենք անդրադարձել եւ քննադատել ենք նրա այդ սխալ տեսակէտները: (Տե՛ս «Հայ կեանք» շաբաթաթերթ, Մարտ 9, 1994: «Նոր Օր» եռօրեայ, Մարտ 30, 1994):

Եւ ահա մի նոր յօդուած Պր. Ճէյ Ուինթրրի կողմից, որտեղ հեղինակը տարակուսանք է յայտնում, ջարդերը կանխամտածուած չլինելու մասին, որ իբր դրանք արդիւնք են եղել համատարած պատերազմի սանձարձակութիւններին. այսինքն՝ թուրքական բանակի զինուորների եւ սպաների ընչաքաղցութեան ու վայրենութեան նայլն: (Հայերէն թարգմ. տե՛ս «Նոր Օր» Սեպտ. 3, 1994): Բայց աւելի նպատակայարմար է յօդուածում առաջ քաշուած հարցերին անդրադառնալ, կէտ առ կէտ, որպէսզի պատկերացումը լինի ամբողջական:

Այսպէս ուրեմն Ճէյ Ուինթրրը գրում է. «Հայերի ճակատագիրն անվիճելիօրէն պատերազմական ոճիրի հետեւանք էր». «հայերի ջարդերը դարձան ներքին թշնամու դէմ կաշառակեր ու անբանիմաց բանակի պայքարի հետեւանքը: 1915 թ. վատ վարձատրուող զինուորները եւ բանակում ծառայող քրէական տարրերը պէտք է կողոպուտի դիմէին սնունդ գտնելու համար...»: Իսկ յօդուածի վերջին մասում եզրակացնում է, «որ տեղահանութիւնն ինքնին ցեղասպանութիւն չեղաւ: Տեղահանութեան գումարուած կոյր սպանութիւններն արդէն մօտենում էին դիտման»:

Մեզ համար բոլորովին ընդունելի չէ այս մշուշապատ եւ սխալ հետեւութիւնները: Յօդուածում մի կողմից խօսւում է տեղի ունեցած կոտորածների մասին, իսկ միւս կողմից զարմանալիօրէն կասկածի տակ է առնում հայոց ցեղասպանութեան հարցը, մեկնաբանելով այն որպէս պատերազմական գործողութիւնների արդիւնք: Ուստի հարցի էութիւնը լաւ ըմբռնելու համար մենք ստիպուած ենք այստեղ շատ համառօտ տալ հետեւեալ պարզաբանումը:

1878 թ. Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը 61-րդ յօդուածով դարձաւ միջազգային բնոյթի եւ մեծ պետութիւնների դիւանագիտական շահարկման առարկայ, Օսմանեան կայսրութեան բաղաքականութիւնը հայերի հանդէպ շեշտակի փոխուեց: Եւ որպէսզի մի երկրորդ Պուլկարիա չստեղծուի Թուրքիայի արեւելեան հայկական նահանգներում, ծրագրում է բարբարոսային, դաժան եւ իր նախադէպը չունեցող ջարդերի միջոցով ոչնչացնել հայ ժողովրդին եւ դրանով մեկընդմիշտ ասպարէզից վերացնել հայկական հարցը: Այս կապակցութեամբ Վանի ռուսական փոխ հիւպատոսը 1882 թ. Մարտի 14-ին, Կ. Պոլսի դեսպան Նովիկովին զեկուցել է հետեւեալը.

«Ըստ որում առաւել բարձրաստիճան կառավարական պաշտօնեաները բացէիբաց արտայայտւում են, թէ իբր այստեղ երկրորդ Պուլկարիա է պատրաստւում եւ որ իրենք, փորձից դաս առած, կը կարողանան խեղդել իրենց կառավարութեանը վնասակար տարրին եւ, այդպիսով, «հայկական հարցին» վերջ կը տան մէկընդմիշտ»: (Տե՛ս հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 17):

Եւ իզուր չէ, որ Գերմանիայի կայսեր հետ ունեցած հանդիպման ժամանակ Ապտուլ Համիտը բացայայտօրէն ասել է, «Ես աւելի կը նախընտրեմ մեռնել, քան թէ

Անատոլիայի արեւելքում ինքնավարութեան տանող բարեփոխումներ անցկացնել» (տե՛ս Zuhuri Danisman, Osmanli Imparatorluğu tarihi, C. XIII, Sultan ikinci Abdul Hamid han, Istanbul, 1966, s. 145):

Այդ նոյն թուականին Օսմանեան կայսրութեան մեծ վեզիր հայատեաց Քեամիլ փաշան բացայայտ յայտարարում էր «հայ ազգը

վերացնելու եւ բնաջնջելու մասին», եւ նրա այդ նենգ մտայղացումը իրօք որ դարձաւ արեւմտահայութեան բնաջնջման հարցում թուրքական պետական քաղաքականութեան առանցքը:

Եւ այդպէս սկսուեց հայկական հալածանքներն ու կոտորածները: Իսկ 1894-96 թուականներին Սասունում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները ցնցեցին ամբողջ աշխարհը: Այդ ողբերգական դէպքերին զոհ գնացին 300,000 հայորդիներ, որոնց 100-ամեայ տարելիցը լրանում է այս օրերին:

Պատուլ Համիտեան, այդ հայահալած քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ 1908 թ. երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ: Այո՛ փոխուեց երկրի վարչակարգը, ղեկավարութիւնը, բայց ծրագրուած քաղաքական կուրսը չփոխուեց հայերի հանդէպ: Փաստերը ցոյց են տալիս, որ հայերի, ինչպէս նաեւ միւս ազգութիւններին ճնշելու քաղաքականութիւնը որդեգրուեց երիտթուրքերի իշխանութեան օրօք եւս: Այդ է վկայում 1911 թ. Հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցած իթթիհատիստների համագումարի հետեւեալ որոշումը. «վաղ թէ ուշ պէտք է իրագործուի Թուրքիայի բոլոր հպատակների օթթոմանացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեմ չի կատարուի համոզելով, այլ պէտք է իրականացուի զէնքի ուժով»: (J. Lepsius, Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1930, s. 222):

Պատերազմը ուղղակի պատեհ առիթ հանդիսացաւ իրականացնելու դեռեւս Պատուլ Համիտի օրօք մշակուած ծրագիրը արեւմտահայութեան բնաջնջման խնդրում:

Եւ եթէ ուշադրութիւն դարձնէք կը տեսնէք, որ այս վերջին տասնամեակների ընթացքում նոյն յանցագործ արարքները գործադրւում են միւրտ ժողովուրդի հանդէպ: Այսօր միւրտ ժողովուրդը արդարացի պայքար է մղում իր ազգային իրաւունքների եւ ինքնորոշման համար: Մինչդեռ զինուորական դաժան ճնշումներով բռնաբարւում են քրտերի մարդկային իրաւունքները:

Այնպէս որ միամտութիւն է եզրակացնել, որ «հայերի ջարդերը դարձան ներքին թշնամու դէմ կաշառակեր ու անբանիմաց բանակի պայքարի հետեւանքը: 1915 թ. վատ վարձատրուող զինուորները եւ բանակում ծառայող քրէական տարրերը պէտք է կողոպուտի դիմէին սնունդ գտնելու համար»:

Հայերի կոտորածները կապելով պատերազմական յանցանքի հետ Ճէյ Ուինքրը կատարում է իր յաջորդ սխալ դատողութիւնը, կասկածի տակ դնելով կոտորածների կանխամտածուածութեան հարցը: Այսպէս, գրում է նա. «Քիչ հաւանական է, որ հայերի բնաջնջման ստոյգ հրաման տրուած լինէր Թուրքիան ղեկավարող եռապետութեան կողմից, որ կազմում էին ներքգործնախարար Թալեաթ պէյը, ռազմական նախարար Էնվէր փաշան եւ ռազմական նաւատորմի նախարար Ճեմալ փաշան»: «Այդ տեղահանութիւնը ցեղասպանութեան վնիռ չէր, թէեւ դա մահուան հոմանիշն էր»:

Իրականում գոյութիւն ունեցող հաւաստի փաստերը, այն էլ թուրքական աղբիւրները, ճիշդ հակառակն են վկայում:

Այսպէս 1919 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած երիտթուրքական կուսակցութեան ղեկավար գործիչների դատավարութեան ընթացքում բերուած մեղադրական եզրակացութեան մէջ շատ պարզ ասուած է.

«Առկայ ապացոյցներն ու բոլոր փաստաթղթերն ցոյց են տալիս, որ այդ հրոսակախմբերը (խօսքը «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի, հայերին կոտորելու նպատակով կազմակերպուած «յատուկ կազմակերպութեան» մասին է,- Ա.Փ.) ստեղծուած էին տեղահանուած հայերի բարաւանները կոտորելու եւ ոչնչացնելու նպատակով: Լիովին ապացուցուած է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվէր եւ Ճեմալ պէյերի անմիջական հրամաններով եւ գիտութեամբ (գործ 11): (Takvim-i Vekayi, 27 Nisan, 1919, No. 3540):

Իսկ բռնագաղթի ընթացքում Էտիրնէի հայութեան մի մասը երբ դիմում է նահանգապետին, որպէսզի կանխուի իրենց տեղահանութիւնը, նահանգապետը պատասխանում է. *«Ես գիտեմ, որ դուք լաւ մարդիկ էք, բայց հրամանը խիստ է եւ վերաբերում է բոլորին»*:

Այնպէս որ ընդունուած բոլոր մեղադրական եզրակացութիւններում, ռազմական արտակարգ ատեանի յանձնաժողովները շեշտը դնում են արեւմտահայութեան կոտորածների եւ ունեցուածքի կողոպտման մանրամասնութիւնների վրայ: Լիովին բացայայտւում է, որ կոտորածները կանխամտածուած բնոյթ են ունեցել, կազմակերպուել են կուսակցութեան կեդրոնական կոմիտէի կողմից եւ անմիջականօրէն իրականացուել են «քեշքիլաթ-ը մահսուսէ»-ի արիւնոտ ձեռքերով:

Այդ են վկայում նաեւ Թալեաթի կողմից 1915-16 թթ. առաքուած բազմաթիւ հեռագրերը հայերին ամբողջ Օսմանեան կայսրութիւնում բնաջնջելու մասին. «Որ թուրքական հողի վրայ ապրելու ու աշխատելու հայերի բոլոր իրաւունքները լրիւ վերացուած են եւ համաձայն դրա կառավարութիւնն իր վրայ է վերցնում ողջ պատասխանատուութիւնը, կարգադրելով չխնայել նոյնիսկ ծծկեր երեխաներին...»: (The memoirs of Naim Bey. Turkish official documents relating to the deportations and massacres of the Armenians, London, 1920, p. 15-16):

Ցօդուածի մի քանի տեղերում կասկածի տակ է առնում հայերի ցեղասպանութեան հարցը եւ նոյնիսկ ժխտում է այն: Իսկ վերջում անդրադառնալով «ողջակիզում» տերմինին, փորձ է կատարում ինչ-որ տարբերութիւն դնել երէկան եւ հայկական ողբերգութեան միջեւ: Նախ եկէք նայենք «ցեղասպանութիւն» տերմինի բացատրութեան, թէ որքանով է այն համապատասխանում հայերի ողբերգական նկատագրի հետ եւ որքանով ճէյ Ուինքրը իրաւունք ունի նման արտայայտութիւն կատարելու:

Նախ նշենք, որ «ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու

եւ պատժելու» որոշումը յատուկ կոնվենցիայով ընդունուել է ՄԱԿ-ի կողմից 1948 թ. Դեկտեմբերի 9-ին: Եւ որպէս մարդկութեան դէմ ուղղուած մի յանցագործութիւն, վաղեմութեան ժամկէտ չունի:

«Ցեղասպանութիւն» տերմինի բացատրութիւնը, ի թիւս համաշխարհային մի շարք լեզուներով հանրագիտարաններում տրուած համանման իմաստին, բաւականին յաջող է բնորոշում 1987 թ. Մոսկուայում հրատարակուած «ինչը ի՞նչ է համաշխարհային քաղաքականութեան մէջ» գրքի 91-րդ էջում, որտեղ ասուած է.

«Ցեղասպանութիւն. գործողութիւններ, որոնք կատարւում են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրօնական որեւէ խումբ, որպէս այդպիսին, լրիւ կամ մասնակիօրէն ոչնչացնելու մտադրութեամբ, իրական ծանրագոյն յանցագործութիւն: Որպէս ցեղասպանութիւն են որակաւորւում հետեւեալ գործողութիւնները. նման մի խմբի անդամների սպանութիւնը. նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասուածքներ կամ խանգարումներ պատճառելը. որեւէ խմբի համար կանխամտածուած այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք յանգեցնելու են նրա լրիւ կամ մասնակի ոչնչացմանը, միջոցներ, որոնց նպատակն է կանխել ծննդարերութիւնը նման մի խմբի միջավայրում, երեխաների բռնի յանձնումը մարդկային մի խմբից միւսին»:

Բացատրութեան վերջում նշուած է նաեւ, որ «ցեղասպանութեան դասական» օրինակ է հանդիսանում մէկուկէս միլիոն հայերի բնաջնջումը Օսմանեան կայսրութեան իշխանութիւնների կողմից, որոնք օգտուեցին Առաջին Համաշխարհային Պատերազմի իրադրութիւնից»:

Բնականաբար հեղինակի այս բնորոշումը հիմնուած է համաշխարհային գրականութեան մէջ գոյութիւն ունեցող փաստերի եւ ապացոյցների վրայ:

Եւ իրօք որ այն ինչ տեղի ունեցաւ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում հայերի հետ, լիովին համընկնում է այս բնորոշման ոգուն: Այնպէս որ զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «իթթիհատ վէ թերաքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը իսպառ բնաջնջելու ճանապարհը: Եւ պատերազմը ամենապատեհ առիթը հանդիսացաւ գործադրելու իրենց այդ նենգ ծրագիրը:

Աւելորդ է ասել, որ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում ողբերգութեան զոհ գնացին նաեւ հրեաները: Նպատակն ու ծրագիրը նոյնն էին, մեթոդը տարբեր:

Եթէ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում «այլ վայրեր տարագրուած հայերի բարեւանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած բրէական յանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել են» (տես Takvim-i Vekayi, 21 Haziran, 1919, No. 3586), ապա Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում նոյնպէս կազմակերպուած ձեւով բնաջնջել են հրեաներին կազախցիկներում: Այո՛ սպանդը եղել է տարբեր ձեւերով բայց նպատակը եղել է նոյնը՝ ոչընչացնել մարդկանց: Այնպէս որ երկու դէպքում էլ տեղի է ունեցել ցեղասպանութիւն:

Ուստի, հարկ է նշել, որ Ճէյ Ուինթըրի հայերի ցեղասպանութեան մասին տուած մեկնութիւնը անհիմն է եւ սխալ:

Ինչպէս վերեւում նշեցինք յօդուածում շօշափւում են նաեւ այնպիսի հարցեր, որոնց մասին, մեր կարծիքով, հասարակ ընթերցողը կարող է թերի եւ սխալ պատկերացում կազմել: Օրինակ յօդուածագիրը գրում է, որ «Օսմանեան բրէական օրէնսգրքի 45-րդ ու 180-րդ յօդուածների եւ զինուորական բրէական օրէնսգրքի 171-րդ յօդուածի համաձայն, մեղադրեալներից մէկը դատապարտուեց մահուան, որն ի կատար ածուեց 1919 Ապրիլին՝ ջարդերն սկսելուց 4 տարի անց»:

Այս մասին աւելի ստոյգ տեղեկութիւնը կայանում է հետեւեալում:

Ռազմական արտակարգ ատեանը 1919 թ. Յուլիսի 5-ի դատավճռով հեռակայ կարգով մահուան դատապարտեց հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպող երիտթուրքական կուսակցութեան պարագլուխներին՝ Թալեաթին, Ճեմալին, Էնվէրին, դոկտ. Նազիմին, իսկ միւս մեղադրեալներին 10-15 տարիների աքսորի եւ բանտարկութեան: Այլ դատավճիռներով մահուան դատապարտուեցին նաեւ Բեհաէտտին Շաքիրը, Ջեմալ Ազմին, Նայիլ պէյը: Իսկ Ճէյ Ուինթըրը նկատի ունի Բողազլեանի քայմամամ եւ Նոզդաթի մութասարիֆլի տեղակալ Քեմալ պէյին, որը հայութեանը կոտորելու յանցանքով կախաղան բարձրացուեց 1919 թ. Ապրիլի 11-ին Կ. Պոլսի Պայազիտի հրապարակում: Նշենք նաեւ, որ բրէական օրէնսգրքի յօդուածներով կայացուած մահուան դատավճիռները հիմնւում էին կանխամտածուած սպանութիւններ կատարելու յանցանքի վրայ:

Իսկ ինչ վերաբերում է հայերի ռուսների հետ համագործակցելու խնդրին, կարծում ենք, որ յօդուածագիրը չպէտք է որ այդքան միամիտ լինէր ու հաւատք ընծայէր դրան ամբողջ խորութեամբ: «1914 թ. պատերազմի սանձազերծումը,- գրում է Ճէյ Ուինթըրը,- կարծես թէ արդարացրեց թուրքերի երկիւղները: Իրօք, հայկական կազմաւորումները ռուսների հետ կողք կողքի կուում էին Կովկասում եւ սպառնալիք ստեղծում թուրքերի նակատային գծերի թիկունքում»:

Զնայած այստեղ եւ ընդհանրապէս թուրքական աշխատութիւններում շատ է չափազանցւում հայերի համագործակցումը ռուսական բանակի հետ: Այնուհանդերձ, եթէ հայերը սահմանամերձ գօտում կարող էին ինչ-որ չափով վտանգ սպառնալ, ուրեմն պէտք է տեղահանուէին կամ պատժուէին այդ յանցանքի մէջ կասկածելի թուացող անձերը: Մինչդեռ, իրականութիւնը այն է, որ բռնագաղթուեց եւ բնաջնջուեց ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքով մէկ հայութիւնը, որ ոչ մի առնչութիւն չունէր ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ:

Նամակը վերջացնելուց առաջ նշենք նաեւ, որ հայոց եղեռնի մասին խօսելիս շատերը յանախ զանց են առնում մի շատ կարեւոր հարց. այն է, որ նկատի չեն առնում, որ հայերը հազարամեակներից ի վեր ապրում էին իրենց բնօրրանը հանդիսացող հայրենիքում, որտեղ դարերի ընթացքում մշակել էին իրենց պապենական հողերը, կառուցել տուն-տեղ, եկեղեցիներ, վանքեր, յուշարձաններ եւ կերտել համաշխարհային քաղաքակրթութեան արժանի մշակոյթ եւ գրականութիւն:

Եւ տարօրինակ չէ, որ այս հեղինակը եւս առանց Հայաստան աշխարհագրական անուանումը օգտագործելու գրում է. «Շուրջ 2 միլիոն մարդուց բաղկացած հայ համայնքները կենտրոնացուած էին Անատոլիայի հիւսիս-արեւելքում, Ռուսաստանի սահմանի մօտ, սակայն հայեր կային նաեւ Օսմանեան կայսրութեան միւս մասերում»:

Յարգելի Պր. Խմբագիր, առայժմ բաւարարուենք այսքանով, քանի որ նամակի շրջանակներում հնարաւոր չէ սրանից աւելի ընդարձակուել:

ՆՈՐ ՕՐ ԵՌՕՐԵԱՅ, ՀՈՐԵՔՇԱԲԹԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 14, 1994

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ՝

ԹԱՆԷՐ ԱԲՋԱՄԻՆ

Ձեր մասին հայկական մամուլը յաճախակի տեղեկութիւններ սկսեց տալ յատկապէս 1995 թ. Ապրիլին, հայերի ցեղասպանութեան 80-ամեայ տարելիցի առթիւ Երեւանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովից յետոյ: Բնականաբար ձեր մեկնութիւններն ու գնահատականները հայերի ցեղասպանութեան եւ ընդհանրապէս հայ-թուրքական յարաբերութիւնների մասին խորը հետաքրքրութիւն առաջացրին ինձ մօտ, այնպէս որ ես ուշիուշով կարդում էի ձեր յետագայ հարցազրոյցներն ու ելոյթները հայկական եւ թուրքական մամուլներում:

Առաջին հերթին գնահատանքի արժանի է ձեր կողմից հայոց մեծ եղեռնի իրողութեան ընդունումը: Եւ այդ կապակցութեամբ դուք ծրագրել էք զբաղուելու 1919-1920 թթ. Ստամպուլում տեղի ունեցած Երիտթուրք յանցագործների դատավարութեան հարցերով:

Ըստ իս, այդ նիւթերի հրապարակումը Թուրքիայում խիստ կարեւոր նշանակութիւն կունենայ, քանի որ առ այսօր այն գաղտնի է պահուել թուրք ժողովրդից: Իսկ այնտեղ բերւում են հաւաստի ապացոյցներ՝ հեռագրեր, նամակներ, մեղադրական ապացոյցներ, վճիռներ եւայլն, որոնք լիովին հաստատում են, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում այլ վայրեր տարագրուած հայերի կարաւանները ոչնչացուել են ճանապարհներին՝ «Իթթիհատ վէ Թերաքքի» կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական յանցագործ հրոսակախմբերի՝ «Թեշքիլաթ-ը մահսուսէ»ի (յատուկ կազմակերպութիւն) կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել են:

Իմիջիայլոց նշեմ, որ արեւմտահայութեան զանգուածային տեղահանութեան ու ջարդերին առնչուող այդ դատավարութեան նիւթերը մենք թարգմանել ենք հայերէն եւ առաջաբանով ու ծանօթագրութիւններով հրատարակել Երեւանում 1988 թ. հետեւեալ խորագրով. «Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի»: Յետագայում այն թարգմանուեց անգլերէն եւ արաբերէն լեզուներով:

Ուրեմն ձեր կողմից այդ թեմայի բարձրացման երկրորդ կարեւոր նշանակութիւնը կը լինի այն, որ դուք առաւել հնարաւորութիւն կունենաք

նոր նիւթերով հարստացնելու այն։ Բանը նրանումն է, որ վերոյիշեալ աշխատանքը կատարելու ընթացքում մեր ձեռքի տակ չենք ունեցել Եոզղաթի, Խարբերդի, Տրապիզոնի, Պիւլուքտէրէի հայերի կոտորածներին վերաբերող դատական նիստերի արձանագրութիւնները։ Մենք հրապարակել ենք միմիայն դրանց դատավճիռները։ Ցայտնի է, որ միայն Եոզղաթի դատավարութիւնը ունեցել է 17 նիստեր։ Բնականաբար հարցաքննութեան արձանագրութիւնները, ականատեսների վկայութիւնները եւ փաստագրական այլ նիւթերը նոր լոյս կը սփռէին հայերի ցեղասպանութեան մասին։

Մի խօսքով յաջողութիւն եմ մաղթում ձեր կողմից ձեռնարկուող այդ դժուարին աշխատանքին։ Դժուարին եմ ասում, որովհետեւ խոչընդոտներ կը լինեն անպայման։ Արդէն մամուլից տեղեկացանք, թէ ինչպէս 1995 թ. Նոյեմբերի 1-ին, Անքարայի Հաճի Թէփէ պետական համալսարանի դասախօսական կազմը որոշում էր կայացրել «պոյքոթի» ենթարկել ձեր դասախօսութիւնը, դիտումնաւոր բացակայելու մտադրութեամբ։

Գոհունակութեամբ պէտք է նշել, որ «Միլլիյէթ» թերթի լրագրող՝ Շահին Ալփայի, ինչպէս նաեւ Երեւանում հրատարակուող «Ազգ» թերթի մեկնաբան Մուրատ Բոլոյեանի հետ ունեցած ձեր հարցազրոյցներում դուք շօշափում էք ուշադրութեան արժանի հարցեր, որոնցից մի քանիսի վրայ կը ցանկանայի անդրադառնալ։ Օրինակ, դուք ակնարկում էք, որ «Ցեղասպանութեան ճանաչման ճանապարհին գլխաւոր արգելքը ոչ թէ պետութիւնն է, այլ հասարակութիւնում խորը արմատներ գցած թշնամանքը հայերի հանդէպ, ինչը օգտագործւում է նաեւ պետութեան կողմից։ Մէկը սնուցում է միւսին։ Հետեւաբար, մեր պարտականութիւնն է նպաստել նման հանրային կարծիքի ձեւաւորմանը»։ Իսկ մի այլ տեղ նշում էք, որ «Այդ հաւասարակշռութիւնը շատ լարուած է, որ Թուրքիոյ մէջ ուրուսուն տարիէ ի վեր քնաւ չի խօսուիր այն անիրաւութիւններու մասին, որոնք կատարուած են այդ հաւասարակշռութեան դէմ»։

Այո՛, 80 տարիների ընթացքում այնքան հակահայկական ոգով շարադրուած եւ հայ ժողովրդի պատմութեան խեղաթիւրման միտումներով այնպիսի գրքեր, յօդուածներ են լոյս տեսել Թուրքիայում, որոնք բնական է խորը ազդեցութիւն պէտք է ունենային ժողովրդի վրայ հայերի հանդէպ ոխակալութեամբ լցուելու ուղղութեամբ։ Թուրք ժողովրդին ապակողմնորոշելու եւ հայերի հանդէպ ատելութիւն սերմանելու խնդրում մեծ դեր են խաղացել նաեւ պետական բարձրաստիճան գործիչների ծաւալած հակահայկական քարոզչութիւնը։ Բերենք մի երկու օրինակ։ Ես նկատի ունեմ Թուրքիայի նախկին նախագահ՝ Թուրկութ Իօզալին, որը 1993 թ. Ապրիլին իր մահուանից մէկ շաբաթ առաջ սպառնալով ասաց, որ «Հայաստանը դեռեւս դաս չի վերցրել Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում Թուրքիայի կողմից նրան հասցուած պատժամիջոցից»։ Իսկ վարչապետ Թանսու Չիլլէրը մի հարցազրոյցի ընթացքում յայտարարեց, որ «Հայերը ոչ մէկ ձեւով չեն ենթարկուել ցեղասպանութեան։ Հետեւաբար, Թուրքիան կամ

թուրքերը չեն կարող մեղադրուել մի բանում, որը տեղի չի ունեցել»։

Այսօր երկու երկրների յարաբերութիւնների բարելաւման ուղղութեամբ բաւականին աշխատանքներ են տարւում, բայց միւս կողմից զարմանալիօրէն մոլեգնաբար շարունակւում են խեղաթիւրուած եւ կեղծիքներով գրքեր լոյս տեսնել եւ բազմասերիանոց հեռուստատեսային հաղորդումներ ցուցադրուել Թուրքիայում։ Արդի սերունդը հայութեան հանդէպ կարծիք է կազմում նման քարոզչութեան ազդեցութեան տակ։ Բանը նրանումն է, որ անցեալի մի շարք թուրք հանրայայտ մտաւորականների եւ գործիչների որոշ առումով առարկայական գնահատականները բոլորովին անտեսւում են այսօրուայ պատմաբանների կողմից։ Օր. ներկայ սերունդը գիտէ՞ արդեօք, որ 1915 թ. այդ եղեռնային օրերին մի շարք թուրք գործիչներ, նահանգային պաշտօնեաներ դէմ են եղել հայերի տեղահանութեանն ու կոտորածներին եւ պաշտօնազրկուել են իրենց այդ յանդուգն արարքի համար եւ նոյնիսկ մահուան դատապարտուել։ Հաւանաբար չգիտի նաեւ, որ հայերի կոտորածների անմիջական յանցագործ Թալեաթը նոյնիսկ խոստովանել է իր չարաենգ արարքի մասին, ասելով. «Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի եւ ես գիտեմ, որ կը մեռնեմ դրա համար»։

Ըստ արժանւոյն գնահատելով ձեր առաջարկը հայ-թուրքական յարաբերութիւնների բարելաւման եւ ցեղասպանութեան հարցում երկխօսութեան անհրաժեշտութեան, ես ունեմ նաեւ մի քանի դիտողութիւններ ձեր հարցազրոյցներում արտայայտուած քրտական խնդրի շուրջ։ Դուք նշում էք, որ «Քրտերի դէպքում գործը ցեղասպանութեան չի հասնի»։

Մեր կարծիքով քրտերի նկատմամբ արդէն ցեղասպանութիւն է կատարւում Թուրքիայում։ Այս քանիերորդ անգամն է, որ թուրքական կանոնաւոր զօրքերը աշխարհի հզօր պետութիւնների աչքի առաջ ներխուժելով Իրաքի հողատարածքը սպանդ են կազմակերպում, իսկ բուն Թուրքիայում այս վերջին տարիներին նոյն հալածանքները կատարելուց բացի հողին են հաւասարեցնում քրտական գիւղերն ու բնակավայրերը։ Բացի այդ, դուք կանգ առնելով հայերի եւ հրեաների նկատմամբ գործադրուած ցեղասպանութեան տարբերութեան վրայ նշում էք, որ հրեաների դէպքում ցեղասպանութիւնը իրականացրել է պետութիւնը, որ Գերմանիայի ժողովուրդը անմիջական մասնակցութիւն չի ունեցել։ Իսկ հայերի դէպքում անմիջականօրէն մասնակցել են ժողովրդական զանգուածները։ Մի դէպքում թալանելով եւ սպաննելով, միւս դէպքում սահմանափակ՝ փրկելով հայերի կեանքը։

Իմ կարծիքս հետեւեալն է այս խնդրի մասին։ Հայերի ցեղասպանութիւնը նոյնպէս իրականացուել է պետականօրէն կանխամտածուած ծրագրով եւ այն գործադրուել է երիտթուրքերի կառավարութեան կողմից ստեղծուած «յատուկ կազմակերպութեան» Թէշքիլաթ-ը Մահսուսէի հրոսակախմբերի կողմից։ Իսկ թուրք ժողովրդի ոխակալութիւնը հայերի հանդէպ այսօրուայ պէս ծայրայեղ չի եղել։ Ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլեւ, ինչպէս վերեւում նշեցինք

մի շարք թուրք պետական պաշտօնեաներ դէմ են եղել հայերի կոտորածներին։ Նոյնիսկ մինչեւ կառավարութեան «յատուկ հրաման» հրապարակելը պատսպարել են հայերին իրենց տներում։ Բայց ես ուզում եմ ձեր ուշադրութիւնը բեւեռել մի այլ, առաւել կարեւոր հարցի վրայ։ Եթէ խօսւում է այդ ցեղասպանութեան տարբերութեան մասին, ապա առաջին հերթին շեշտը պէտք է դրուէր այն բանի վրայ, որ հայ ժողովուրդը հազարամեակներից ի վեր ապրում է իր հայրենիքում, եւ թուրքական կառավարող շրջանները բնաջնջելով հայերին մէկ նպատակ ունէին, տիրել եւ իւրացնել հայերի պատմական հայրենիքը հանդիսացող տարածքը։

«Միլլիյէթ» թերթում ձեր ունեցած հարցազրոյցում հայերին բնաջնջելու խնդրին անդրադառնալիս նշում էք, որ «միայն պէտք է ընդգծել թէ այս որոշումը Օսմանեան կառավարութեան որոշումը չէր, այլ «իթթիհատ վէ թերաքքի» կուսակցութեան որոշումն էր»։ Ես համաձայն չեմ այս տարանջատմանը, քանի որ կառավարութիւնը գտնւում էր նրանց ձեռքին։ Բացի այդ, հայերի հալածանքների եւ կոտորածների մասին խօսելիս, պէտք է նկատի ունենալ, որ այն սկսուեց յատկապէս 1878 թ. Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը 61-րդ յօդուածով ընդունեց միջազգային բնոյթ։ Եւ այն մէկընդմիշտ ասպարէզից վերացնելու համար ծրագրուեց հալածանքների եւ ջարդերի միջոցով ոչնչացնել հայ ժողովրդին։ Այն պարբերաբար իրականացուեց 1894-1896 թթ., 1909 թ., 1915-16 թթ., ինչպէս նաեւ 1919-1922 թթ., հետեւանքը եղաւ այն, որ Հայաստանը հայաթափուեց իր բնիկ ժողովրդից։

Անկեղծ ասած ես համաձայն չեմ նաեւ «Միլլիյէթ» թերթում արտայայտուած ձեր հետեւեալ մտքի հետ եւս. «Այլեւս Սեւրի եւ Լոզանի պատմութիւնը պէտք է փակենք որպէս սահմանագիծերու պատմութիւն...։ Պէտք է այլեւս պատմութեան էջերը փակել իբրեւ հողային կռիւներու պատմութիւն եւ զանոնք պէտք է բանալ իբրեւ մարդկային իրաւունքներու պատմութիւն»։

Ստացւում է այնպէս, որ սփիւռքահայութիւնը առյաւէտ դատապարտուած է անհայրենիք թափառական կեանքի։ Որքան որ դժուար լինի ճանապարհը, հայ ժողովուրդը երբեք չի կարող հրաժարուել իր բիւրաւոր անմեղ զոհերի արեան հատուցումից, ինչպէս նաեւ հողային արդար պահանջատիրութիւնից։

Մտորումներ «Զաման» Թերթի Հարցազրոյցի Մասին

Օրերս «Ասպարէզ» օրաթերթի (Դեկտեմբեր 24, 1994) համարում մեր ուշադրութիւնը գրաւեց «Ահաբեկչութիւն եւ Հայկական Դպրեվանքեր» վերնագիրը կրող յօդուածը, որտեղ արդի թուրք պատմաբանների եւ դասախօսների կողմից կատարուել էր հայ ժողովրդի պատմութեան 19րդ դարի վերջի շրջանում տեղի ունեցած դէպքերի բացայայտ աղաւաղման եւ խեղաթիւրման հերթական փորձ։ Որպէսզի լաւ պատկերացնենք հարցի էութիւնը, բերենք մի երկու հատուած այդ յօդուածից։

«Թուրքական "Զաման" թերթը, 19 Նոյեմբերի իր թիւին մէջ, իբրեւ թէ հետազօտութիւն մը կատարած է (Անգարայի եւ Էրզրումի համալսարաններու) թուրք դասախօսներու ով, որոնք հաստատած են թէ հայկական ահաբեկչութիւնը 120 տարի առաջ սկսած է եւ անոր հիմերն ալ սերմանուած են դպրեվանքերու մէջ...։

Այս դպրեվանքերուն մէջ հասած երիտասարդները, դաշնակ, հընչակ, ռամկավար եւ *վերակէօղ* (նկատի ունի 1898 թ. ձեւաւորուած «վերակազմեալ հնչակեաններին»,- Ա. Փ.) կոչուած հայկական հրոսակախումբերուն գլուխը անցնելով տարիներ ամբողջ ոճրային ծուղակներ լարած են եւ այս ծրագիրները զարգացուցած են ռուսերուն ալ օժանդակութեամբ»։

Ընդհանուր առմամբ նշենք, որ հայ ժողովրդի պատմութեան վերաբերող նման հետազօտական հարցազրոյցներ յաճախակի են կազմակերպուում Թուրքիայում, յատկապէս Ապրիլին նախորդող ամիսներին եւ օրերին յատուկ քարոզչական նպատակներով։ Զարմանալին այն է, որ այդ քննարկումների ընթացքում չօշափւում է հարցի միայն մէկ կողմը, իսկ միւս կողմը մնում է խաւարի մէջ՝ վարագոյրի ետեւում, այսինքն՝ թուրք ժողովրդից թաքցուում է իրական եղելութիւնը։

Տուեալ դէպքում բանը նրանում է, որ «ահաբեկիչ հրոսակախմբեր» անուանումով կատարելապէս սխալ եւ վարկաբեկիչ պիտակ են ուզում փակցնել արեւմտեան Հայաստանում ծաւալուած հայրենակցային-ֆիդայական շարժմանը։

Յայտնի է, որ 19րդ դարի վերջին քառորդում Ապտուլ Համիտեան հայահալած քաղաքականութեան դէմ պայքարելու համար արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերում բուռն կերպով ուժեղացաւ ֆիդայական շարժումը։ Ֆիդայիները հայ ժողովրդի ծոցից դուրս եկած եւ նրա տարբերական շահերը պաշտ-

պանող մարտիկներ էին: Նրանք պայքարում էին բռնակալական վարչակարգի դէմ, որպէսզի կեանքի կոչուեն բարենորոգումների խնդրում բարձրագոյն դրան ստանձնած պարտաւորութիւնները: Իսկ 1894-96 թթ. Սասունում եւ այլուր տեղի ունեցած բարբարոսային կոտորածների ընթացքում «Հընչակ» եւ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնների գլխաւորութեամբ նրանք ընդգրկուեցին արեւմտեան Հայաստանի մի շարք շրջաններում տեղի ունեցած բնակչութեան ինքնապաշտպանութեան գոյամարտերին: Բնականաբար մեծ էր նրանց դերը հայ ժողովրդի ազգային ազատագրութեան պայքարը կազմակերպելու վեհ գործում, քանի որ անհաւասար մարտերում անձնազոհաբար պայքարում էին թօթափել Թուրքական դարաւոր ծանր լուծը: Նշենք նաեւ, որ հայ ֆիդայիները օսմանեան կայսրութիւնում ապրող Թուրք, քիւրտ եւ այլ ժողովրդների նկատմամբ ոչ մի անգամ թշնամանք չեն տածել: Նրանց պայքարի թիրախը եղել է բռնատիրութիւնը, այսինքն՝ հայ չինականին հարստահարող, նրա պատիւն ու ինքնասիրութիւնը բռնաբարող, հողն ու ունեցուածքը յափշտակող Թուրք կաշառակեր պետական պաշտօնեաներն ու աղաները, դաժանաբարոյ ցեղապետներն ու աշիրաթապետները, անօրէն հարկահաւաքները:

Ինչ խօսք, որ տուեալ ժամանակ սուլթանական բռնակալութեան դէմ ծաւալուած հայ ֆիդայական շարժումը օրինաչափ երեւոյթ էր, քանի որ իրաքանչիւր ժողովուրդ միշտ էլ ձգտում է ազատ ու անկախ ապրել իր հայրենի երկրում: Օրինաչափ եւ արդարացի է նաեւ մեր օրերում ծաւալուած Արցախի ազատագրութեան պայքարը: Այնպէս որ Թուրք դասախօսների կողմից հայ ֆիդայիներին «Ահարեկիչ հրոսակախմբեր» պիտակաւորումը միանգամայն սխալ է եւ անընդունելի:

Բայց, իրականութեան մէջ օսմանեան կայսրութիւնում հրոսակախմբեր եղել են, այն էլ պետական մակարդակով կազմակերպուած, որոնք տեւապէս ահ ու սարսափի են մատնել հայ ժողովրդին: Լաւ կը լինէր, որ Թուրք դասախօսները անդրադառնային նաեւ նրանց գործունէութեանը:

Այսպէս՝ 1891 թ. Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ եւ իր մականունով կազմակերպուեցին «Համիտիէ» կոչուած անկանոն հեծելազնդերը, ակնի ճիշդ հրոսակախմբերը, որոնց գլխաւոր նպատակն էր հալածել ու կոտորել հայ բնակչութեանը, աւերել ու հրդեհել հայերի բնակավայրերն ու սրբատեղիները: Իսկ միւս ահարեկիչ հրոսակախմբերը արեւմտահայերին իսպառ բնաջնջելու նպատակով կեանքի կոչուեցին 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնի նախաշեմին, այն էլ Երիտթուրքերի կառավարութեան եւ «Իթթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխների գաղտնի նիստերում: Այն կոչւում էր «Թեշքիլաթը մահսուսէ» (յատուկ կազմակերպութիւն) որի նախագահն էր յիշեալ կուսակցութեան

կենդրոնական կոմիտէի անդամ Պէհաէտտին Շաքիրը:

Հաւաստի վաւերագրերը ցոյց են տալիս, որ «Թեշքիլաթը մահսուսէ»ն բանտերից հաւաքագրել է քրէական յանցագործներին, առաջին հերթին մարդասպաններին եւ ստեղծել «չեթէների» հրոսակախմբեր իւրաքանչիւրը 50 հոգուց բաղկացած, որոնք աչքից հեռու մեկուսի վայրերում յարձակւում էին անզէն ու անպաշտպան տեղահանուած հայերի քարաւանների վրայ եւ կոտորում, չխնայելով հիւանդներին, ծերերին եւ երեխաներին: Այս կապակցութեամբ Խարբերդի հայութեան տեղահանութեան եւ կոտորածի 1920 թ. Յունուարի 13ին ընդունուած դատավճռում շատ պարզորոշ նշուած է. «Մեղադրեալ Պէհաէտտին Շաքիր պէյը, որպէս "Թեշքիլաթը մահսուսէ"ի նախագահ, Ստամպուլից դուրս գալով սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի եւ այլ վիլայէթներում: Միեւնոյն ժամանակ բանտերից դուրս բերուած ոճրագործներից եւ այլ յանցագործներից կազմուած հրոսակախմբերի գլուխն անցնելով, տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում կոտորել է տեղահանուած հայերին եւ նրանց ունեցուածքը ենթարկել կողոպուտի»: (Տե՛ս Թաքվիմի վեքայի, (Թուրքական պաշտօնական թերթ), Յունուար 13, 1920, թիւ 3771):

Կարծում ենք այսքանը բաւական է ընկալելու համար, թէ իրականում ովքեր էին ահարեկիչ հրոսակախմբերը եւ ում դէմ էին պայքարում դրանք:

«ԱՍՊԱՐԷԶ», ՈՒՐԲԱԹ, 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1995

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Գրախօսուող գրքի հեղինակ՝ Փրոֆ. Երուանդ Սարգսեանը առաջին անգամ չէ, որ անդրադարձել է 1918-21 թթ. հայ-թուրքական յարաբերութիւնների ուսումնասիրութեան։ Նա, իր բազմամեայ գիտական զեղուն աշխատանքի ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրել է դարասկզբին հայ-թուրքական յարաբերութիւններին վերաբերող կնճռոտ հարցերը, յատկապէս Թուրքիայի Անդրկովկասում հետապնդած նուաճողական քաղաքականութիւնը, 1915 թ. հայերի ցեղասպանութիւնը եւ ընդհանրապէս երիտթուրքերի եւ քեմալական Թուրքիայի հայաջինջ քաղաքականութիւնը։ Հեղինակի ուսումնասիրութեան ոլորտում է եղել նաեւ փանթուրքիզմի եւ փանիսլամիզմի գաղափարախօսութեան ծաւալապաշտական քաղաքականութեան բացայայտումը։ Այս եւ այլ հարցերին նուիրուած նա հրատարակել է բազմաթիւ յօդուածներ եւ մենագրութիւններ հայերէն, ռուսերէն եւ օտար լեզուներով։

Հարկ է նշել նաեւ, որ նա իր ուրոյն ներդրումն ունի Հայաստանում Թուրքագիտութեան զարգացման ուղղութեամբ։

Այս անգամ, վերոյիշեալ խորագրով գիրքը նա շարադրել է արխիւային նորայայտ փաստաթղթերի լոյսի տակ, նկատի ունենալով, որ վերջին տարիներին (ինչպէս ինքն է նշում) գիտնականների առաջ բացուեցին 7 կողպէքի տակ պահուող արխիւային նիւթերը։

Տուեալ դէպքում նա հնարաւորութիւն է ունեցել օգտագործելու Խորհրդային Միութեան արտաքին գործերի նախարարութեան եւ Համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի արխիւների այն ֆոնտերը, որոնք առնչւում են 1920 թ. ամրանը եւ 1921 թ. Փետրուար-Մարտ ամիսներին խորհրդա-թուրքական եւ հայկական մոսկովեան բանակցութիւններին։ Այս տեսակէտից հեղինակը առաջին անգամ շրջանառութեան մէջ դնելով մոսկովեան բանակցութիւնների վերաբերող նորայայտ փաստաթղթերը, լիովին հաստատում է քեմալական Թուրքիայի հակահայկական, Հայաստանի տարածքների զաւթողական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ Խորհրդային Ռուսաստանի հակահայկական, թուրքանպաստ քաղաքականութիւնը, որը ինչպէս յայտնի է, արտացոլուեց 1921 թ. Մարտի 16-ին Մոսկուայում կնքուած խորհրդա-թուրքական պայմանագրով։

Աշխատութիւնը բաղկացած է հետեւեալ 4 յաջորդական գլուխներից. 1. Օսմանեան կայսրութեան Ագրեսիան Անդրկովկասում (1918 թ.), նախաքայլ դէպի մեծ Թուրան։ 2. Պայքարի Բովում։ 3. Քեմալական Թուրքիայի արշաւանքը Անդրկովկաս 1920 թ. աշնանն ու 1921 թ. ձմրանը եւ Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը։ Ում ապաւինել։ 4. Անդրկովկասը Մոսկովեան Խորհրդա-Թուրքական բանակցութիւններում 1921 թ. Փետրուար-Մարտ ամիսներին եւ Մարտի 16-ի ու Կարսի Հոկտեմբերի 13-ի պայմանագրերը։ Կուլիսների հետեւում։

Վերոյիշեալ գլուխների բովանդակութեան համառօտ պատմութիւնը կայանում է հետեւեալում։

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Անդրկովկասում իրավիճակը կտրուկ փոխուեց այն բանից յետոյ, երբ Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշում ընդունեց ցարական զօրքերը դուրս բերել Թուրքահայաստանից։ Թուրքական կառավարութիւնը ձգտեց անմիջապէս օգտուել ստեղծուած այդ իրադար-

ձութիւնից եւ տիրանալ Հայաստանին եւ ընդհանրապէս Կովկասին։ Եւ այդպէս, 1918 թ. Փետրուարի կէսերին թուրքական բանակը յարձակման անցաւ ամբողջ կովկասեան ռազմաճակատով։

Հայերը ուրիշ ելք չունէին բացի ինքնապաշտպանութիւնից։ Ստիպեալ կազմակերպուեց հայկական կորպուսը, բանակի զօրավար՝ Թոմաս Նազարբեկեանի հրամանատարութեամբ, որի կոմիսարն էր դաշնակցական ղեկավար գործիչ՝ Դրօ Կանայեանը։

Ի միջայլոց նշենք, որ դեռեւս 1917 թ. Դեկտեմբերի 5-ի Ռուսաստանի կովկասեան բանակի հրամանատարութեան եւ թուրքական 3-րդ բանակի միջեւ կնքուած Երզնկայի զինադադարի պայմանագրով Ռուսաստանի կողմն էր մնում համարեա ամբողջ գրաւուած Արեւմտեան Հայաստանի տարածքը։

Թուրքական բանակի առաջխաղացման ծանր պայմաններում Անդրկովկասի կոմիսարիատը որոշում կայացրեց անջատ (սեպարատ) բանակցութիւններ վարել Թուրքիայի հետ Տրապիզոնում։ 1918 թ. Մարտի 14-ին մէկ ամիս տեւած բանակցութիւնները արդիւնք չտուեցին, իսկ Ապրիլի 22-ին արդէն Անդրկովկասը հռչակուեց Ֆեդերատիւ (դաշնակցային) «անկախ» հանրապետութիւն։

Հարկ է նշել, որ թուրքական բանակը կոպտօրէն խախտեց նաեւ 1918 թ. Մարտի 3-ի Պրեստ-Լիտովսկի պայմանագրով ստանձնած պարտաւորութիւնները եւ ասիճանաբար առաջանալով դէպի Արեւելք գրաւեց Էրզրումը, Երզնկայի, Տրապիզոնի, Սարիղամիշի, Կարսի, Արտահանի, Արտվինի, Պաթումի շրջանները, ինչպէս նաեւ Ալեքսանդրապոլը։ Այն ուղեկցւում էր հայ ազգաբնակչութեան դաժան հալածանքներով, որի վերջնական նպատակն էր իրականացնել հայերի ֆիզիկական լրիւ ոչնչացումը Անդրկովկասում։

Բարեբախտաբար, ամբողջ Հայաստանը գրաւելու թուրք զաւթիչների ծրագրին խանգարեցին Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսա-

յի համաժողովրդական հերոսամարտերը, որոնց հետեւանքով թուրքական զօրքերը ետ շպրտուեցին եւ վերացաւ Երեւանի գրաւման վտանգը։ «Սարդարապատի ճակատամարտի օրերին,- ինչպէս մատնանշում է հեղինակը,- հայերի մէջ տիրում էր միասնութիւն եւ, անկախ քաղաքական համոզմունքներից, բոլորը գործում էին ընդդէմ թուրք զաւթիչների» (էջ 114)։

Իրօք, որ այդ հերոսամարտերը իրենց բնոյթով ազգային-ազատագրական համաժողովրդական պայքար էին եւ դրանց արդասիքը եղաւ այն, որ վերականգնուեց հայ ժողովրդի դարերից ի վեր երազած ազգային պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը։

Այո՛, տուեալ ժամանակ առաջ եկած ծանր կացութեան, եւ Անդրկովկասի միացեալ խորհրդարանում (Սէյմում) ներկայացուած կուսակցութիւնների միջեւ ի յայտ եկած արմատական տարաձայնութիւնների հետեւանքով, Անդրկովկասի անկախ հանրապետութիւնը իր լիազօրութիւնները ցած էր դրել։ Արդիւնքում վրացական ազգային խորհուրդը Մայիսի 26-ին Վրաստանը հռչակեց անկախ հանրապետութիւն։ Մայիսի 28-ին Թիֆլիսում գտնուող հայկական կենտրոնական ազգային խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ հանրապետութիւն, եւ դաշնակցական կառավարութիւնը Յունիսի 17-ին մեկնեց Երեւան։ Իսկ Մայիսի 27-ին մուսաւաթականները Ատրպէյճանը յայտարարեցին անկախ հանրապետութիւն, որի կառավարութիւնը հաստատուել էր Կեանճայում։

Դժբախտաբար, Յունիսի 4-ին Բաթումում թուրքական ու նորակազմ դաշնակցական կառավարութեան պատուիրակութիւնների միջեւ կնքուած պայմանագրով թուրքերը Հայաստանի վզին փաթաթեցին նոր, առաւել ծանր պայմաններ։

Փրոֆ. Երուանդ Սարգսեանը համակողմանի վերլուծութեան է ենթարկում նաեւ կնքուած պայմանագրերը։ Բնականաբար խօսում է 1920 թ. Օգոստոսի 10-ի Սեւրի պայմանագրի մասին (էջ 134), որի 88-93 յօդուածները վերաբերում էին

Հայաստանին, ուր Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպէս ազատ եւ անկախ պետութիւն: Սակայն, ինչպէս յայտնի է, այն չվաւերացուեց քեմալական շարժման եւ դաշնակից պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող սուր հակասութիւնների հետեւանքով: Սեւրի պայմանագրի չիրագործուելու հիմնական պատճառներից մէկն էլ Խորհրդային Ռուսաստանի բացասական դիրքորոշումն էր պայմանագրի նկատմամբ եւ քեմալական շարժմանը նրա ցոյց տուած օգնութիւնը (էջ 135):

Արխիւային փաստաթղթերի լոյսի տակ Երուանդ Սարգսեանը յանգում է այն եզրակացութեան, որ «Քեմալական կառավարութիւնը կանխօրօք նախապատրաստել եւ հանգամանօրէն մշակել էր Հայաստանի, որպէս պետութիւն, ոչնչացման ծրագիրը եւ սեփական նախաձեռնութեամբ էլ սկսել այդ ծրագրի գործադրումը» (էջ 146):

Միեւնոյն ժամանակ քեմալականների Հայաստանի վրայ յարձակման ծրագիրը վաղօրօք համաձայնեցուած է եղել Ռուսաստանի Խորհրդային կառավարութեան հետ եւ նրա կողմից պաշտպանութիւն ու աջակցութիւն է ստացել (էջ 159):

Նորայայտ արխիւային նիւթերի հիման վրայ փաստում է նաեւ, որ 1921 թ. Մոսկովեան բանակցութիւններում եւ յետոյ քեմալական զաւթիչների օգտին են գործել Ռուսաստանի քաղբիւրոյի որոշ անդամներ, յատկապէս Ստալինը եւ Դրոցկին:

Ինչպէս յայտնի է, 1920 թ. Սեպտեմբերի 23-ին, քեմալականները ներխուժեցին Հայաստանի սահմաններից ներս, Սեպտեմբերի 29-ին գրաւեցին Սարիղամիշն ու Կաղզուանը, Հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, Նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլը, Նոյեմբերի 12-ին՝ Աղինը եւ երկու ուղղութիւններով գրոհը զարգացրին դէպի Երեւան (էջ 163): (Ընթերցողին յիշեցնենք, որ 1918 թ. Հոկտեմբերի 30-ին երբ ստորագրուեց Մուդրոսի զինադադարի պայմանագիրը, Առաջին Համաշխարհային Պատե-

բազմում պարտութեան մատնուած թուրքական բանակը ստիպողաբար հեռացել էր վերոյիշեալ շրջաններից):

Դժբախտաբար, քեմալական զօրքերի յաղթանակին նպաստեցին նաեւ Հայաստանի բոլշեւիկեան յեղկոմի գրաւոր եւ բանաւոր քարոզչական կեղծ կոչերը, որոնցով կազմալուծւում էին Հայաստանի Հանրապետութեան մարտունակ բանակի շարքերը:

Եւ այդպէս, թուրքական եւ յետագայում էլ Խորհրդային Ռուսաստանի զօրքերի կողմից Հայաստանի Հանրապետութեանը հասցուած հարուածների հետեւանքով այնքան էր թուլացել, որ դաշնակցական կառավարութիւնը ստիպուած եղաւ ընդունել Ռուսաստանի վերջնագիրը եւ Դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրուեց, իշխանութիւնը բոլշեւիկներին յանձնելու մասին (էջ 172):

Հարց է առաջանում, թէ ի՞նչ արեցին դաշնակիցները: Սիրիայում եւ Միջագետքում իրենց շահերը պաշտպանելուց յետոյ, Հայաստանը թողեցին բախտի քմահաճոյքին:

Եւ այս բոլորի վերջնական արդիւնքը եղաւ այն, որ Մոսկուայում 1921 թ. Մարտի 16-ին առանց հայկական պատուիրակութեան մասնակցութեան կնքուած «բարեկամութեան եւ եղբայրութեան» թալանչիական-հակահայկական պայմանագրով Թուրքիայի անցան ոչ միայն Կարսի մարզը, այլեւ Սուրմալուի գաւառը, որը թուրքական զօրքերին չէր յաջողուել գրաւել չնայած զօրավար Դրոյի ձեռնարկած համառ հրամանատարութեան:

Այդ կապակցութեամբ արժէ բերել գրքի հեղինակի դիպուկ եզրակացութիւնը.

«Այսպիսին եղաւ Մոսկովեան առաջին թայլը թաղաթական այն անվայելուչ խաղում, որի խորհրդային կառավարութիւնը վարեց հայկական բազմաչարչար հարցի շուրջ: Ապշեցուցիչ այն է, որ հայ ժողովուրդը, յանձին իր դիւանագիտական պաշտօնական պատուիրակութեան, այդ խաղից դուրս թողնուեց: Մոսկովեան անօրինական եւ անբարոյ մեթենայութիւնների հետեւանքով արնաթաթախ եւ մահամերձ Հայաստանը զրկուեց եւս 28 հազար քառակուսի միլոմետր բուն իր տարածքից:

Քաղաքական անվայելուչ խաղի հակահայկական յաջորդ թայ-

լը ձեռնարկուեց 1921 թ. Յուլիսի 5-ին, երբ Ռուսաստանի Խորհրդային Համայնավար Կուսակցութեան Կովկասեան բիւրոն Ստալինի նախաձեռնութեամբ որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի տարածքը Ատրպէյճանին յանձնելու մասին: Եւ նորից ոչ ոք չհարցրեց հայ ժողովրդի կարծիքը: Իսկ այդ անբարոյ քայլի հետեւանքը, ինչպէս եւ նախորդինը, զգում եւ ուղղակի ապրում ենք առ այսօր» (էջ 190):

Եզրակացնելով նշենք, որ Երուանդ Սարգսեանի օրերս Երեւանում լոյս տեսած այս աշխատանքը հրատապ է եւ այժմէական: Ինչպէս նշեցինք, գիրքը շարադրուած է նորայայտ արխիւային փաստագրական նիւթերի, ինչպէս նաեւ օտար յատկապէս թուրքերէն աղբիւրների քննադատական վերլուծութեան հիման վրայ, եւ անկասկած կը հետաքրքրի պատմաբաններին, ուսանողներին եւ ընթերցող լայն հասարակութեան: Այն արժանի է օտար լեզուով, գոնէ անգլերէնի թարգմանութեան եւ հրատարակման, որպէսզի օտարները եւս տեղեակ լինեն թէ ինչպիսի դաւադիր գործարք է տեղի ունեցել հայ ժողովրդի թիկունքում քեմալական Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի կառավարութեան միջեւ:

ՆՈՐ ՕՐ ● ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 13, 1995

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԵՐԸ ԴԻՄԱԿԱԶԵՐԾԻՈՒՄ ԵՆ»

ERMENILERIN MASKESI DÜŞÜYOR
(THE ARMENIAN UNMASKED)
Yayima Hazirlayan (Edited by)
Prof. Dr. YAVUZ ERCAN, Ankara, 1993

Այս թունոտ խորագրով գիրքը լոյս է տեսել 1993 թ. Անքարայում «Օսմանեան պատմութեան ուսումնասիրութեան եւ հրատարակութեան կենտրոնի (թիւ 1) կողմից:

Գիրքը սկսում է թուրքերէն եւ անգլերէն գրուած Փրոֆ. Դոկտ. Եավուզ Էրջանի յառաջաբանով եւ այնուհետեւ հետեւում է Զ. Պ. Նորմանի կողմից կազմուած «Զեկուցագրի» թուրքերէն եւ անգլերէն բովանդակութիւնը եւ ձեռագրի պատճէն (ընդամէնը 165 էջ):

Աւելի լաւ պատկերացում կազմելու համար բերենք գրքի խմբագրի խօսքը.

«Մօտաւորապէս 13 տարի առաջ Անքարայի համալսարանի թուրքական յեղափոխութեան պատմութեան արխիւում աշխատելիս, փաստաթղթերի մէջ նկատեցինք կապիտան Զ.Պ. Նորմանի զեկուցումը (29 էջ): Դեռեւս զեկուցման «Հայերը դիմակազերծւում են» վերնագիրը ուշադրութիւն էր գրաւում իր իւրայատկութեամբ: Իսկ վերեւի մասում օսմաներէն լեզուով նշուած էր. «Կապիտան Նորմանի կողմից գրուած հայերի խայտառակութեան բացայայտումը» խորագիրը»: (Տես էջ 1):

Ինչպէս պարզւում է զեկուցումը թուագրութիւն չի ունեցել: Եավուզ Էրջանը բովանդակութեան տուեալների վրայ հիմնուելով նշում է, որ այն պէտք է գրուած լինի 1896 թ.: Ի միջիայլոց այս «Զեկուցումը հրատարակուել է նաեւ 1985 թ. Դոկտ. Թիւրքքայա Աթայովի կողմից անգլերէն, ինչպէս նաեւ ֆրանսերէն (Les Arméniens Démasqués) լեզուներով:

Հարկ է նշել, որ մենք Եավուզ Էրջանի մի շարք գործերին ծանօթ ենք: Նա նոյնիսկ մի անգամ իր յօդուածներից մէկում քննադատում էր հայ պատմաբաններին, որ նրանք անտեսում են թուրքական աղբիւրները եւ չեն օգտագործում դրանք: (Տե՛ս Yavuz Ercan, Türkiyede XV ve XVI Yüzyillarda gayrimüslimlerin hukuki, içtimai ve iktisadi, durumu, "Belleten", 1983, No. 188, S. 1120):

Բնականաբար թուրք պատմաբանը սխալւում էր: Իր ժամանակին մենք անդրադարձել ենք այդ խնդրին եւ հերքելով Եավուզ Էրջանի վերոյիշեալ միտքը, մատնանշել, որ հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրում են ոչ միայն միջնադարի թուրք պատմագիր-տարեգիրների երկերը, այլեւ յատուկ ուշադրութիւն են դարձնում ուշ շրջանի հայ-թուրքական յարաբերութիւններին վերաբերող ուսումնասիրութիւնների վրայ եւ տալիս դրանց օբյեկտիւ գնահատականը (Տե՛ս Աւետիս Փափազեան, Օսմանեան հնագիտական եւ դիւանագիտական փաստաթղթերի ուսումնասիրութիւնը, ՊԲՀ, 1988 No. 4, էջ 241. ինչպէս նաեւ 1988 թ. Սեպտեմբերին Սոֆիայում կարդացուած թուրքերէն մեր զեկուցումը՝ "Ermenistan Cumhuriyetinde XVI-XVIII asirlara ait Osmanli belgesel kaynaklarin incelemeleri ve yayimi"):

Եւ ահա սեղանի վրայ է վերջերս լոյս տեսած վերոյիշեալ «սենսացիոն» խորագրով գիրքը: Կարդացինք ուշադրութեամբ: Նախ մտածեցինք անուշադրութեան մատնել այն, բայց յետոյ եկանք այն եզրակացութեան, որ լռելեայն անցնելն էլ իմաստ չունի, քանի որ այն առնչւում է հայ ժողովրդի պատմութեան 19-րդ դարի վերջին քառորդին տեղի ունեցած ողբերգական դէպքերի բացայայտ խեղաթիւրմանը: Խօսքը վերաբերում է 1894-96 թթ. Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայերի կոտորածներին, որոնց ինչպէս յայտնի է զոհ գնացին 300,000 հայեր. նամանաւանդ չուտով, Օգոստոսին լրանում է այդ արիւնալի իրադարձութիւնների 100-ամեայ տարելիցը:

Եավուզ Էրջանի գրած առաջաբանում նշւում է նաեւ, Զ.Պ. Նորմանը Թուրքիայում առանձնապէս շատ ճանաչուած անձնաւորութիւն չի եղել, ուստի նրա մասին կենսագրական տեղեկութիւններ քաղելը այնքան էլ հեշտ չի եղել: Առկայ փաստերը ցոյց են տալիս, որ նա եղել է Մեծն Բրիտանիայից ուղարկուած հրետանու սպայ, կամ էլ ինժեներ: Զեկուցումը գրելու ընթացքում ունեցել է կապիտանի աստիճան: Ամբողջական անունն է եղել Charles Boswell Norman: Նա եկել է Թուրքիա

1877-78 թթ. ռուս թուրքական պատերազմի ուսումնասիրութեան խնդրով եւ 1878 թուականին հրատարակել է «Հայաստանը եւ 1877 թ. կամպանիան» գիրքը: «Տե՛ս C.B. Norman, Armenia and the Campaign of 1877, London, 1878): Իր զեկուցման մէջ տրուած տեղեկութիւններին իբրեւ թէ մասամբ ականատես է եղել, կամ էլ դրանք քաղել է այլ աղբիւրներից (Տե՛ս էջ 3):

Առանց յապաղելու նշենք, որ զեկուցման մէջ Նորմանը Սասունում եւ այլուր տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւնների մեղքը բարդում է կուսակցութիւնների վրայ: Միտումնաւոր խեղաթիւրում են իրական եղելութիւնները, յատկապէս վարկաբեկւում եւ պախարակւում են հայ կուսակցութիւնների ծաւալած ազատատենչ գործունէութիւնը: Սուր քննադատութեան է ենթարկւում Անգլիայի եւ միւս մեծ պետութիւնների հայկական բարենորոգումների խնդրում ձեռնարկած միջոցառումները: Ամէն կերպ ջանք է գործադրւում նուազեցնելու արեւմտահայութեան, աւելի ճիշդ իրենց բնօրրանում ապրող հայ բնակչութեան թուաքանակը: Թաքցւում եւ քողարկւում են Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայերի սահմռկեցուցիչ կոտորածները: Իսկ այդ մասին անդրադառնալու դէպքում էլ միտումնաւոր տրւում է զոհուած հայերի չնչին թուաքանակ: 1895 թ. Սեպտեմբերին Հնչակեան Կուսակցութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած Կ. Պոլսի խաղաղ ցոյցը, որի նպատակն էր մայիսեան բարենորոգումների գործադրման խնդրում հրաւիրել եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը, բնութագրւում է, որպէս զինուած եւ քրքրիչ ապստամբութիւն: Ամենահետաքրքիր երեւոյթն այն է, գուցէ եւ ապշեցուցիչ, որ Նորմանը կատարեալ պաշտպանութեան տակ է վերցնում սուլթան Ապտուլ Համիտի հայերի նկատմամբ դրսեւորած արիւնալի քաղաքականութիւնը:

Մի խօսքով թէ Եավուզ էրջանի առաջաբանում եւ թէ Նորմանի զեկուցագրում համարեա թէ միեւնոյն յերիւրանքներն են, որոնց մեր ականջը վարժուել է եւ որոնք անընդհատ կրկնւում են Մեծ Եղեռնից յետոյ անցած տարիների ընթացքում թուրք պատմաբանների, պետական գործիչների եւ ինչու չէ Պեռնար Լեւիսի նման վարձկան պատմաբանների կողմից:

Իսկ ո՞րն էր հայ կուսակցութիւնների «մեղքը»: Ոչ միայն կուսակցութիւնները այլեւ ամբողջ հայութիւնը ձգտում էին մարդկային տարրական իրաւունքների՝ կեանքի, պատուի, ունեցուածքի անձեռնմխելիութեան եւ ազատ ապրելու վեհ գաղափարին:

Այս մասին շատ է խօսուել եւ գրուել: Առկայ են բաւականաչափ գնահատականներ համաշխարհային պատմագրութեան մէջ եւ մենք չենք ուզում խորանալ այդ ուղղութեամբ:

Նշենք, որ եթէ Նորմանի այս «զեկուցումը» նորութիւն էր մեզ համար, այնուհանդերձ վերոյիշեալ աշխատութիւնը ինչ-որ չափով ծանօթ էր մեզ, որովհետեւ նրա այդ գրքից մի հատուած ընդգրկուած է Ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսեանի «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի ժողովածուում: Եւ այն տպաւորութիւնն էր ստեղծուել,

որ 1878 թ. այն հրատարակելու ընթացքում Նորմանը, որոշ առումով եղել է անաչառ պատմութիւնը ճիշդ շարադրելու սկզբունքին:

Ահա թէ ինչ է գրել նա 1877 թ. Օգոստոսի 24-ին Էրզրումում.

«Հայերի դրութիւնը այն երկրում, որտեղով անցել է Իսմայիլ փաշայի բանակը, ծայր աստիճան ողբալի է: Ալաշկերտի դաշտի բոլոր 122 գիւղերը, իններից բացի, աւերուած են: Այն մի քանի քրիստոնեաները, ովքեր Տէր Ղուկասովի նահանջի ժամանակ չեն օգտուել Ռուսաստանի հովանաւորութիւնից, բարբարոսաբար սպաննուել են, մի ամբողջ շարք գիւղեր այրուած են մինչեւ վերջ: Մուշի գաւառում մի քանի գիւղեր աւերուել են, իսկ բնակիչներից շատերը՝ մորթուել: Նոյն բախտին են արժանացել Պեյազետ քաղաքը եւ շրջակայքի գիւղերը: Այդ վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք եւ երեխաները սպաննուել են ամենադաժան ձեւով...: (Տե՛ս Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 7):

Սրանով հանդերձ ստորեւ պիտի նկատենք, որ յետագայում նրա դիրքորոշումը հայերի հանդէպ շեշտակի փոփոխութեան է ենթարկուել ինչ-որ մութ հանգամանքների ազդեցութեան տակ:

Այստեղ զարմանալու բան չկայ: Ի՞նչ է, մեր օրերում նման ապշեցուցիչ երեւոյթներ չեն կատարւո՞ւմ: Դեռ վերջերս անգլիացի պատմաբան Պէռնար Լեւիսը Le Monde թերթում հանդէս եկաւ հայերի ցեղասպանութիւնը կասկածի տակ առնելու մեկնաբանութիւններով: Եւ ինչպէս յայտնի է ֆրանսիական օրէնքներով դատական հարց է յարուցուած նրա դէմ: (Այս կապակցութեամբ տե՛ս «Նոր Օր»ում (Մարտ 30, 1994) «Բռնագա՞ղթ թէ ցեղասպանութիւն» հրապարակած մեր յօդուածը):

Մինչդեռ Պէռնար Լեւիսը 1961 թ. հրապարակած իր գրքի մէջ պահպանելով ճշմարտութիւնը նշել էր, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում արեւմտահայութիւնը ենթարկուել է ողջակիզման: Իսկ տարիներ յետոյ, նոյն հատորի մէջից այդ յօդուածը անհետացել էր: Պատմութեան աղաւաղման այս արտառոց երեւոյթը բացայայտուած է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի մեր գործընկեր Դոկտ. Փրոֆ. Ռուբէն Սահակեանի կողմից:

Որպէսզի հայ ընթերցողը որոշ պատկերացում կազմի գրախօսուող գրքում Նորմանի միտումնաւոր եւ հայատեաց ոգով շարադրուած զեկուցմանը, բերենք նրա առաջաբանից մի հատուած եւ ընդհանրապէս բովանդակութիւնից մի քանի եզրակացութիւններ, որտեղ պաշտպանելու եւ արդարացնելու փորձեր են կատարւում Ապտուլ Համիտի աշխարհով մէկ յայտնի դաժան բնաւորութիւնը եւ բռնատիրութիւնը:

Ահա թէ ինչ է գրել Նորմանը իր զեկուցման առաջաբանում:

«Հայ-թուրքական բախումների իրականութիւնը հասկանալու ժամանակը եկաւ: Մինչեւ հիմա այդ խառնակութիւնների մասին պատկե-

բացում էինք կազմում միմիայն հայերի տուած բացատրութեամբ եւ նրանց անգլիացի բարեկամների յուզումնալից հիստերիկ արտայայտութիւններով: Դեռեւս չլսեցինք օսմանցիների պաշտպանելու խնդիրը: Կոտորածների, կողոպուտի, կանանց վրայ յարձակուելու հեքիաթները զզուելու աստիճան լսեցինք: Սակայն, դրանցից ոչ մէկը, ոչ մի եւրոպացի ականատեսի կողմից չհաւաստուեց: Իսկ Անգլիան Անատոլիայի մէջ տեղի ունեցած խառնակութիւններին անտեղեակ լինելով, չնկատեց, որ այդ բոլորը իր հովանաւորած անիշխանական շարժումների ուղղակի արդիւնքն են»: (էջ 51):

«Մեր մամուլում սուլթանը բացայայտօրէն մեղադրւում է կոտորածների թողտուութեամբ եւ մարդկանց առանց դատ-դատաստանի սպաննելու յանցանքով: Այդ դատապարտման ապացուցումը անհնար լինելով հանդերձ, այն հնարովի է եւ նոյնիսկ դժանաբարոյ»: (էջ 74):

«Ես հպարտ եմ, որ Օսմանեան պետութեան ծառայութեան մէջ գտնուող լաւագոյն եւ ամենահամարձակ մարդկանցից մի քանիսը հանդիսանում են իմ բարեկամները: Նրանց հետ զրուցեցինք մեր երկրների միջեւ գոյութիւն ունեցող ցաւալի սառնութեան մասին: Բոլորն էլ ինձ վստահեցրին, որ Նորին Մեծութիւնը ամբողջ էութեամբ ձգտում է Անգլիայի հետ բարեկամանալ: Նոյնիսկ մի անգամ սուլթանը յատուկ փափաք յայտնեց, որ ես հնարաւորին չափ հրապարակայնացնեմ թէ ինչ աստիճանի յուզմունք է պատճառում մեր ժողովրդի եւ մամուլի նման վերաբերմունքը իր հանդէպ: Նա մեծ ցանկութիւն յայտնեց, որ ինքը ուզում է բարեկամանալ մի ազգի հետ, որին այնքան պարտական են ինքն ու իր նախահայրերը: (էջ 74):

«...Նրանք, որոնք ճանաչում են սուլթանին գիտեն, թէ որքան անիրաւացի են նրա դէմ կատարուող զրպարտանքները: Նա իր անձնական կեանքով միշտ էլ եղել է մի անմեղութիւն եւ ով որ արժանի է եղել դրան, շարունակ վայելել է նրա բարեկամեցողութիւնը» (էջ 75):

«Հակառակ մի շարք պարագաներուն սուլթանի հանդէս բերած մեծահոգութեան եւ բարեացակամութեան մենք պէտք է ընդունենք եւ հաւատք ընծայենք, որ նա է եղել Սասունի ապստամբների վրայ առանց խղճահարութեան հրաման արձակողը, ինչպէս նաեւ վերջերս Անատոլիայի քաղաքներում հայերի վրայ յարձակուելու հրաման տուողը: «Հայերի վրայ կատարուած յարձակումներ» եմ ասում, սակայն, մենք պէտք է ընդունենք, որ ըստ թուրքական պաշտօնատար անձանց, ամէն անգամ էլ հայերն են նախաձեռնել նախայարձակումը, եւ նկատի ունենալով նրանց ֆիզիքական թուլութիւնն ու նուազ թուաքանակը, նրանք մատնանշել են, որ հայերի կորուստը թուրքերից աւելի շատ է եղել»: (էջ 75):

Եւ վերջապէս Նորմանը եզրակացնելով գրել է. «Աչքի առաջ ունենալով բոլոր անգլիացիներին ես այն համոզմանն եմ, որ նրանք հովանաւորում են միմիայն մի փոքրամասնութեանը եւ գիտեմ, որ այսօր Անգլիայում հիմնական մտածողութիւնը դէմ լինելով

թուրքերին, հակուած է դէպի հայերի կողմը: Այս բոլորը բխում է նրանից, որ հայկական այս խարդավանքներն ու բանսարկութիւնները սրանից առաջ ոչ մի անգամ չբացայայտուեցին Անգլիայի ժողովրդի առաջ» (էջ 77):

Այս մի քանի հատուածները, որ նոյնութեամբ թարգմանաբար ընդգրկեցինք այստեղ, կարծում ենք, որ դրանք որոշակի պատկերացում են տալիս Նորմանի զեկուցման շարադրման ոճի եւ հայերի հանդէպ նրա դրսեւորած ոխի եւ ատելութեան:

Հիմա անցնենք այս զեկուցման ներքին ծալքերի բացայայտման, թէ ում դրդմամբ կամ էլ պատուէրով կարող էր գրուած լինել այն եւ ինչ յետին նպատակ էր հետապնդում:

Ուրեմն այսպէս՝ Օսմանեան կայսրութեան յայտնի պետական գործիչ հայատեաց Քամիլ փաշան երբ 1895 թ. Մայիսին կրկին նշանակուեց Մեծ Վեզիրի պաշտօնին, վերլուծելով Սասունի իրադարձութիւնները իր յուշագրութեան մէջ եւ զեկուցագրերում հետեւեալ խորհուրդն էր տալիս Ապտուլ Համիտին:

«Սասունի դէպքը, աւելի շուտ այնտեղի ապստամբութեան ճնշումը հայերի կողմից այնպէս է ուռճացուել եւ անգլիական մամուլում այն աստիճան դժանութեամբ է նկարագրուել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցութիւն չգործել ոչ միայն Անգլիայում, այլեւ նոյնիսկ այստեղ՝ Օսմանեան կայսրութեան տարբեր հպատակների վրայ»: (Տե՛ս Hatirat-i Sadr.-i esbak Kamil paşa, Kostantinya, 1329, s. 181. (արաբատառ օսմաներէն):

«Եւ եթէ այժմ որեւիցէ հրատապ բան կայ անելու, դա այն է, որ հետաքննող յանձնաժողովի զեկոյցը շտապ կերպով հրատարակուի Անգլիայում, որպէսզի հանդարտուի ընդհանուրի տրամադրութիւնը: Եւ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար բաւական է, որ յիշեալ զեկոյցը հրապարակուի օտար պաշտօնեաների ստորագրութեամբ» (Տե՛ս I.H. Uzunçarşili, II-ci Abdulhamid devrinde Kamil paşa, "Belleten", 1955, No. 78 s. 227):

Սուլթանին ուղղուած զեկուցագրի մի այլ մասում Քամիլ փաշան բացայայտ մատնանշում է նաեւ հետեւեալը.

«Իմ կարծիքով ներկայումս հանգուցակէտը ոչ անգլիական դեսպանի եւ ոչ էլ նրա կառավարութեան ձեռքին է: Այս հարցում առաջին հերթին անհրաժեշտ է մտափոխել անգլիական հասարակայնութեան կարծիքը: Եթէ մի կողմից հնարաւոր լինի որոշ ժամանակ յետաձգել դեսպանների յուշագրերի պատասխանները, ապա միւս կողմից անհրաժեշտ է, որ չէզոք մի անձնաւորութիւն հանդէս գայ Լոնտոնի մամուլում, (ընդգծումը մերն է,- Ա.Փ.) մատնանշելով, որ հայերի ապստամբութիւնը լոկ դաշնագրից բխած մի երեւոյթ է: Իսկ Օսմանեան պետութիւնը պէտք է բողոքարկելու ուղիներ, որոնի Անգլիայի անիրաւացի դիրքորոշման դէմ» (Hatirat-i Kamil paşa, s. 181):

Յարգելի ընթերցող, եթէ պարզ համեմատութիւն կատարենք Քամիլ փաշայի եւ կապիտան Նորմանի վերոյիշեալ զեկուցագրերի միջեւ, ապա, այնքան էլ դժուար չի լինի

կռահելը, թէ ինչ ներքին կապ կարող էր լինել դրանց միջեւ: Դուք ինձ հետ պիտի համաձայնէք, որ դրանք միեւնոյն չղթայի յաջորդական օղակներն են. այսինքն՝ այն ցոյց է տալիս, որ Նորմանի զեկուցումը սարքովի եւ պատուէրով կատարուած մի գործ էր: Քամիլ փաշայի խօսքերով ասած՝ Նորմանը հէնց այդ նոյն «չէզոք», «օտար» անձնաւորութիւնն էր, որի ստորագրութեամբ լոյս պիտի տեսնէր մի յօդուած, որպէսզի հանդարտեցուէր Անգլիայի, ինչպէս նաեւ համաշխարհային հասարակայնութեան կարծիքը Ապտուլ Համիտեան հայերի կոտորածների կապակցութեամբ:

Բնականաբար Նորմանը միակը չէր կարող լինել այս յետին ծրագրում: Հաւանաբար թուրքական արխիւները պրպտելու ընթացքում կարող են ուրիշները եւս ի յայտ գալ:

Մեզ համար զարմանալի է մի հանգամանք եւս. Եավուզ Էրջանը իր յառաջաբանում պաշտպանելով եւ խորին հաւատք ընծայելով Նորմանի տուեալների վրայ, ի՞նչու է անտեսում տուեալ իրադարձութիւններին վերաբերող իր հայրենակիցների գնահատականները:

Մի կողմ թողնելով օտարազգի գիտնականների եւ պետական գործիչների ճշմարտացի գնահատականները Սասունի կոտորածների մասին, մենք այստեղ տեղին ենք համարում բերել միմիայն մի երկու երիտթուրքական գործիչների վկայութիւնները: Այսպէս՝ երիտթուրքական յայտնի գործիչ Օսման Նուրին Սասունի իրադարձութիւնների որպէս ժամանակակից գրել է.

«Անատոլիայից (իմա՝ Արեւմտեան Հայաստան, Ա.Փ.) հասած տեղեկութիւնները չափազանց աղէտալի էին: Ջարդը շարունակւում էր սոսկալի չափերով:

Քաղաքային եւ զինուորական իշխանութիւնների տուած հրամաններով քրտերը յարձակուել էին գիւղերի վրայ, բայց ետ էին մղուել, որից յետոյ զինուորական ուժեր ուղարկելու անհրաժեշտութիւն էր առաջացել: Այդ ժամանակ զինուորները այրել էին գիւղերը եւ կոտորել բազմաթիւ մարդկանց»: (Տե՛ս Osman Nuri, Abdul Hamid Sani ve devr-i saltanati, Istanbul, 1327, s. 838 (արաբատառ օսմաներէն):

Իսկ երիտթուրքական ոչ պակաս հեղինակաւոր գործիչ, յետագայում ծովային մինիստր եւ թուրքական 4-րդ բանակի հրամանատար Ճեմալ փաշան նոյն իրադարձութիւնների մասին գրել է.

«Երիտթուրքերը դատապարտելով 1894-1896 թթ. հայկական դէպքերը, այն համարեցին Ապտուլ Համիտի քաղաքական սխալը, քանի որ նա դաժան միջոցներով ձգտում էր երկարաձգել իր բռնապետութիւնը...: Հայերի կոտորածների ընթացքում ես եւ այլ յեղափոխականների ընթացքում ես եւ այլ յեղափոխականներ գտնուելով Թուրքիայում, նոյնպէս դատապարտեցինք Ապտուլ Համիտին, քանի որ նրա այդ քաղաքականութիւնը վնասաբեր էր ոչ միայն թուրքերի, այլեւ ամբողջ օսմանների համար»: (Տե՛ս Behcet Cemal, Cemal Pasanin hatiralari, Ankara, 1959, s. 340):

Կրկին անդրադառնալով Օսման Նուրիին վերջացնենք:

«Այս ջարդը բոլոր պարագաներում մի ահարկու եղեռն էր մարդկութեան դէմ: Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նոյն Ապտուլ Համիտ երկրորդն էր, որը ղեկավարում էր Եըլտըզի այդ հրոսակախումբը եւ կոտորում էր ոչ միայն հայերին, այլեւ դէպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը» (Osman Nuri, նշ. աշխ., էջ 866):

Կարծում ենք, որ այսքանից յետոյ առանձին եզրակացութեան այլեւս կարիքը չկայ. միմիայն ուզում ենք աւելացնել հետեւեալ առաջարկը:

Սովորաբար հրատարակուող գրքերի սկզբին, արտատպելու հնարաւորութիւնը սահմանափակելու համար, գրւում է. "All Rights Reserved": Մենք բոլորովին անհրաժեշտ չենք զգում այդ կանոնին եւ ցանկանում ենք, որ մեր այս գրախօսականը լոյս տեսնի ոչ միայն վերոյիշեալ լեզուներով, այլեւ չինարէն, հնդկերէն, ռուսերէն, ճապոներէն, գերմաներէն, իտալերէն եւ...:

Բայց տրամաբանութիւնը յուշում է; որ այն ունենայ «ԹՈՒՐՔԵՐԸ ԴԻՄԱԿԱԶԵՐԾՈՒՄ ԵՆ» խորագիրը:

ՆՈՐ ՕՐ ԵՒՕՐԵԱՅ, ՀՈՐԵՔՇԱԲԹԻ, ՅՈՒՆԻՍ 8, 1994

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՐԱՆԸ»
ERMENILER VE IRAN
Yayina Hazirlayan Prof. Dr. Yavuz Ercan
Ankara, 1994

1994 թ. Յունիսի 8-ին «Նոր Օր» եւօրեայում մի ընդարձակ գրախօսական էինք հրապարակել արդի թուրք պատմաբան Եավուզ Էրջանի խմբագրութեամբ լոյս տեսած «Հայերը Դիմազրկւում են» (1993) գրքի մասին, որտեղ հաւաստի փաստերով հերքել էինք նրա առաջ քաշած սխալ տեսակէտները եւ բացայայտել ճշմարտութիւնը Ապտուլ Համիտեան բռնատիրութեան շրջանում տեղի ունեցած հայերի հալածանքների եւ կոտորածների մասին, եւ ապացուցել, որ ոչ թէ հայերն են դիմակազրկւում, այլ՝ թուրքերը:

Եւ ահա Եավուզ Էրջանի խմբագրութեամբ հրապարակ է եկել հակահայկական ոգով շարադրուած մի այլ գիրք եւս «Հայերը եւ Իրանը» խորագրով։

Հէնց սկզբից նշենք, որ մենք հեռու ենք այս վերջին գրքի մասին մի կատարեալ գրախօսական գրելու մտքից. նախ այդքան ժամանակ չունենք տրամադրելու դրան, եւ երկրորդ, կրկին մի երկարաշունչ գրախօսականով չենք ուզում շահագործել ընթերցողի համբերութիւնը։ Ուղղակի պիտի աշխատենք հնարաւորին չափ հակիրճ տեղեկութիւն տալ այս գրքի մասին եւ այնուհետեւ առանձին կէտերով, մէկ առ մէկ կանգ առնել Եավուզ Էրջանի գրչին պատկանող պատմութեան կեղծարարութեան գլուխ գործոցների մասին եւ տալ մեր պատասխանը։ Եթէ հանգամանքների բերումով մի քիչ ընդարձակուեմ ներողամիտ եղէք։

Ուրեմն այսպէս, Եավուզ Էրջանը իր այս գրքով վերահրատարակել է 1927 թուականին Ստամպուլում լոյս տեսած Մեհմետազատէ Միրզա Պալայի «Հայերը եւ Իրանը» վերնագրով գիրքը։ Այն բաղկացած է 27 էջից եւ ունի 8 ենթաբաժիններ։ Իսկ Եավուզ Էրջանը գրել է գրքի առաջաբանը 19 էջերից բաղկացած։

Ի՞նչն է տարօրինակն ու զարմանալին։

Փոխանակ առաջաբանում քննարկման նիւթ դառնայ վերահրատարակուող այդ գրքի բովանդակութիւնը, Եավուզ Էրջանը հիմնականում խօսում է 1914-1916 թթ. հայ-թուրքական յարաբերութիւնների եւ իրադարձութիւնների մասին, քննադատութեան թիրախ դարձնելով այսպէս ասած հայերի ապստամբական շարժումներն ու նրանց գործադրած դաժանութիւնները թուրքերի նկատմամբ։ Միայն առաջաբանի վերջում հպանցիկ տեղեկութիւններ է տալիս հեղինակի կենսագրութեան եւ հրապարակախօսային գործունէութեան մասին։

Իսկ Մեհմետազատէ Միրզա Պալան 1927 թ. հրապարակած գրքոյկում խօսում է այն մասին, որ Հայաստանի խորհրդայնացումից (1920 թ.) յետոյ բաւականաչափ թուով հայեր գաղթել են Իրան, որտեղ եւ աստիճանաբար

հասել են որոշակի յաջողութիւնների՝ հանրակրթական եւ հասարակական կազմակերպութիւնների ընդլայնման, առեւտրի եւ տնտեսութեան զարգացման, առաջադիմութիւն արձանագրել մշակութային եւ քաղաքական կեանքում եւ նոյնիսկ զինուորական ասպարէզում։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւնը կենտրոնանալով Թաւրիզ քաղաքում, կրկին իր ուժերն հաւաքելով, սկսել է բուռն գործունէութիւն ծաւալել ազգայնական եւ յեղափոխական գաղափարներ տարածելու ուղղութեամբ։ Այս նպատակի կենսագործման համար սերտ համագործակցութիւն է ստեղծուել հայերի

եւ պարսիկ մտաւորականութեան, ինչպէս նաեւ քաղաքական գործիչների միջեւ։ Միրզա Պալայի մտավախութիւնը այն է, որ այդ բարեկամական յարաբերութիւնները ուղղուած են Թուրքիայի եւ ընդհանրապէս համաթուրանիզմի դէմ եւ ունի ծովից-ծով մի մեծ Հայաստան ստեղծելու հեռաւոր ծրագիր։ Մի խօսքով հեղինակին դուր չի գալիս իրանահայ համայնքի ընկերային- տնտեսական եւ քաղաքական ասպարէզում ձեռք բերած յաջողութիւնները, սուր քննադատութեան է ենթարկւում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ազգայնական եւ յեղափոխական գաղափարների տարածումը եւ ընդհանրապէս հայութեան շրջանում հայրենասիրական զգացումներ սերմանելու ձգտումները։ Միրզա Պալան անդրադարձել է նաեւ հայ-ռուսական համագործակցութեան, քրտական հարցին, Օսմանեան կայսրութիւնում հայերի թուաքանակի նուազեցման եւ այլն։

Եւ այդպէս Եավուզ Էրջանը մեր օրերում խիստ շահեկան համարելով այս գրքոյկը, կրկին վերահրատարակել է, այն մտածելով, որ նորաստեղծ Հայաստանի հանրապետութիւնը նոյնպէս սերտ համագործակցութեան մէջ է Իրանի այսօրուայ պետութեան հետ, եւ այդ բարեկամութիւնը նախկինի նման նպաստաւոր չէ եւ նոյնիսկ վտանգաւոր՝ Թուրքիայի համար։

Այժմ անցնենք գրքի առաջաբանում Եավուզ Էրջանի կողմից տուած քաշուած մի քանի խեղաթիւրումներին եւ տալ դրանց հակիրճ պատասխանները։

1. «19-րդ դարի կէսերին հայերի կողմից թուրքերի դէմ նախաձեռնուած թշնամութիւնը նոյն դարի վերջաւորութեան վերածուել էր թուրքերի նկատմամբ գործադրուող զուլումի, ճնշման եւ ցեղասպանութեան»։ (էջ V)։

Այս մեկնաբանութիւնը պատմութեան աղաւաղման արտառոց երեւոյթ է։ Այստեղ, հայ ժողովրդի պատմութեան 19-րդ դարի վերջին քառորդին տեղի ունեցած ողբերգական դէպքերը լիովին խեղաթիւրուած են։ Այդ մասին համաշխարհային պատմագրութեան մէջ հսկայական նիւթ կայ։ Բոլորին յայտնի է, որ 1894-96 թթ. Սասունում եւ այլուր տեղի ունեցած կոտորածները ցնցեցին ամբողջ աշխարհը. յատկապէս այն խորը ցասում առաջացրեց Եւրոպայի ժողովուրդների մօտ։

2. «1914 թ. դաշնակից պետութիւնների դէմ կենաց մահու պատերազմի մէջ մտած Օսմանեան պետութիւնը, երբ փաստեց հայերի ռուսների հետ ունեցած համագործակցութիւնը, դիմեց ամենամարդասիրական գործողութեան։ Իր գոյութիւնը պահպանելու համար հայերի մի մասին ստիպողաբար գաղթի ենթարկեց»։ (էջ V)։

Ինչպէս տեսնում ենք, այստեղ խօսւում է միմիայն հայերի գաղթի եւ ոչ մի խօսք կոտորածի մասին։ Կրկին դիմենք թուրքական աղբիւրներին։ 1919 թ. թուրքական ռազմական արտակարգ ատեանի կողմից երիտթուրքերի պարագլուխների դատավարութեան ընթացքում բերուած բոլոր մեղադրական եզրակացութիւններում մատնանշւում է, որ «ընդունուած յատուկ օրէնքի համաձայն, այլ վայրեր տարագրուած հայերի կարաւանները ոչնչացուել են ճանապարհին՝ կուսակցութեան կողմից ստեղծուած քրէական յանցագործ հրոսակախմբերի կողմից, իսկ նրանց գոյքն ու ունեցուածքը կողոպտուել եւ յափշտակուել են»։ (Տե՛ս Takvim-i Vekayi, 21 Haziran 1335 (1919) No. 3586)։

Իսկ շրջանային կուսակցութեան պատասխանատու քարտուղարների հարցաքննութեան ընթացքում, յանձնաժողովի նախագահ Մուստաֆա Նազըմ փաշան ասել է. «Օրէնքով կատարուած գործողութիւնների համար ոչ մէկին պատասխանատուութեան չենք ենթարկում: Իրականութիւնը այն է, որ տնտեսութեան բոլոր տակ կոտորած են սարքել: (Ընդգծուածը մերն է.- Ա.Փ.): Ահա այդ արարքի համար է, որ ձեզ պատասխանատուութեան ենք ենթարկում: (Տե՛ս Takvim-i Vekayi, 28 Haziran 1335 (1919) No. 3596):

Անշուշտ այս մասին եւս կան բազմաթիւ օտար ականատեսների պատմածներն ու վկայութիւնները: Այս գրքում, քանի հայ-իրանական յարաբերութիւններն են շօշափուել, բերենք մի հատուած պարսիկ գրող, վիպագիր՝ Մոհամմէտ Ալի Ջամալզադէի յուշագրութիւնից:

«Ես ականատես եղայ մի շարք դաժանարարոյ տանջանքների ու խոշտանգումների, որոնք գործադրում էին թուրք զինուորները հայերի գլխին, Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եւ որի հետեւանքը, ինչպէս գիտեմ՝, եղաւ միլիոնից աւելի հայերի ջարդը...: Հարիւրաւոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդէն անզօր էին քայլելու, մտրակի եւ զենքի ուժով հետիոտն ու անզօր, անխնայ քշում էին առաջ: Տղամարդկանց մէջ երիտասարդներ չկային: Նրանց ուղարկել էին ռազմանակատ կամ կասկածելով, որ կարող են միանալ ռուսական բանակին, կոտորել էին: Ես զարհուրելի օրեր անցկացրի, օրեր, որոնք ահռելի մղձաւանջի պէս ծանրացել են հոգուս վրայ: Մղձաւանջ, որ երբեմն տարբեր առիթներով ճնշում է ողջ էութիւնս, անհանգստացնում ու տանջում է ինձ»: (Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1987, No. 2 (117), էջ 232-233):

3. «Օսմանեան կայսրութեան մարդահամարի համաձայն, Ստամպուլն էլ ներառեալ, ամբողջ Թուրքիայում 1.300.000 հայ կար...:

Արեւմուտքի եւ հայերի առաջ բացած տուեալներով ինչպէ՞ս կարող է պատահել, որ այդ դէպքերի ընթացքում 2.000.000 մարդ մահացած լինի, այն դէպքում երբ Օսմանեան հողերում 1.300.000 հայ էր ապրում: Այս պարագայում ստացւում է այնպէս, որ բոլորովին չապրած 700.000 հայերն էլ զոհերի թուում են»: (էջ XIX):

Այստեղ եւս Եավուզ Էրջանը շարաչար սխալւում է. եւ նորութիւն չէ մեզ համար, որովհետեւ դեռեւս Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում եւ յետոյ, երբ հայկական հարցը դարձաւ միջազգային շահարկման առարկայ, Թուրք պետական գործիչները, այդ թուում եւ պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտութիւնը աւելորդ համարելու միտումով, դիտաւորեալ սկսեցին ամէն ջանք թափել նուազեցնելու հայերի թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում: Առկայ է նաեւ հարցի միւս կողմը: Դա զինուորական հարկից ազատուելու նպատակով քրիստոնեաների հաշուառումից խուսափելու հարցն է: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս նաեւ, որ հաշուառման ընթացքում նոյնիսկ բազմաթիւ հայկական գիւղերի բնակչութիւնը դուրս է մնացել գրանցումից, որը նոյնպէս բացասաբար է անդրադարձել հայ բնակչութեան ընդհանուր թուաքանակի վրայ: (Տե՛ս Հ.Հ. Դաստան.

Արեւմտեան Հայաստանի բնակչութեան ազգային կազմը ըստ Վիտալ Քինէի վիճակագրութեան. «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ... XII, Թուրքիա. Երեւան, 1985, էջ 59):

Հարկ է նշել, որ հայ եւ օտարազգի պատմաբանների ու մասնագէտների տուեալները այս խնդրում բերել են այն եզրակացութեան, որ նախապատերազմեան շրջանում հայ ազգաբնակչութեան թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում եղել է 2.5 միլիոն մարդ: Իսկ զոհուած հայերի թուաքանակի մասին խօսելիս մատնանշւում է, որ մեծ եղեռնի ընթացքում նահատակուել են աւելի քան 1.5 միլիոն անմեղ հայեր: (Մանրամասն տե՛ս Ռուբէն Սահակեան, Ցեղասպանութեան պատմութիւնից, Երեւան, 1990 էջ 288-289):

4. «Հակառակ այս բոլորին Օսմանեան պետութիւնը աշխատել է կատարել հնարաւոր ամենամարդասիրական քայլերը: Գաղթի ընթացքում հաւանական թուացող դէպքերը կանխելու համար ձեռնարկել է միջոցներ: Այդ իսկ նպատակով ներքին գործերի նախարարութիւնը 1915 թ. Մայիսի 30-ին, նկատի ունենալով պատերազմական վիճակն ու քաղաքական արտակարգ դժուարութիւնները, այլ շրջաններ տարագրուող հայերի սնունդի եւ ապահովութեան վերաբերեալ հրապարակել է 15 յօդուածներից բաղկացած մի կանոնադրութիւն: Այդ կանոնադրութեան ի յայտ գալուց 10 օր յետոյ, 1915 թ. Յունիսի 15-ին կառավարութիւնը հրապարակել է 34 յօդուածներից բաղկացած մի նոր կանոնադրութիւն եւս»: (էջ XVIII):

Նախ անհրաժեշտ ենք զգում Եավուզ Էրջանին յիշեցնել, որ բացի այս նշուած երկու կանոնադրութիւններից, 1915 թ. Հոկտեմբերի 26-ին կառավարութիւնը հրապարակեց նաեւ մի այլ 25 յօդուածներից բաղկացած մի կանոնադրութիւն եւս: Այն առաջին անգամ լոյս տեսաւ Թուրքական պաշտօնական օրաթերթ Takvim-i Vekayi-ի մէջ (տե՛ս 1915 թ. Հոկտ. 28, թիւ 2343, արաբատառ), որը յետագայում նոյնութեամբ արտատպուեց Dustur-ի մէջ (օրէնքների ժողովածու), տե՛ս հատ. 7, կ. Պոլիս, 1918, էջ 775-781, (արաբատառ):

Այն էլ ասեմ, որ հայ պատմաբանին ծանօթացնելու համար ես այդ կանոնադրութիւնը օսմաներէնից թարգմանել եմ հայերէն: (Տե՛ս Վաւերագրական Նիւթեր Արեւմտահայերի մասին, ՀՍՍՀ ԳԱ, հասարակական գիտութիւնների գիտ. ինֆորմացիայի սեկտոր, թիւ 2, Երեւան, 1983, էջ 16-25):

Բնականաբար, սրանց շարքին կարող էին հրապարակուել այլ կանոնադրութիւններ եւս: Հարցը դրանում չէ, այլ նրանում, թէ որքանո՞վ այդ օրէնքները կիրառուեցին կեանքում: Իրականութիւնը այն է, որ դրանք երբեք չգործադրուեցին:

5. Ռուսաստանի դաշնութիւնը սովետներից դատարկուած Կովկասի հսկողութիւնը իրենց ազդեցութեան տակ վերցնելու, իսկ միւս երկրներն էլ Թուրքիային լիովին անկանելի դրութեան մէջ դնելու համար, հովանաւորեցին Հայաստանին՝ նուաճելու ատրպէյճանական հողերը: Մօտ մէկ միլիոն ատրպէյճանցի թուրքեր իրենց երկրում մնացին անտուն եւ անհող»: (էջ VI):

Այս հարցին հնարաւոր չէ մէկ-երկու տողով պատասխանել: Այն կարիք ունի մանրամասն մեկնաբանութեան, որը մեր նպատակից դուրս է: Սակայն հարց է առաջանում, ինչո՞ւ հեղինակը ոչ մի խօսք չի ասում Սումգայիթի հայութեան բարբարոսական կոտորածի, եւ դրա շարունակութիւնը հանդիսացող Պաքուի, Գանձակի եւ այլուր տեղի ունեցած հարիւր-հազարաւոր հայերի հալածանքներին եւ ահաբեկմանը: Ինչո՞ւ:

6. Ինչպէս 70 տարի առաջ, այնպէս էլ այսօր Արեւելեան եւ Արեւմտեան Եւրոպայի մի շարք պետութիւններ հովանաւորում են հայկական տեռորիզմը Թուրքիայի դէմ: Այն գլխաւորում են՝ Ֆրանսան, Պելճիքան, նախկին Խորհրդային Միութիւնը, իսկ հիմա Ռուսաստանի Դաշնութիւնը, Անգլիան, Գերմանիան եւ Յունաստանը: Այս ցուցակում անհրաժեշտ է ընդգրկել նաեւ արաբական երկիրները, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Արժանթինը: Ինչպէս երեւում է, Թուրքիայի դէմ հայկական տեռորիզմը հովանաւորող երկրների թիւը 70 տարուայ ընթացքում առաւել մեծացել է»: (էջ X):

Մենք մտադիր չենք մեկնաբանելու այս հարցը եւս, եւ չենք էլ ցանկանում մեր ուսերին այդքան ծանր բեռ վերցնել:

Եթէ ուզում են այս տհաճ sponsor*-ի դերից հրաժարուել եւ դուրս գալ այդ սեւ ցուցակից, թող վերոյիշեալ երկրների պատմաբաններն ու գիտնականները մտածեն ու հարկ եղած պատասխանը տան Եավուզ Էրջանին:*

Այսքան:

ՆՈՐ ՕՐ ● ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 24, 1996

Հայերի Ցեղասպանութեան Գլխաւոր Հանցագործ՝ Թալեաթ Փաշայի Հուշագրութեան Մասին

1946 թուականի սկիզբին Հիւսեյն Ճահիտ Եալչընի Համառոտ առաջաբանով և ամիջական հրատարակիչ՝ Էնվեր Պոլայընի «Երկու խոսքով», Ստամպուլում, լույս է, տեսնում այսպես կոչուած Թալեաթ փաշայի հուշերը: (Talat pasanin hatiralari):

Անհրաժեշտ է նշել, որ այս գրքույկը հեռու է կատարեալ հուշագրում լինելուց: Այդ հաստատում է նաեւ առաջաբանում նշուած Եալչընի հետեւեալ խօսքերով. «Սակայն պարագաներն ու պայմանները հնարաւորութիւն չտուին նրան գրելու իր կատարեալ հուշերը» (էջ. 5): Նոյն միտքն է արտահայտել նաեւ հրատարակիչը. «Թալեաթ փաշան իր մահից հետո մաքուր անունից եւ հուշերի մի մասը բովանդակող

տետրակից բացի, ոչինչ չթողեց: Այս «հուշերը» նրա գրաւոր միակ երկն է, որը ներկայումս մէծ հպարտութեամբ տպագրում ենք գրքի ձեւով» (էջ 8):

Թալեաթի հուշերի օսմաներեն բնագիրը ժամանակին չի հրապարակուել, եւ դրա գոյութեան մասին ոչ մի հիշատակում չի եղել թուրք պատմագրութեան մեջ: Գրքի սկզբում հրատարակիչների կողմից բերուած է Թալեաթի արաբատառ ձեռագրերից մի նմուշ, որը ոչ մի առնչութիւն չունի նրա հուշերի բովանդակութեան հետ: Այն ներքին գործերի նախարարի մի սովորական գրութիւն է: Մեզ համար առաւել համոզիչ կլիներ, եթե հրատարակիչները գրքի սկզբում բերեին Թալեաթի հուշերի օսմաներեն ձեռագրից մի հատուած:

Թե ինչ փոփոխութեան է ենթարկուած օսմաներեն բնագիրը, երբ այն վերծանուել է ժամանակակից թուրքերենի, մեզ անհայտ է: Այսուհանդերձ գրքի բովանդակութիւնը պարզ ցույց է տալիս, որ այն հրապարակուած է որոշակի նպատակով եւ լիովին համապատասխանում է տվյալ ժամանակվա ոգուն: Պարզ ասած, այնտեղ ամեն կերպ նենգափոխուած են փաստերը եւ պատմական իրականութիւնը:

Եթե մի կողմ թողնենք հուշերի սկզբում բերուած 1914-1918 թթ. Թուրքիայի ներքին եւ արտաքին իրադրությանը վերաբերող համառոտ շարադրանքը (այն կազմում է ընդամենը 30 էջ), ապա առանց վարանելու կարելի է ասել, որ այդ գիրքը նվիրուած է հիմնականում հայկական հարցի պատմութեանը (էջ 43-149):

Մեր կարծիքով, տուեալ գրքի հրատարակումն իր հիմքում ունեցել է մի նպատակ՝ Անդրկովկասում, թուրքերի նվաճողական նկրտումներից ելնելով, թուրք հասարակայնութեան շրջանում թշնամանք եւ ատելութիւն սերմանել հայ ժողովրդի հանդեպ: Հուշերի հեղինակը կաշվից դուրս է եկել ապացուցելու, որ ինքը մեղաւոր ու հանցաւոր չէ հայերի բնաջնջման խնդրում, որ հայերն իրենք են բռնութիւն գործադրել թուրքերի վրա, որ 1919թ. Կ. Պոլսում ռազմական արտակարգ ատեանի իր եւ ընկերների հանդեպ արձակուած մահուան դատավճիռը անտեղի էր եւ այլն...

Թալեաթ փաշայի «հուշերը» իր բովանդակութեամբ խիստ տարբերվում է միւս թուրք պետական գործիչների հուշերից: Այստեղ շատ քիչ տեղ է տրված անձնական գրառումներին եւ հիմնականում բերուած են փաստաթղթեր: Դրանք ամփոփուած են «հայերի ներքին դրութեան վերաբերող պատմական փաստաթղթերը »(էջ 45) գլխում:

Երկարատեւ պրպտումներից հետո մեզ հաջողուեց պարզել, որ այսպես կոչուած այդ «փաստաթղթերը» վերցուած են 1916թ. թուրքիայում լույս տեսած «հայ կոմիտեների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գրքից: (տե՛ս Ermeni Komitelerinin amal ve harekat-i iht ilalyasi արաբատառ թուրքերեն): Վերջինս լույս տեսաւ այն ժամանակ, երբ համաշխարհային հասարակայնութիւնը իրազեկ դարձաւ հայ ժողովրդի հանդեպ գործադրուած ցեղասպանութեան մասին: Թուրքական կառավարութիւնը, որպեսզի արդարացնի իր չարանենգ գործունեութիւնը, հրապարակեց այդ գիրքը՝ զետեղելով այնտեղ ամեն տեսակի զրպարտանք եւ խաբեութիւն արեւմտահայութեան հասցեին: Այդ գրքում զետեղուած

բազմաթիվ նկարներից 32-ը պատկերում էր զանազան զենքերի կուտակումներ, որոնք, իբրեւ թե, բռնագրավել են հայ հեղափոխականների թաքստոցներից:

Գրքի վերջում զետեղուած են նաեւ մի շարք նկարներ, որոնք պատկերում են իբրեւ թե կոտորածի ենթարկուած թուրքերի դիակները: Սա եւս կեղծ է եւ շինծու: Ահա թե ինչ է գրում 1915թ. հայկական կոտորածների ականատեսներից մեկը՝ ազգութեամբ արաբ Ֆայեզ էլ Հիւսեյնը.

«Թուրքական կառաւարութիւնը հասկացաւ, որ եվրոպական պետութիւններն առանց հապաղելու իրազեկ կդառնան հայ ժողովրդի ոչնչացմանը եւ այդ լուրը կտարածուի աշխարհով մեկ՝ լարելով հասարակական կարծիքը թուրքերի դեմ: Այդ իսկ պատճառով, մեծ թուով հայեր կոտորելուց հետո, կառավարութիւնը հրահանգ էր տուել իր գործակալներին՝ դիակներին քրդի հագուստ հագցնել, գլխներին քոլոզներ դնել: Դրանից հետո գալիս էին քուրդ կանայք, կրջապատում դիակները, սկսում լաց լինել ու բղաւել, թե հայերը սպանել են իրենց ամուսիններին: Այդ ամբողջ տեսարանը նկարահանվել է, որպեսզի հետո «ապացուցեն», թե հայերն են հարձակուել քրդերի վրա եւ սպանել նրանց, իսկ քրդական ցեղերը ոտքի են ելել, որպեսզի վրիժառու լինեն, թե կառավարութիւնը այդ ամենում ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել: Սակայն խելամիտ մարդիկ կռահեցին այս խաղը եւ այն շուտով հայտնի դարձավ դիարպեքիրում»: (Տե՛ս հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Մ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1966, էջ 360, ռուսերեն):

Կարծում ենք, որ այսքանն էլ բավական է հասկանալու համար, թե այդ ժողովածուն ինչ էր ներկայացնում իրենից եւ ինչ հետին նպատակների համար էր հրապարակուած: Ահա այս գրքից էլ Թալեաթը (գուցե եւ հրատարակիչները) բերել է բազմաթիվ զրպարտանքներով լի փաստաթղթեր: Հիշյալ գրքից վերցվել են ոչ միայն փաստաթղթեր, այլեւ տվեալ գրքում բերուած պարզ մեղադրական շարադրանք եւ էլ զետեղուել է հուշերի մեջ իբրեւ փաստաթուղթ:

Իրեն եւ իր նմաններին արդարացնելու եւ կատարուած ոճրագործութեան հանցանքը իր վրայից դեն նետելու միտումով, իր հուշերում Թալեաթը կաշուից դուրս է գալիս «ապացուցելու» իր անմեղութիւնը: Այսպես. «Գլխավոր շտապում «հայերի տեղահանման» վերաբերեալ մի օրենք պատրաստուեց եւ ներկայացուեց նախարարների խորհրդին: Ես, շարունակում է Թալեաթը, -կատարելապես դեմ էի այս օրենքի գործադրմանը, քանի որ ժանդարմերիան ամբողջութեամբ, իսկ ոստիկանութիւնն էլ մասամբ վերցուած էին զինուորական ծառայութեան, եւ նրանց փոխարեն նշանակուած էր միլիցիան: Ես գիտակցում էի, որ տեղահանումը այս միջոցներով գործադրելու դեպքում, կարող էր շատ վատ հետեւանքների հանգեցնել, ուստի, հեռուն մտածելով, պայքարեցի այդ օրենքի գործադրման դեմ եւ հաջողուեց մի առ ժամանակ հետաձգել այն» (էջ 64):

Այն հարցը, որ այստեղ իրականութիւնը կատարելապես աղավաղուած է, կասկած չի կարող լինել: Թալեաթի կողմից երկրի տարբեր

կողմերը առաքուած գաղտնի հեռագրերն ու հրահանգները միանգամայն պարզում են թէ՛ նրա վարքագիծը եւ թէ՛ նրա հանցանքի չափը:

Թալեաթ փաշան իր հանձնագործութիւնը թեթեւացնելու փորձ է կատարել նաեւ հետեւյալ հատուած ում:

«...Երբ Անատոլիայի զանազան տեղերում սկսուեց հայերի տեղահանումը, Ստամպուլի հայերի շրջանում եւ մասնաւորապէս կիմիտեներում տիրեց արտասովոր տագնապ: Հայ կոմիտեների վարչական կենտրոնը, այսինքն արտաքին կազմակերպութեան կենտրոնը, գտնվում էր Ստամպուլում: Այս քաղաքը կենտրոնն էր բոլոր տեսակի զինուորական շարժումների: Հետեւաբար ընդհանուր շտապը, նախ եւ առաջ Ստամպուլում որեւէ ապստամբութեան հնարավորութիւնը խափանելու եւ նեղուցների պաշտպանութիւնը կազմակերպելու նպատակով, իր ենթակայութեան տակ գտնուող ոստիկանական վերատեսչութեանը հրամայեց ձերբակալել եւ պաշարման շրջանից հեռացնել բոլոր այն անձանց, որոնք առնչութիւն ունեն կոմիտեի գործունեութեան հետ: Այս հրամանը տրվելուն պես ոստիկանական վերատեսուչը տեղեկացրեց ինձ: Փնտրուող անձերի մի մասը կովկասցի էր: Նրանք, մի գիշերվա ընթացքում ձերբակալվելով, ուղարկուեցին Գոնիա: Ավելի ուշ քննիչ հանձնաժողովի կողմից պարզուեց, որ սրանք Անգարայի զինուորական ատեան տարվելու ժամանակ սպանուել են ոստիկանների կողմից: ...ըստ էութեան, զինուորական նախազգուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք: Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղութիւնը»:(էջ 72-73):

Բերուած հատվածի սկզբում Թալեաթը, խուսանավելով, ձգտել է թաքցնել ճշմարտությունը: Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում էր մեկ գիշերվա ընթացքում Կ. Պոլսի հայ մտավորականների ձերբակալմանն ու աքսորմանը: Իսկ Արեւմտահայութեան ինքնապաշտպանութիւնը այս շրջանում ոչ թե ապստամբութիւն էր, ինչպես պնդում է Թալեաթը եւ հետագայում էլ միւս գործիչները արդարանալու միտումով, այլ գոյութեան կռիվ: Հայերը զենքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վտանգի առաջ:

Թալեաթ փաշայի ստորագրած ծածկագիր հեռագրերը բացահայտորեն ցույց են տալիս հայերի կոտորածների գլխաւոր կազմակերպիչներից մեկը գործունեութիւնը եւ մեղսակցութիւնը:

Այստեղ տեղին է վկայակոչել ռուս դիվանագետ՝ Մանտելշտամի հետեւեալ գնահատականը.

«Այո՛, Էնվերը եւ Թալեաթը՝ կայսրութեան երկու դիկտատորները, համարվում են հայկական կոտորածների գլխաւոր մեղավորները: Շատ հավանական է նաեւ, որ նրանք դրդուած լինեն հանցագործութեան չարաշնորհ դոկտորներ Պէհաէտտին Շաքիրի եւ Նազըմ պէյի կողմից: Բոլոր դեպքերում, այդ երկու հրեշների համագործակցութիւնը չի վերացնում Թուրքիայի այս երկու տիրակալների վրա ծանրացած մեղադրանքը: (Տե՛ս հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, էջ 450):

Թալեաթ փաշայի հուշերի վերջում բերուած է նաեւ երիտթուրքական կուսակցութեան պարագլուխների դեմ Ստամպուլում ծաւալուած դատական պրոցեսում մի քանի դատապաշտպանների ելոյթները: Պարզ է, որ այդ դատապաշտպաններն ամեն կերպ ջանացել են մեղմացնել նրանց գործադրած հանցանքը: Սակայն դատական ընթացքի մեղադրական ակտից բացահայտորեն երեւում է Թալեաթի եւ նրա նմանների գործադրած հանցագործութիւնը: Ահա այդ մեղադրական եզրակացութիւնից մի հատուած, որն անմիջապես առնչվում է Թալեաթ փաշայի հետ.

«Ներքին գործերի նախարարութեան հատուկ գրասենեակի պետ Իհսան պեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսի Քայմաքամի պաշտոնում, Կ. Պոլսից Հալեպ գործուղված Ապտուլլահատ Նուրի պէյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը (հայերի) ոչնչացումն է» եւ ավելացրել է նաեւ, որ ինքն այդ հարցով կապի մէջ մտնելով Թալեաթ պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (Թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկութիւնը»:

Կարծում ենք, որ մեղադրական եզրակացութիւնից բերուած այս հատուածը մեկնաբանութեան կարիքը չունի:

Այսպիսով, Թալեաթ փաշայի հուշերի վերլուծումը մեզ բերում է այն եզրակացութեան, որ արեւմտահայութեանը վերաբերող նիւթերը միտումնաւոր աղավաղուած են եւ չեն համապատասխանում իրականութեանը: Խիստ կասկածելի է նաեւ հուշերի հեղինակի ինքնութեան հարցը: Մի գուցե Թալեաթը ունեցել է օրագրութեան կամ հուշերի ձեւով շարադրուած էջեր, բոլոր դեպքերում հրատարակիչները նենգ նպատակներով ընդարձակել են դրա ծաւալը, խմբագրել եւ կցել շինծու «փաստաթղթեր»:

Թալեաթը, թուրք կին գործիչ Հալիտե Էտիբի վկայութեամբ, խոստովանելով հանդերձ իր անմարդկային արարքը, արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից. «Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ եւ հաջողվում է, աշխարհը ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի եւ ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար»: (Memoires of Halide Edip, New-York, London, թ. 387):

Թալեաթը, իսկապես, իր արժանի պատիժը գտաւ, երբ սպանուեց հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրեանի ձեռքով 1921թ. մարտի 15-ին Պերլինում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«ՆՈՐ ՕՐ» ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ՝ ՅԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ

1993 թ. Դեկտեմբերի 31-ին «Ասպարէզ» օրաթերթում լոյս ընծայեցի «Ե՞րբ ունենալու ենք մեր Օբբօ Ուուլֆերը» յօդուածը (էջ 33-34):

Դժբախտաբար, ո՛չ մի արձագանգ չստացայ առ այսօր տուեալ յօդուածում առաջ քաշուած հարցադրումի կապակցութեամբ: Ուստի կը ցանկանայի, որ այն նոյնութեամբ մէկ անգամ եւս արտատպուէր ձեր եռօրեայում հետեւեալ նկատառումներով:

Նախ նշեմ, որ եթէ այս օրերին հրատարակէի՝ այդ յօդուածը բնականաբար որոշ մասերը կ'ենթարկէի կրճատման եւ փոփոխութեան, յատկապէս նկատի ունենալով այն հանգամանքը, որ ես արդէն իմ մէջ ուժ եմ գտել կրկին նուիրուելու իմ ընտրած մասնագիտութեանը: Թող անհամեստութիւն չլինի իմ կողմից, արդէն այս վերջին 4 ամիսների ընթացքում տարբեր պարբերականներում Հայ Դատի պաշտպանութեան խնդրին նուիրուած հրատարակել եմ 8 ծաւալուն յօդուածներ: Սակայն վերոյիշեալ յօդուածում արծարծուող խնդիրը հիմնականում իմ մասին չէ, բանի որ ժողովրդական լեզուով ասած՝ «Ես այսօր կամ վաղը չկամ»: Խնդիրը մեր ապագայ սերնդին յուզող հարցերին է վերաբերում:

Իսկ այս անգամ վերոյիշեալ յօդուածը կրկին հրատարակելու խթանը հանդիսացաւ, երբ ձեր թերթի 1994 թ. Ապրիլի 23-ի թուում կարդացի Մինաս Գոճայեանի «Միա՞կը, եզակի զո՞հը... միշտ» յօդուածը: Այն նուիրուած է 1994 թ. Oscar-ի արժանացած ծագումով հրեայ բեմադրիչ՝ Սթիվըն Սփիլպըրկի՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում հրէական ողջակիզումին նուիրուած «Շինտլրի ցանկը» կինոժապաւէնի մասին: Իմ ուշադրութիւնը գրաւեց յօդուածում առաջ քաշուած հարցադրումներից 4-րդ կէտը, որտեղ ասուած է.

«Մենք՝ հայերս տակաւին չենք յաջողած առարկայական ու ենթակայական պատճառներով - համաշխարհային հանրութեան ներկայացնել ողջակիզումին նախորդած հայկական ցեղասպանութիւնը»:

Ճիշդ է եւ մեկնաբանութեան կարիքը չկայ:

Իսկ Շինտլրը (Schindler) եղել է կաթոլիկ *գերմանացի* յայտնի գործարար ու նախաձեռնող մի անձնաւորութիւն, որը բազմաթիւ արեւելեան հրեաներու կեանքն է փրկել իր գործարաններուն մէջ աշխատացնելով՝ ողջ մնալու չափ միայն վարձատրելով զանոնք:

Ահա այստեղից բխում է Մինաս Գոճայեանի կողմից առաջ քաշուած մի այլ հարցադրում եւս, որին եւս ես ուզում եմ ձայնակցել:

Մինաս Գոճայեանը իրաւամբ նշում է.

«Թուրքերու եւ Բիւրտերու մէջ Բի՞չ էին Շինտլերները, հապա արաբ ազգիւ ժողովուրդը, որ փրկեց մնացորդացը՝ տուն տալով մեր մեծ հայրերուն»:

Այո՛ Պր. Մինաս Գոճայեան, երիտթուրքերի կառավարութեան ղեկավարների եւ "Ittihat ve terakki" կուսակցութեան կենտրոնական կոմիտէի մտայղացած եւ գործադրած հայերի կոտորածի ընթացքում, թուրքերի մէջ էլ եղել են Շինտլերներ: Իրօք որ օրինակները շատ են եւ նամանաւանդ դրանք հաւաստում են փաստերով:

Ես կասկած չունեմ, որ ապագային աւելի ընդլայնուած կը խօսուի այդ մասին, երբ թուրքական կառավարութեան կողմից պաշտօնապէս կը ճանաչուի հայերի ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում կը ստանայ նրա հողային պահանջատիրութիւնը:

Այնուամենայնիւ, այստեղ ուզում եմ հպանցիկ նշել հետեւեալը:

Հակառակ այսօրուայ թուրքական ուրացումներին եւ հերքումներին, հայերի կոտորածների ընթացքում թուրք գործիչների եւ պաշտօնեաների մէջ եւս գտնուել են առանձին մարդիկ, որոնք ոչ միայն կողմնակից չեն եղել հայերին կոտորելու հրէշային ծրագրի իրականացմանը, նոյնականով ու ատելութեամբ են վերաբերուել տեղի ունեցող վայրագութիւններին, հրաժարուել են կատարելու կառավարութեան ինչպէս նաեւ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի գաղտնի հրամանները՝ հայ ժողովրդին տեղահանելու եւ կոտորելու հարցում: Այդպիսիները անմիջապէս հեռացուել են պաշտօնից, պատասխանատուութեան ենթարկուել են նոյնիսկ ներքին կարգով դատապարտուել մահուան:

Ահա նրանցից մի քանիսի անունները.-

Կաստամունիի նահանգապետ Ռեշիդ փաշան. (ի միջիայլոց այս անձնաւորութիւնը «ես իմ ձեռքերը արեան մէջ չեմ թաթախի» ասելով հրաժարուել է պաշտօնից):

Անքարայի նահանգապետ Մազհար պէյը:

Եոզկաթի նախկին մութասարրիֆ Զեմալ պէյը:

Քոնիայի եւ այնուհետեւ Հալէպի նահանգապետ՝ Զելալ պէյը:

Քէօթահիայի մութասարրիֆ Ֆայիք Ալի պէյը:

Բալուի մութասարրիֆի տեղակալ՝ Ալի Իլմի պէյը եւ ուրիշներ:

Հայերի տեղահանութեան հրամանից հրաժարուելու համար Տիարպէքիրի վալին սպաննել է տուել իր երկու քայմամամներին:

Իսկ 1919 թ. Կ. Պոլսում երիտթուրքերի կառավարութեան ղեկավարների եւ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի դատաքննութեան ընթացքում ներկայացուած մեղադրական եզրակացութեան մէջ նշուած է նաեւ հետեւեալ փաստը.

«Զանկըրին մտնում է Կաստամունիի մէջ եւ այդտեղի մահմեդականները շրջակայ վայրերում տեղի ունեցող դէպքերին վերաբերուել են ատելութեամբ: Նոյնիսկ մի օր, մի խումբ

մեծամեծներ եւ աւագանիներ իրենց միւֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիդ փաշային հետեւեալ խօսքերով. «Շրջակայ վիլայէթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթուող անասունների նման քշում են դէպի լեռները եւ այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր վիլայէթում այդպիսի բան կատարուի: Մենք վախենում ենք Աստծոյ ցասումից: Պետութիւնը ոչ թէ դաժանութեամբ է կառավարում, այլ բանականութեամբ: Խնդրում ենք, որպէսզի մեր վիլայէթում այսպիսի կոտորած տեղի չունենայ»: Այս անձինք արտասուալի աչքերով հեռացել են քաղաքագլխի մօտից, խօսք առնելով, որ իրենց վիլայէթում նման արարք չկատարուի»: (Takvim-i Vekai, 27 Nisan 1335 (1919) No. 3540):

Մենք մի քիչ շեղուեցինք մեր հիմնական հարցից: Ուրեմն կրկին անդրադառնալով Մինաս Գոճայեանի 4-րդ կէտին, նշենք, որ այսօր հակառակ կողմը կաշուից դուրս գալով միլիոնների է ծախսում իր կեղծ քարոզչական տեսակէտներն ու հերքումները ամբողջ աշխարհով մէկ տարածելու համար: Իսկ մեզ միլիոնների հարկաւոր չեն, քանի որ մեր դատը արդար է եւ զուլալ: Ուղղակի անհրաժեշտ է պատշաճ ձեւով կազմակերպել առաջ քաշուած հարցերը ու գործել խելամիտ ու նպատակասլաց:

Իսկ ինչ վերաբերում է մեր «Ե՞րբ ունենալու ենք մեր Օրթօ Ուուլֆերը» յօդուածին, իրօք որ ցաւ զգացի այն նկատառումով, որ ոչ ոք, ոչ մի կազմակերպութիւն չարձագանգեց դրան:

Այնուհանդերձ, գրութիւնս ուզում եմ աւարտել մի քիչ հիւմորով:

Պատահականութեամբ իմ յօդուածում բերուած հրեայ մեծահարուստ հայրենասէրի ազգանունը Wolf է: Եթէ ազգանունը հայերէն թարգմանէի պիտի ստացուէր՝ «Ե՞րբ ենք ունենալու մեր Օրթօ «գայլերը»: Յայտնի է, որ համաշխարհային գրականութեան մէջ, յատկապէս հեքիաթներում գայլն ունի բացասական կերպարի խորհրդանիշ: (Գուցէ՞ այդ մտավախութեամբ արձագանգ չեղաւ): Բայց հաւատացնում եմ «յարգելի արձագանգողներ», որ այս յօդուածում այդ խորագիրը թէկուզ եւ թարգմանութեամբ, բացառութեան կարգով ունի դրական կերպարի իմաստը: Բնականաբար այդ երեւում է մեր յօդուածի բովանդակութիւնից: Նոյնիսկ ոչ միայն դրական, այլեւ որպէ՛ս խիզախութեան եւ որպէ՛ս մեծ հայրենասէրի կերպար:

Ուրեմն այդպէս. կան հարցեր, որոնք կապուած են մեր ազգային շահերի եւ արժանապատուութեան հետ եւ մենք չպէտք է անտեսենք:

Յետոյ շատ ուշ կը լինի:

ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Լոս Անճելըս.

ՅՈՒՆԻՍ 15, 1994

ՆՈՐ ՕՐ ԵՌՕՐԵԱՅ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՅՈՒՆԻՍ 15, 1994

Ե՞ՐԲ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ՕԹԹՈ ՈՒՍՓԵՐԸ

Նախքան բուն բովանդակութեան անցնելը ուզում եմ յայտնել, որ ես պատմաբան եմ, հայ-թուրքական յարաբերութիւնների միջնադարի մասնագէտ, իսկ թեկնածուական թէզս պաշտպանել եմ 1967 թ. Յուլիսին Մոսկուայում, միջազգային ճանաչման արժանացած, հանրայայտ թրքագէտ Աննա Տվերիտինովայի ղեկավարութեամբ եւ այնուհետեւ 32 տարի շարունակաբար աշխատել եմ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտում:

1992 թ. Ապրիլին ճակատագրի բերումով յայտնուել եմ Լոս Անճելըսում:

Թոյլ տուէք մի երկու հատուած բերել հայ մամուլից Ցեղասպանութեան հարցին նուիրուած, քանի որ Նման Նիւթերի ընթերցումն էր, որ խթան հանդիսացան սոյն յօդուածը գրելուս:

Առաջին հատուածը, փրոֆ. Վահագն Տատրեանի մտքի արգասիքն է, որը վերջերս Ցեղասպանութեան խնդրին նուիրուած մի շարք փայլուն դասախօսութիւններ տուաւ Լոս Անճելըսում:

«Ցեղասպանութեան Հարցի ակադեմական բարձր մակարդակի քննարկումը կրնայ նպաստել անոր միջազգային ճանաչման արժանացման: Հսկայ աշխատանք կայ կատարուելիք, նամանաւանդ Անգլիոյ, Գերմանիոյ, ԱՄՆի, Աւստրիոյ, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ այլ երկիրներու արխիւներու պրպտումին մէջ:

Գործ մը, որ կարելի չէ քանի մը հոգիով գլուխ հանել, այլ կ'ենթադրէ մասնագէտներու խումբի մը կազմութիւն ու հետեւողական ու ծրագրուած աշխատանք, որուն նեցուկ պէտք է կանգնին ժողովուրդն ու բարեսիրական եւ այլ կազմակերպութիւններ»: («Մասիս», Նոյեմբեր 20, 1993, էջ 6):

Երկրորդ խթանող հատուածը վերցրել ենք Սալբի Բագրատունու՝ «Ցեղասպանութիւնը՝ դաստիարակիչ պատմութիւն» յօդուածից, որը լոյս էր տեսել «Ասպարէզ» օրաթերթում, թիւ 9446, Փետրուար 13, 1993, էջ 5:

Այս յօդուածում հիմնականում խօսւում է «Ցեղասպանութեան թանգարանի» հիմնադիր ազգութեամբ հրեայ Օթթո Ուսլֆի անձնական նուիրուածութեան մասին, «որը մէկ միլիոն տոլար նուիրատուութեամբ յայտնած է թէ՝ անձի մը նախաձեռնութիւնը եւս կրնայ տարբերութիւն ընել»: Այսինքն՝ Օթթո Ուսլֆի խօսքերով՝ "If an action I take can make a difference, I will take it" (Եթէ առնելիք քայլս որեւէ տարբերութիւն կ'ընէ, այդ քայլը կ'առնեմ): Նա ասել է նաեւ հետեւեալ խիստ շահեկան խօսքերը. "The Holocaust Museum is not going to bring back anyone, but by educating future generations it may prevent something..." («Ցեղասպանութիւն թանգարանը» ետ պիտի չբերէ ոեւէ անհատ, բայց դաստիարակելով նոր սերունդը, կրնայ թերեւս բան մը կանխել...»:

Հիմա անցնենք յօդուածիս բուն մտքին: Լինելով օսմաներէնի (արաբատառ հին թուրքերէն) գիտակ եւ աղբիւրագէտ-պատմաբան վերջին տարիներին որոշ նիւթերի առկայութիւնը ստիպեցին ինձ զբաղուել նաեւ հայերի ցեղասպանութեան հարցերով եւ 1988 թ. հրատարակեցի «Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի, դատավարութեան փաստաթղթերի» գիրքը, որը հետագայում թարգմանուեց եւ հրատարակուեց անգլերէն եւ արաբերէն լեզուներով:

Նկատի ունենալով, որ այս հարցը հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական էջերից մէկն է, իմ աշխատանքի ընթացքում սկսեցի նիւթեր հաւաքել նաեւ այս ուղղութեամբ: Սակայն, ինչպէս նշեցի ճակատագրի բերումով եկայ Լոս Անճելըս: Մտադրութիւն ունէի այստեղ եւս նախկին եռանդով շարունակել իմ աշխատանքը, քանի որ լաւ տիրապետում եմ նաեւ անգլերէն լեզուին: Ուստի անգործ չմնալու, մի զգաղմունք գտնելու ցանկութեամբ, թէկուզ եւ բարոյական աջակցութիւն գտնելու միտումով դիմեցի տեղի հայ հեղինակաւոր անձանց, նոյնիսկ առանձին հայ կազմակերպութիւններին: Ցաւօք սրտի բոլոր գրութիւններս մնացին անպատասխան: Ապրեցի խորը հիասթափութիւն, մարդկանց անտարբեր վերաբերմունքից. որոշ առումով յուսալքուեցի: Բայց միթէ՞ հայը իրաւունք ունի յուսահատուելու կամ

վհատելու: Ունէի այն հաւատքը, որ այդ բոլորը ժամանակաւոր են, օր կը գայ կրկին կը լիցքաւորուեմ եւ կրկին կը նուիրուեմ իմ ընտրած դժուարին մասնագիտութեան:

Իսկ իրականութեան մէջ այդ ուղղութեամբ հսկայական գործ կայ անելու, եւ այն էլ ոչ մէկ հոգու համար: Խօսքս Թուրքիայի արխիւներում եւ այլ երկրների հնադարաններում պահուող օսմաներէն արխիւային նիւթերի մասին է: Որոշ պատկերացում կազմելու համար բերենք մի երկու փաստ:

Դեռեւս դարասկզբին պոլսահայ իրաւագէտ Սարգիս Կարագէզը հաւաքել է Սթանպուլի հայ եւ յոյն առաջնորդարանների արխիւային փաստաթղթերը եւ կազմել «Քիւլիաթի Կաւանին» օրէնքների ժողովածուն, որն այսօր անտիպ վիճակում պահւում է Թուրքական պատմական ընկերութեան ձեռագրային ֆոնտում: «Քիւլլիաթի Կաւանին»ը բաղկացած է 40 թղթապանակներից, որոնք պարունակում են 35.000 փաստաթղթեր:

Իսկ արդի Թուրք պատմաբան Եաւուզ Էրջանի տուեալներով այսօր Թուրքիայի արխիւներում հայերին վերաբերող արխիւային նիւթերը հերթականութեամբ դասաւորուած են հետեւեալ վերնագրերի տակ.

1.- 1860-1904 թթ. հայերին վերաբերող վճիռների դաֆթար (տետրակ):

2.- 1839-1910 թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար:

3.- 1820-1857 թթ. հայերին վերաբերող հնագոյն վէհիոների դաֆթար:
4.- 1911-1915 թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար:

7 առանձին խմբերով դասաւորուած են նաեւ 1869-1921 թթ. վերաբերող արեւմտահայերի «եկեղեցական դաֆթարները»:

Ձեմ ուզում յօդուածս ծանրաբեռնել այս ուղղութեամբ, որովհետեւ նիւթերը շատ ու շատ են: Միմիայն ցանկանում եմ աւելացնել, որ այսօր Սփիւռքում բնակւում են բաւականաչափ թուով հայեր: Եւ չի բացառուած, որ նրանցից շատերը Արեւմտեան Հայաստանից բռնագաղթուած իրենց պապերից ժառանգած չլինեն թուրքերէն գրուած փաստաթղթեր, այդ թուում կալուածագրեր, ապահովագրական, պայմանագրային, առեւտրական գրութիւններ, կամ էլ պատմական արժէք ներկայացնող այնպիսի նիւթեր, որոնց վերծանումն ու թարգմանութիւնը, անձնական հետաքրքրութիւնից բացի, կարող են օգտակար լինել հայ ժողովրդի պատմութեան ուսումնասիրութեան համար: Օրինակ իմ աշխատանքին զուգընթաց, Երեւանի Արուեստի եւ Գրականութեան Թանգարանում յայտնաբերեցի եւ թարգմանաբար հրատարակեցի Գրիգոր Զօհրապի գրչին պատկանող մի քանի օսմաներէն գրութիւններ: Եւ դեռեւս ես անելիքներ ունեմ այդ ուղղութեամբ:

Եթէ չեմ սխալւում մօտ 3 տարի առաջ Թուրքիան աշխարհով մէկ յայտարարեց, որ մասնագէտների առաջ բացում է նորագոյն շրջանին վերաբերող արխիւային նիւթերը: Էաւ յիշում եմ (այն մամուլում եւս արձագանգուեց): Երեւանից եւ թէ՛ Սփիւռքից մի խումբ հայ պատմաբաններ անմիջապէս գործնական քայլերի դիմելով պատրաստակամութիւն յայտնեցին մեկնելու Թուրքիա: Անշուշտ այն խրախուսելի արարք էր, բայց, ի զարմանս ինձ այդ պատմաբաններից ոչ մէկը չգիտեր օսմաներէն լեզուն...:

Ուրեմն ինչո՞ւ մեր հետագայ սերունդների մասին չհոգալ եւ այսօրուանից չմտածել այդ ուղղութեամբ մասնագէտներ պատրաստելու խնդրով: Ինձ թուում է կը գտնուեն հայ երիտասարդներ, որոնք կ'ուզենային մաս ուգիտանալ այդ ուղղութեամբ: Նման հարցում օգտակար դառնալը ինձ առաւել եւս մեծ հաճոյք կը պատճառէր: Յամենայնդէպս նշեմ, որ դա այնքան էլ հեշտ մասնագիտութիւն չէ, նախ պահանջուում է որոշ արեւելեան լեզուների իմացութիւն (թուրքերէնից բացի, որպէս երկրորդ լեզու՝ արաբերէն կամ պարսկերէն) եւ քրտնաջան աշխատանք:

Եզրակացնելով ցանկանում եմ կրկին անդրադառնալ վերոյիշեալ երկու հատուածների բովանդակութեանը եւ ասել, որ մենք լիովին համաձայն ենք տարբեր երկրներում գտնուող եւ ցեղասպանութեան հարցի հետ առնչուող արխիւային նիւթերի ուսումնասիրութեան: Առաւել եւս անհրաժեշտ համարելով թուրքական արխիւային նիւթերի ուսումնասիրութիւնը:

Կարծում ենք, որ այս հարցի բարեյաջող գործընթացի համար կ'ունենանք նաեւ մեր հայ Օթթօ Ուուլֆերը:

Երախտագիտութեան Խօսք Անաթոլ Ֆրանսի Յիշատակին

Օրերս լրացաւ Ֆրանսիացի մեծանուն գրող, հրապարակախօս Անաթոլ Ֆրանսի (1844-1924) ծննդեան 150ամեակը: Նրա յորելեանական տարելիցը ըստ արժանւոյն նշուեց Երեւանում, Մայիսի 25ին, Հայաստան-Ֆրանսիա Ընկերութեան նախաձեռնութեամբ, Արտասահմանեան Երկիրների հետ Մշակութային Կապի Կոմիտէի դահլիճում:

Անաթոլ Ֆրանսը եղել է առաջին մարդասէր անձնաւորութիւններից մէկը, որն իր գրական ստեղծագործական աշխատանքին զուգընթաց եռանդուն մասնակցութիւն է հանդէս բերել կանխելու արեւմտահայութեան հալածանքները օսմանեան կայսրութիւնում:

Գրական գործունէութիւնը սկսել է որպէս լրագրող եւ բանաստեղծ: Հանրայայտ ճանաչում է ստացել 1881 թ. հրատարակուած «Սիլվեստր Պոնարի Ոհիրը» վէպով: (Այն լոյս է տեսել հայերէն 1922 եւ այնուհետեւ 1976 թթ.): Գրել է բազմաթիւ պոէմներ, պատմուածքներ, վէպեր, ինչպէս նաեւ երգիծական քառերգութիւններ, որտեղ վաւերագրական հշգրտութեամբ վերարտադրել է 19րդ դարի Ֆրանսիայի քաղաքական կեանքը: Իր հրապարակախօսական աշխատանքներում ջատագովել է գնոմոկրատիան, սոցիալիզմի գաղափարախօսութիւնը, որպէս ապագայի օրինաչափ եւ դրական իտէալ:

1896 թ. ընտրուել է Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, իսկ 1921 թ. արժանացել է Նոպէլեան մրցանակի գափնեկրի բարձր տիտղոսին:

Անաթոլ Ֆրանսը սերտ չփման մէջ է եղել նաեւ հայ ականաւոր գրող Արշակ Զոպանեանի հետ, օգնել է նրան կաղմակերպելու հայ ժողովրդի պատմութեանը, մշակոյթին նուիրուած հաւաքոյթներ եւ գիտաժողովներ: Ի զուր չէ, որ նրա ստեղծագործութիւնների զգալի մասը թարգմանուել եւ հրատարակուել է հայերէն լեզուով: Ահա դրանցից մի քանիսը. «Երեք Դար ու Կէս Յետոյ», «Ծննդեան տօնի ֆանտազիա», Ալեքսանդրուպոլ, 1912: «Կարմիր Շուշան», Երեւան, 1966: «Սպիտակ Քարի Վրայ», «Աստուածները Ծարաւի Են», «Հրեշտակների Ապստամբութիւնը», Երեւան, 1959 եւ այլ գործեր:

Ինչպէս նշեցինք Անաթոլ Ֆրանսը եղել է տառապեալ հայ ժողովրդի, նրա հոգեւոր եւ նիւթական արժէքների աննկուն պաշտպանը եւ մինչեւ իր կեանքի վերջը մնացել է, որպէս հաւատարիմ բարեկամ եւ ողջունել նրա վերածնունդը: Նա իր ամբողջ էութեամբ դատապարտել է Ապտիլ Համիտեան բռնատիրու-

Ինան չրջանում տեղի ունեցած հայերի հալածանքները, ինչպես նաև հետագայում Երզնկայի դահիճների արեւմտահայութեան իսպառ բնաջնջելու ցեղասպան բաղաքականութիւնը:

Դեռեւս 1894-96 թթ. Ապտիլ Համիտի դաժան նախաձեռնութեամբ կազմակերպուած հայերի կոտորածների ընթացքում անձամբ մասնակցել է նուիրատուութիւնների հանգանակմանը եւ նուիրուել որբացած հայ երեխաներին սովից փրկելու վեհ գործին:

Այնուհետեւ 1900-1914 թթ. Անաթոլ Ֆրանսը այլ հանրայայտ մարդասէրներ՝ Ժան Ժորէսի եւ Ֆրանսիս տը Պրէսանսէի հետ ընդգրկուել է Փարիզում հրատարակուող Pro Armenia հանդէսի խմբագրական կազմի մէջ եւ եռանդուն գործունէութիւն ծաւալել վերջ տալու հայերի հալածանքներին:

1903-1904 թթ. մասնակցելով «Ի պաշտպանութիւն Հայաստանի եւ Մակեդոնիայի» կոմիտէի Եւրոպայի տարբեր երկրներում կազմակերպած խարհրդաժողովներին, իր ուժ եւ դիպուկ կոչերով անարգանքի սիւնին է դամել հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին:

1903 թ. Մայիսի 24ին, Հռոմի "Adriano" թատրոնի դահլիճում արտասանած ճառում Անաթոլ Ֆրանսը նշել է. «Սուլթան Ապտիլ Համիտ երկրորդը մի հրեշ է, որը մոլեգնաբար դարձել է իր խղճուկ ամենազօրութեան մէջ, եւ, տարատեսակ իր իսկ ոճրագործութիւններից, իրեն հանգստացնում է նրանով, որ նոր ոճիրներ է գործում: 1893թ. մինչեւ 1896 թ. նա կոխել ու ոչնչացրել է 300.000 հայերի եւ այդ ժամանակից սկսած նոգիայի զգուշաւորութեամբ գրաւում է որբացած ժողովրդի հետեւողական բնաջնջմամբ...»:

Մի յոդուածի առիթներում հնարաւոր չէ մանրամասն կանգ առնել

Անաթոլ Ֆրանսի գրական, հրապարակախօսական, քաղաքական գործունէութեան, եւ յատկապէս հայ ժողովրդին նուիրուած նրա ճառերին եւ գրուածքներին, որոնք բաւականին շատ են: Այնուհանդերձ, որոշակի պատկերացում կազմելու համար նրա մարդասիրական գործունէութեանը, ստորեւ բերում ենք մի հատուած 1916 թ. Ապրիլի 9ին Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում, Հայաստանին նուիրուած երեկոյի ընթացքում արտասանած ճառից: Այն յոյս է տեսել "Amities Franco-Etrangeres" թիւ 4, Մայիս-Յունիս, հանդէսում, էջ 33-35: Հատուածի հայերէն թարգմանութիւնը քաղել ենք ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ 1991 թ. Երեւանում հրատարակուած «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուից: Տես էջ 527-529:

* * *

Երբ քսան տարի առաջ Սուլթան Ապտիլ Համիտի կազմակերպած ջարդերը արեամբ հեղեղեցին Հայաստանը, Եւրոպայում միայն մի քանի ձայն, մի քանի վրդովուած ձայներ բղղոքեցին մի ամբողջ ժողովրդի խեղդելու դէմ: Ֆրանսիայում խիստ ընդդիմադիր կուսակցութիւնների պատկանող աննշան թուով մարդիկ միաւորուեցին պաշտպանելու խորապէս անարգուած մարդկութեան իրաւունքները...: Մնացածները համր էին: Շատերը խորին խղճահարութեամբ համակուեցին հայերի հանդէպ, բայց քանի որ սովորաբար մարդկանց մեծամասնութիւնը երես է թեքում դժբախտներից, ապա շատերը կարողացան հիմքեր գտնել մեղադրելու զոհերին, նրանց կրչտամբելով թուլակամութեան մէջ: Ոմանք, պաշտպան կանգնելով դահիճներին, վերջիններիս պատկերում էին իբրեւ մարդկանց, որոնք պատժում են խռովարարների կամ վրէժ լուծում այն թուրք բնակիչների համար, որոնց սնանկացրել են քրիստոնեայ վաշխառուները...

Սակայն, չնայած հայասէրների բողոքներին եւ մի քանի տէրութիւնների վեհերոտ դիմումներին, հակառակ թուրքական կառավարութեան հաւաստիացումներին, հալածանքները՝ երբեմն խլացուած ու քօղարկուած, չէին դադարում: Պալատական յեղաշրջումը անհարկի փոխեց կայսրութեան ղեկավարներին: Երիտթուրքերը, տիրանալով իշխանութեանը, իրենց դաժանութեամբ գերազանցեցին Ապտիլ Համիտին, կազմակերպելով Ատանայի կոտորածը: Ժամանակի ընթացքում Արեւելքի այդ քրիստոնեաների դրժբախտութիւնները ձանձրացրին մարդկանց, հայերը մնում էին օտար քաղաքակիրթ Եւրոպային: Հայ ժողովրդին մենք գիտէինք ոչ այլ կերպ, քան այն հարուածներից, որ հասցնում էին նրան: Մենք պատկերացում չունէինք ոչ նրա անցեալի, ոչ նրա ոգու եւ դաւանանքի, ոչ էլ նրա բաղձանքների մասին: Անհասկանալի էր մնում, թէ ինչու էին նրան կոտորում:

Այդպէս էր դեռ մի երկու տարի առաջ: Պայթեց համաշխարհային պատերազմը: Թուրքիան նրա մէջ մտաւ որպէս Գերմանիայի կամակատար: Եւ յանկարծ Հայաստանն ու նրա մարտիրոսութեան պատճառները միանգամայն այլ լոյսի ներքոյ յառնեցին Ֆրանսիայի առջեւ: Մենք հասկացանք, որ թուրք կեղեքչի եւ հայի տեւական անհաւասար պայքարը՝ բռնակալութեան պայքարն է, բարբարոսութեան պայքարը ընդդէմ արդարութեան ու ազատութեան ոգու: Եւ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ յառուած մարող աչքերով, որոնց մէջ յոյսի չող առկայծեց, մենք վերջապէս հասկացանք, որ այդ մեր քոյրն է մեռնում Արեւելքում եւ մեռնում է հենց նրա համար, որ նա մեր քոյրն է, որի յանցանքն այն է, որ նա համակուած էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, մտածում էր այնպէս, ինչպէս մենք ենք մտածում, հաւատում էր նրան, ինչին մենք ենք հաւատում, եւ մեր նման գնահատում էր իմաստութիւնը, արդարութիւնը, քերթութիւնը, արուեստը: Սա էր նրա անքաւելի յանցանքը:

Հետեւաբար, տիկնայք եւ պարոնայք,՝ հարկաւոր է, որ Ֆրանսիացիների հաւաքը պատշաճը հատուցի անհուն դժբախտութեան մատնուած այդ ժողովրդին: Մենք կատա-

ում ենք մեր սրբազան պարտքը. Հայաստանին մատուցում նրան արժանի մեծարանքներ՝ ոչ այնքան բոլորին յայտնի տառապանքների համար, որքան այն տոկունութեան համար, որով նա դրանք տանում է...

Ի դէպ, մեզ սիրող այդ ժողովրդին ընաջնջելու որոշումն ընդունել էր Թուրքական կառավարութեան խորհրդակցութիւններում: Բոլոր հայերը, որքան որ կային Սամսոնից մինչեւ Տիարպէքիր՝ երիտասարդներ, ծերունիներ, կանայք, երեխաներ, նրանք բոլորը զոհուեցին, սպանուելով Սուլթանի հրամանով, Գերմանիայի յանցակցութեամբ:

Հայաստանը վերջին չնչումն է, բայց նա կը վերածնուի:

Արեան այն փորը քանակութիւնը, որը նա դեռեւս պահպանում է, թանկագին արիւն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, երբե՛ք չի մեռնի...

«ԱՍՊԱՐԷԶ», ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 29 ՅՈՒՆԻՍ 1994

ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻՑ

ԵՍ ԾՆՈՒԵԼ ԵՄ ԱՌԱՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայրս՝ Համբարձում Յակոբի Փափազեանը եղել է Հնչակեան Կուսակցութեան անդամ եւ գործունեայ հասարակական աշխատանք է տարել հայ համայնքի շրջանում, լինի Թուրքիայում եւ հետագայում էլ Սիրիայում եւ Լիբանանում: Զբաղուել է առեւտրով եւ գործի բերումով յաճախակի շրջագայել Թուրքիայի բազում քաղաքներում: Գերադանց տիրապետել է օսմանեան լեզուի եւ օսմանեան կայսրութեան պատմութեանը:

Մայրս՝ Մարի Փափազեանը հրաշքով ազատուել է թէ Արդուլ Համիդեան կոտորածի եւ թէ 1915 թ. երիտթուրքերի գործադրած հայաջնջ ցեղասպանութիւնից: 1921 թ. իր ամուսնու հետ յաջողուել է տեղափոխուել Լաթաքիա (Սիրիա): Իսկ ծնողիս հարազատներից մի քանիսը տեղահանութեան օրերին եւ յետոյ աքսորի ճան ապարհին զոհ են գնացել Թուրքական վայրագ կոտորածներին:

Երբ ես չափահաս դարձայ, մօրիցս յաճախակի լսում էի Եղեռնի օրերի դաժանութիւնների, սովի եւ վարակիչ հիւանդութիւնների, սպանութիւնների մասին: Մէկ անգամ չէ, որ մայրս դառը դրուագներ է պատմել Եղեռնի օրերի մեր ազգականների անցկացրած մղձավանջային պահերի եւ նրանց կրած տառապանքների մասին: Նրա պատմածները այնքան տպաւորիչ եւ ցնցող էին, որ մինչեւ այսօր իմ յիշողութիւնից չի հեռանում եւ առիթը ներկայանալու դէպքում պատմում եմ ընկերներիս ծանօթներիս:

Շատերը լսելով, նոյնիսկ խորհուրդ էին տալիս գրել եւ հրատարակել այդ բոլորը: Ահա եւ կատարում եմ նրանց խորհուրդը:

Ուրեմն, այսպէս նախ նշեմ, որ մայրս Թրքախօս էր: Երբեմն մեր հարցումներին թէ որ դէպքը որ թիւին կամ ամսին է եղել, չէր կարողանում ստոյգ յիշել: Նոյնիսկ չգիտեր իր ծննդեան թիւը: Բայց անընդհատ կրկնում էր թէ՝ «Ben birinci kitalda dogmusum» (Ես ծնուել եմ առաջին կոտորածի ընթացքում): Անկեղծ ասած ես եւս ուշադրութիւն չէի դարձնում այդ խնդրին, ըստ երեւոյթին չէի հասկանում «kital» բառի իմաստը, կամ երբ է այն տեղի ունեցել:

Հետագայում երբ դարձայ Թրքագէտ-պատմաբան բնականաբար հետաքրքրութեամբ «վերծանեցի» մօրս ծննդեան թուականը: «Ben Birinci kitalda dogmusum» ասելով պատմում էր հետեւեալի մասին. «Առաջին կոտորածի ընթացքում ծնողքներս սարսափահար ինձ բարուրի մէջ դրած յանձնել են իրենց Թուրք հարեւանին եւ մի քանի օրով փախել են դէպի լեռները եւ պատսպարուել անտառների մէջ: Այնուհետեւ իրավիճակը որոշ առումով հանդարտուելուց յետոյ վերադարձել են եւ ինձ վերցրել...»:

ՄԷԿ ԷԼ ԱՅՍ ԿՈՂՄԵՐԸ ՉԵՐԵԻԱՆ

Հայրս առեւտրական գործերի առնչութեամբ մի առ ժամանակ բնակութիւն է հաստատել Ատանայում: Մի օր լսում են, որ իրենց կողքի Թուրք հարեւանը, դողութիւն կատարելու յանցանքով սպանելու աստիճան ծեծում է իր որդին: Աղմուկը, ծեծկռտուքը, լացն ու կոծը այնքան է ազդում մորս վրա, որ

խնդրում-պաղատում է հօրս ազատել տղային: Իրոք, որ մի կերպ տղային ազատելով բերում է մեր տուն: Այնուհետեւ երբ կրքերը հանդարտուում են նրան յանձնում են ծնողին եւ հաշտեցնում: Շուտով ծնողները տեղափոխուում են իրենց մշտական բնակավայրը՝ Նիկդէ: Անցնում է մի քանի տարի եւ կրկին տեղահանութեան եւ կոտորածի բոթը հասնում է իրենց գիւղ: Այդ օրերին հայրս առեւտրական գործերով զտնուելիս է եղել Թուրքիայում Բելեմետիք քաղաքում: Այստեղ Թուրք զինուորները ձերբակալում են հօրս եւ 7 այլ հայերի հետ, ձեռքերնին կապած նախապատրաստում են բարձրացնել կախաղան: Հրամանը ի կատար ածելու ընթացքում մտրակը ձեռքին, գազազած վրայ է հասնում մի երիտասարդ Թուրք սպայ: Հայհոյելով, հարուածելով եւ զոռոցով ասում է հօրս. «Ես գիտեմ թէ դու ով ես. քեզ սպանելու ենք տանջամահ անելով»: Եւ մտրակի հարուածների տակ տանում է ինչ որ մի խուց եւ այնուհետեւ ազատ է արձակում ասելով. «Գնա Համբարձում էֆէնտի, գնա: Մէկ էլ այս կողմերը չերեւաս,,:

Ընթերցողը երեւի կռահեց: Այդ երիտասարդ սպան հենց այն Թուրք հարեւանի որդին էր եղել, որին հայրս ազատել էր գազազած հօր ձեռքից:

Մազապուրծ ազատուելով մահուան ճիրաններից, հայրս այդ օրուանից երդւում է ասելով. «Այսուհետեւ որքան որ ապրեմ եւ ինչ որ վաստակեմ, չահածս կիսելու եմ աղքատներին եւ չքաւորներին»:

Իրօք որ հետագայում մեր ազգականները երախտագիտութեամբ եւ հպարտութեամբ պատմում էին հօրս կատարած բարեգործութիւնների մասին: Այդ մղձաւանջային օրերին հայրս իր ոժի ներածի չափ, նոյնիսկ աւելիով պատսպարել եւ ապրուստն է հոգացել աքսորից մազապուրծ ազատուած հայ գաղթականներին:

ՍԱ ԱՒԵՏԻՍ ՁԱՈՒՇԻ ԱՐԱՐՔՆ Է

Այս դրուագը հօրեղբօրս՝ Աւետիս (Զաուշ) Փափազեանի մասին է: (Նրա յիշատակը պայծառ պահելու համար ինձ կնքել են նրա անունով):

Հօրեղբայրս՝ Աւետիս Զաուշը եղել է Թուրքական բանակի սպա եւ իր առնականութեամբ եւ բարութեամբ լաւ համբաւ է ձեռք բերել իր շրջապատում:

Բռնի տեղահանութեան օրերին Թուրքական ջոկատը, որի մէջ եղել է հօրեղբայրս, իջեւանել է ինչ-որ մի հայկական գիւղի մօտակայքում: Հրամանատարութիւնը ամէն գիշեր, թաքուն եւ ընտրովի գիւղի հայ աղջիկներին բերելով, բռնաբարել են, ենթարկել անարգանքի իսկ դիմակայողներին նոյնիսկ սպանել:

Այս բոլորը աննկատ չի մնում հօրեղբորս աչքից: Ինչ որ ձեւով ինքը տեղեկանում է, որ յաջորդ օրուայ զոհերն են լինելու խեղճ ու կրակ եղկու սիրասուն որբ քուլյրեր իրենց մօր հետ միասին: Հօրեղբայրս թաքուն կազմակերպում է ոչ միայն նրանց, այլեւ 16 ուրիշ կոյս հայ աղջիկների փախուստը: Գիշերը հրամանատարութեան պահանջով «որսի» գնացած զինուորները վերադառնում են դատարկաձեռն: Բնականաբար կասկածում են հօրեղբորս վրայ եւ ասում. «Bu Avetis causun isidir» (Սա Աւետիս Զաուշի արարքն է):

Յաջորդ օրը ձիու վրայ դաւադրաբար թիկունքից կրակում են հօրեղբորս վրայ եւ սպանում:

Մարիամ տատիկս երբ իմանում է իր զաւակի եղեռնական մահուան մասին տեղն ու տեղը կորցնում է աչքի տեսողութիւնը եւ կարճ ժամանակամիջոցին չդիմանալով ծանր վշտին մահանում է: Հօրեղբորս կինը՝ Մարիցան զոհ է գնում աքսորի ճանապարհին:

Իրենց մինուճար՝ 6 տարեկան սիրասուն աղջնակը որբանալով, սկզբում յայտնւում է Թուրքերի ձեռքին, իսկ յետոյ նրան վաճառում են երեխայ չունեցող արաբ մեծահարուստ մի ընտանիքի Դամասկոսում:

Բարեբախտաբար կարճ ժամանակամիջոցում հայրս կարողանում է գտնել իր եղբօր միակ ժառանգի յետքերը:

Մի կողմից՝ տեղի հայ Առաջնորդարանի ներդրած եռանդուն միջնորդութեամբ, մի՞ կողից հօրս թափած ջանքերի շնորհիւ (դատարան, կաշառք...) կարողանում են ազատել: Այնուհետեւ հայրս պահում եւ մեծացնում իր եղբօր աղջկան մեր յարկի տակ, որպէս իր հարազատ զաւակը:

Այսօր այդ փոքրիկը, այսինքն իմ մեծ քոյրը՝ Թագուհի Մանուկեանը մօտ 85 տարեկան է եւ ապրում է Նիւ Եորքում իր զաւակների եւ թոռների համերաշխ շրջապատում:

ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ԵՒ ԳՈՅԱՏԵՒՈՒՄ

Այս դրուագը, որ պիտի պատմեմ ինձ հետ է առնչւում: Ինչպէս վերեւում նշեցի ճակատագրի բերումով ձեռք բերեցի Թորքագէտ-պատմաբանի մասնագիտութիւնը եւ 32 տարի չարունակաբար աշխատեցի Հայաստանի Ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտում:

Տարիներ առաջ, մի օր ինձ հրաւիրեցին «Արուեստի եւ Գրականութեան Թանգարան» ոսումնասիրելու եւ թարգմանելու Գրիգոր Զոհրապի ձեռագրային ֆոնտը, յատկապէս մեծ եղեռնի օրերին, աքսորավայրից իր սիրեցեալ կողակցին՝ Գլարա Զոհրապին ողղուած նրա օսմաներէն նամակներն ու հեռագրերը: Նշեմ, որ այդ նիւթերը խիստ անհրաժեշտ էին Թանգարանի աւագ գիտնական Գոհար Ազնաւուրեանին, քանի որ տուեալ ժամանակ նա ուսումնասիրութեան նիւթ էր դարձրել Գր. Զոհրապի աքսորավայրի ոդիսականը:

Սկսեցի կարդալ եւ վերծանել մեծ գրողի, հրապարակախօսի, միջազգային համբաւի արժանացած իրաւարանի եւ 1908-1915 թ. Թուրքական պառլամենտի հայ պատգամաւոր Գրիգոր Զոհրապի օսմաներէն ձեռագրերը:

Կարդալով այդ նիւթերը օր-օրի վրայ յուզւում էի էապէս, Գրիգոր Զոհրապի դառը ճակատագրի մանրամասնութիւնները խորապէս ազդում էին իմ վրայ: Ակամայ ապրում էի այդ տառապալի, ահաւոր իրավիճակը: Անկախ ինձանից այնպէս էի կլանուել եղեռնական այդ նիւթերով, որ կարծէք ես եմ գտնւում վագոնի մէջ եւ թուրք ժանդարմների հսկողութեամբ ինձ տանում են անյայտ ուղղութեամբ...

Իսկ թէ ինչ եղաւ աքսորավայրում Գրիգոր Զոհրապի հետ, թոյլ տուէք բերել մի հատուած երիտթուրքական գործիչ Ֆալիհ Ռիֆկը Աթայի «Զէյթինտաղը» գրքից: (Տես Ստամբուլ, 1957, էջ 78-80):

«... Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զոհրապն ու Վարդգէսը ճանապարհին սպանուել են Զէրֆէզ Ահմէդ եւ Նազըմ չեթեների կողմից: Զէմալ Փաշան հրամայեց, որ երկուսն էլ անմիջապէս ձերբակալուեն: Սակայն Զէրֆէզ Ահմէդը եւ Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստամբուլ, քանի որ Ստամբուլից հովանաւորում էին նրանց: (Ընդգծումը իմն է Ա.Փ.)

Այսպէս մի քանի օր եւ ի վերջոյ կատարեցի իմ պարտքի դգացումս մեծ գրողի անմահ յիշատակին եւ յանձնելով պատրաստի նիւթերը դուրս եկայ Թանգարանից: Մտամոլոր քայլերս ուղղեցի այսօրուայ «Հանրապետութեան» հրապարակը (նշեմ, որ Արուեստի եւ Գրականութեան Թանգարանը գտնւում է դէպի հրապարակ նայող պատմութեան Թանգարանի ետեւի մասում):

Անակնկալի գալով մի քանի րոպէ քարացած դիտում էի թէ ինչ է կատարւում հրապարակում: Ինքս ինձ հարց էի տալիս. «Ո՞ր էի 5 րոպէ առաջ, ինչպիսի եղեռնական մտքերով տարուած, եւ ո՞ւր եմ հիմա:

Ես այդքան հայ երեխաների բազմութիւն մի տեղ հաւաքուած չէի տեսել, երբեք: Հրապարակը լցուած էր խումբ-խումբ հայ մանուկներով եւ պատանիներով: Առնական հնչում էր շէփորների, թմբուկների, փողերի ձայներ եւ դրանց հետ մէկտեղ հայրենասիրական երգեր: Ինչ որ նախապատրաստւում էին տողանցքի, հրապարակային ելոյթի համար:

Ականջիս մինչեւ այսօր հնչում է այդ օրուայ ուրախ մթնոլորտի «աղմուկ աղաղակը» երեւանեան պայծառ արեւի ճառագայթների ներքոյ կեանքը եռում էր իր իսկական իմաստով: Շատրուանի կողքին, բարձր աստիճանների վրայ կանգնած բաւական ժամանակ դիտում էի այդ տեսարանը:

Մոռացել էի քիչ առաջուայ եղեռնային խոհերս: Պահը այնքան ազդեցիկ էր, որ ակամայ յուզւում էի, բայց դա ուրախութեան յուզմունք էր արդէն:

Որեմն մենք կանք գոյատեւում ենք: Այս երեխաները կերտելու են դժուարին բայց փայլուն մեր ապագան:

Ի վերջոյ դժուարութեամբ հեռանում եմ հրապարակից մտքիս մէջ անընդհատ կրկնելով. Ուրեմն կանք, ապրում ենք եւ գոյատեւում:

ՄԱՍԻՍ, ՄԱՐՏ 19, 1994

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Աւետիս Փափազեանը հայ-թրքական յարաբերութիւններու միջնադարու մասնագէտ է. գիտական աւարտաճառը պաշտպանած է 1967 թ. Յուլիսին Մոսկուայի մէջ: Միջազգային ճանաչման արժանացած՝ հանրայայտ թրքագէտ Աննա Տվերիտինովայի ղեկավարութեամբ եւ 32 տարի շարունակաբար աշխատած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի մէջ: Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի մէջ դասաւանդած է նաեւ Թուրքիոյ պատմութիւնն ու օսմաներէն լեզուն (արաբատառ հին թուրքերէն):

Իր հրատարակութիւններուն մեծ մասը նուիրուած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի մասին միջնադարու թուրք պատմագիրներու հաղորդած նիւթերու ուսումնասիրութեան:

Հանդիսանալով օսմաներէնի գիտակ եւ աղբիւրագէտ-պատմաբան, վերջին տարիներուն ան զբաղած է նաեւ հայերու ցեղասպանութեան հարցերով եւ 1988 թ. հրատարակած է «Հայերի Ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» գիրքը Երևանում, Հայաստանի գիտությունների Ակադեմիայի հրատարակչության կողմից, իսկ 1996թ. ,,Հայերի ցեղասպանությունը Օսմանեան կայսրությունում'' գիրքը Լոս Անջելեսում, Թէքէեան մշակութային միութեան նախաձեռնութեամբ:

Գիտական զեկուցումներով մասնակցած է միջազգային գիտաժողովներու: